Aṙjeṙn Banastełcutʻiwn / [Eduard Hiwrmiwzėan].

Contributors

Hiwrmiwzėan, Eduard, Vardapet.

Publication/Creation

Venice : San Lazzaro, 1839.

Persistent URL

https://wellcomecollection.org/works/nhxnecw4

License and attribution

This work has been identified as being free of known restrictions under copyright law, including all related and neighbouring rights and is being made available under the Creative Commons, Public Domain Mark.

You can copy, modify, distribute and perform the work, even for commercial purposes, without asking permission.

Wellcome Collection
183 Euston Road
London NW1 2BE UK
T +44 (0)20 7611 8722
E library@wellcomecollection.org
https://wellcomecollection.org

5^a cp
Supp 57,397/A

Suppl

HIWRMIWZĔAN, E.

[Handbook on poetry]

Venice. 1839

W. Marseille 7 apl '0

Ա 26. Ժ. 10971

ԱՌՁԵՌՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

ԱՌՁԵՌՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱՌՕՏԵԱԼ

Ի Հ. ԵԴՈՒԱՐԴԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԻ

ՀՈՒՐՄՈՒԶԵԱՆ ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐ

—

1839

10971

WELLCOME
LIBRARY
INSTITUTE

ԱՌՁԵՌՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

ԴԱՍ Ա

Ընդհանուր տեղեկութիւն զտաղաչափութենէ. — Կազմութիւն չափուց ոտից:

Հ. Զի՞նչ է տաղաչափութիւն.

Պ. Բան բաղկացեալ չափմամբ ոտից կամ վանկից:

Հ. Ո՞ր ինչ հնարեցաւ այս.

Պ. Յօժանդակութիւն խանդից քերթողին:

Հ. Արդեօք լեզուն քերթողական 'ի չափ ոտի՞ց եւեթ կատարի.

Պ. Ոչ. այլ այնչափ ա՛յլ եւս խորութիւնք են ընդ չափեալ և ընդ արձակ բան ըստ գլխաւոր հանգամանաց լեզուին, ըստ հոլովոյ, ըստ բայիցն խոնարհմանց, ըստ խընդրառութեանց, ըստ համաձայնութեան, և ըստ բառից ազատութեան, մինչև ըստ

նիւթականին և կազմութեան զանազանել ամենևին քերթողական լեզուի 'ի ճարտասանականէն ։ Զոր օրինակ գծիմելոյ զօրացն քրիստոնէից յարևելս մարթի ճարտասանին ասել. Գան սրտմտեալ բարկութեամբ հանդոյն կուտակելոց ալեաց ծովու, բազմութիւն յոյժ որպէս զաւազ առ ափն ծովու, և որպէս զաստեղս երկնից բազմութեամբ. և ծածկեն զերեսս երկրի որպէս զձիւն սպիտակ իբրև զասր ։ Բայց Շնորհալին զսոյն զայս բացատրէ այսպէս.

«Իբր ըզծովու ալեաց կուտակ
Բորբոքելով գան խիստ ու բարկ.
Ափն ծովու աւզի գունակ,
Կամ զերդ աստեղս երկնից 'ի կարգ.
Լընուն զամէն երկրի ատակ,
Որպէս ըզձիւն ասրաքատակ »։

Հ. Ո՞րպէս կազմի չափ ոտից կամ վանկից.

Գ. Անդամատութեամբ, այսինքն բաժանեալ թուով զանդամս, ուր շեշտքն անկանին ։ Նա քանզի առ մեզ սովորաբար 'ի վերջս բառից կայ շեշտն, անդ հատանի և անդամն, զի շեշտն ըստ կարգի պատահեսցէ. ուստի անդամքն վասն շեշտին են, և շեշտիւն բաժանին. զոր օրինակ

«Զի է պարծանք ըստոյգ, և թագ ար-
քունական,

Որպէս գրէ Պօղոս, անօթն այն ընտ-
րութեան.
Տիմոթէոս որդեակ, լիցիս 'ի խրա-
խութեան,
Ընամօթ քարոզ խաչին վըկայութեան»:

Յորս, որպէս տեսանի, շեշտն է որ յարմարէ զիմաստն և զչափս, կալով 'ի վերջ այնպիսի բառի՝ որ հարկաւ կապակցեալ է ընդ յաջորդին, և աքանչելի փոփոխութիւն ածէ 'ի տողն, քան զոր չիք ինչ կարեւոր առ 'ի զուարձացուցանել: Վասն որոյ որչափ ըստ բնական շեշտիցն հատուածեալ իցեն անդամքն, այնչափ քաղցր և բնական լինի կազմած տողին, և յայսմ է ճարտարութիւն տաղաչափին, և այսմ ուշ ունին քաջ քերթողք մեր հինք և արդիք. թէպէտ և մարթի լինել ուրեք ուրեք ազատութիւն ինչ կամ համարձակութիւն որպէս և յայլ լեզուս:

Սովին օրինակաւ պարզին և իմասսք բազումս տողից, զորս ըստ բառիցն շարակարգութեան մարթ էր յայլեայլ մասս առնուլ: Օրինակ իմն յընթեռնուլ ուրուք

«Այսօր անձառ լուսոյն ծագումն...
Գըլխոյն ընտրեալ հօտին փոքու»...

ոչ ինչ տարակուսեալ երկմտեսցի՝ զի անձառ ածական է լուսոյն, և ոչ ծագման. և ընտրեալ ածական է հօտին, և ոչ գլխոյն:

Հ. Ըստ ուրեմն բառք յարաշեշտք և նախայարաշեշտք, որոց շեշտք ոչ՚ի վերջ բառիցն անկանին, չմարթին կազմել անդամս.

Գ. Կազմեն խսկ, այլ զմասն մնացեալ գկնի շեշտին՝ տալով յաջորդ անդամոյն. զորօրինակ առնէ Շնորհալին

«Որպէս և յայնժամ ըզնոսին ։
Վարեն մինչ յայնկոյս անբընակ ։
Որպէս և անդանօր տեսեր » ։

Վերջինս այս, և հանգոյն սորին կատարեալ ածանցք, քանզի և՚ի վերջին վանկըն շեշտին հանգստեամբն, յաճախ ես անդ գործեն զանդամ ։ Բայց ընդ յարաշեշտ և ընդ նախայարաշեշտ բառս նկատելի են ամենայն սերտ կցորդութիւնք բառից ընդ միմեանս՝ որք շեշտիւ միշտ կցորդին. զոր օրինակ Հա՛յր մեր, [illegible] մեր. [illegible] գան, [illegible] գան, [illegible], [illegible], [illegible] փամ, յանձն առնել, ևն. վասն որոյ խորթ և անարուեստ կազմի տող՝ որոյ անդամք ՚ի վերջն անկանիցին փոխանակ ՚ի շեշտն անկանելոյ բառիցս յա՛յնժամ, յա՛յնկոյս, [illegible], [illegible], [illegible], [illegible], [illegible], [illegible] անգամ, ևն ։ Վասն որոյ ասելի է ըստ Շնորհալւոյն.

«Տարրըն տեղի տայր և լոռէր ։
Թէ և բազում անգամ ջանայ ։

Զի յորժամ ո՛չ գիտես, կոչիս :
Չարեացըն մի՛ լինիր նըման :
Իւրաքանչիւր ոք ըստ կարգին :
Եւ ըզմեզ ո՛չ թողուլ հայցէր » :

Իսկ 'ի վերջ վանկից՝ որ է ձայնաւորաւ բաղկանան՝ բաժանել անգամ, ոչ միայն խորթ է և անարուեստ՝ այլ և վրիպակ մեծ և ոչ ուրեք երբէք գտանի առ նախնիս : Եւ պատճառն յայտնի իսկ է . զի ոչ երբէք վանկն այն ընդունակ է շեշտի . վասն որոյ բաժանելի է ըստ Շնորհալւոյն

«Բամեալ 'ի քե՛րըս տարրապէս :
Որպէս ըզտիպսըն բիբ ակին :
Երրորդութեանըն միաբուն .
Յորժամ մարմնովըն մերունակ :
Արեամբ և ջրովըն զիս լուա» :

ԴԱՍ Բ

Չափ անգամոց և տողից :

Հ. Իցեն ինչ սահմանեալ թիւք վանկից անգամոցն և տողից.

Պ. Թիւք վանկից միոյ միոյ 'ի տողից գտանին առ նախնիս մեր 'ի հնգէ մինչև ցվեշտասան 'ի կիր արկեալ : Հինգվանկեանն չբաժանի սովորաբար յանգամս . զոր օրինակ

«Ի քէն տէր հայցեմ
Ի մարդասիրէդ
Ինձ բըժըշկութիւն.
Լեր կեանք մեռելոյս,
Լոյս խաւարելոյս
Լուծանող ցաւոյս»:

Իսկ զայլոցն անդամս ազատ է քերթողն հատանել ըստ կամի եւ ըստ ճարտարութեան իւրում յազգս ազգս գեղայարմար ներդաշնակութեանց: Սովորաբար ՚ի հաւասար անդամս բաժանին որք մարթինն. զոր օրինակ

«Ոչ կարօտի | աշխարհ առ տիւ | արեգական,
Ու կամ լուսին | ուաստեղք ՚ի լոյս | գիշերական,
Յորժամ ծագէ | լոյսն անմատոյց | աստուածութեան»:

Բայց եւ անհաւասար անդամոց բազում են օրինակք ՚ի նախնեաց. զոր օրինակ նոյն ինքն Շնորհալի զնոյնաչափ տողս բաժանէ այսպէս.

«Ի զաւազանէն | Յեսեայ | ստեղնեալ Ստեփանոս,
Առաջին պըտուղ | ծառոյն | որ ՚ի Գողգոթա.
Նրփնազարդ պըճնեալ | կեղով | նըման հրեշտակի,

Բուրուառ ոսկեղէն | խընկոց | զհոտ
անոյշ բուրեալ․
Նշլից ատախձան | գործեալ | զհար-
կանող քարինս,
Ընդ ինքեան հանեալ | զղաղումն |
յերկնային խորանս »։

Հ․ Ի թիւս վանկից անդամոցն իցէ ինչ ազատութիւն քերթողին․

Պ․ Այո, քերթողք մեր երբեմն տաղից ոմանց զառաջին անդամս միով կամ երկուք և աւելի ևս վանկիւ պակաս տանեն, և ընուն զթերի չափոյն կամ զամանակին՝ երկարելով զձայնաւորն, մանաւանդ ՚ի հրամայական բայս, ՚ի կոչական անուանս, ՚ի միջարկութիւնս, կամ ուր ուրեք զօրաւորագոյն անկանի շեշտ․ զոր օրինակ

«Ողբացէ՛ք եկեղեցիք,
Հարսունք վերին առագաստի ։ —
Ըէն տառ չէ՛ բանի սկըսուած,
Այլ ակամայ բըռնազբօսած ։ —
Բարձրացուցէք ըզտէր Աստուած մեր
միաբան,
Մարգարէն յառաջ ձայնեալ տայ ձեզ
հրաման ։ —
Դուք որդի՛ք նոր Սիօնի նորոյ ծնըն-
դեան,
Օրհներգութեամբ պատուել ըզսա էր
պարտական ։ —

Քանզի ոչ նայիմք ՚ի սոսկ փայտ եղական,

Այլ որ ՚ի սա է Բանն անեղ մեզ յանգիման։ —

Տիմոթէոս որդեակ լիցիս ՚ի խրախութեան,

Անամօ́թքարոզ խաչին վըկայութեան։—

Բարձրագո՛չ ձայնիւ գոչէր տէրն ՚ի խաչին »։

Հ. Հա՞րկ իցէ անդամոց ամենայն տողից գոլ հաւասարաթիւ․

Պ. Ոչ․ այլ վայելուչ եւ կարեւոր ազատութիւն է քերթողին շարախառնել տողս այլաչափս ՚ի քնարական քերթութիւնս, որպէս եւ առ ՚ի նախնեաց մերոց բազումք են մեզ օրինակք․

Եօթնոտնեան եւ տասնոտնեան խառն ։

7 . « Համբառնալով զաչըս մեր,
7 . Կարդամք առ քեզ մարդասէր,
10. Որ յահեղակերպ աթոռըդ նըստիս։
7 . « Ընդ հովանեաւ աջոյ քո
7 . Պահե՛ա ըզմեզ բազմագութ,
10. Որ յանմարմնական զօրացըդ գովիս »։

Եօթնոտնեան, ութոտնեան և վեցոտնեան խառն ։

7. « Ահաւոր ես Թագաւոր,
8. Քրովբէական ձայնիւ օրհնեալ,
6. Ի յերկինս 'ի յերկրի
8. Եւ յամենայն ժամանակի։
7. «Ահաւոր ես Թագաւոր,
8. Որ նորոգես զքո զարարածս.
6. Հաստատես 'ի հաւատս,
8. Ի գիտութիւն Ճշմարտութեան »։

Եօթնոտնեան և վեցոտնեան խառն։

7. « Առաւօտեան սուրբ կանայքն
7. Հանդերձ իւղովք և խնկովք
7. Եկին 'ի սուրբ գերեզմանն,
7. Եւ ողբալով խնդրէին
6. Զանմահ փառաց Թագաւորն ։
7. «Աստուածասէր սուրբ կանայք,
7. Փութացարուք հետևեալ,
7. Պատմող լինել Պետրոսի
7. Եւ Յովհաննու սիրելւոյ,
6. Յարեաւ փառաց Թագաւորն »։

Ըստ այսմ օրինակի մարթ է քերթողին զամենայն խառնս ներդաշնակաւորս յօրինել յազգի ազգի այլաչափ տողից։

ԴԱՍ Գ

Յանգ տողից ։

Հ. Օրէ՞ն իցէ առանց հանգստի իմաստից աւարտել զտողս ․

Պ. Սովորաբար ոչ է օրէն սկսանել իմաստ ինչ 'ի միում՝ տողի, և աւարտել զայն 'ի միւսումն, և մանաւանդ 'ի մասին ինչ միւսոյն, այլ 'ի յանգս տողից զհանգիստ իմաստից պատկանել․ զոր օրինակ

« Սահեալ սըրբոցըն լուսափառ,
Գնացեն յերկինս 'ի տունն անձառ․
Սա միջակին է խրատ մարդոյս,
Յորժամ շարժի ախտիցըն բոյս »․ Շնորհ։

Բայց մարթ է հանճարով և ճարտարութեամբ զհակառակն ես վայելչապէս 'ի կիր արկանել, շարայարելով առանց հանգստեան զտողս ընդ իրեարս, որպէս ուրեք ուրեք առնէ Շնորհալի․

« Եւ ոչ յերկրորդ կամ յերրորդին
Պահու, սպասեմ զալոյ քոյին։ —
Երկըրպագեալ յանմարմնական
Զօրացն, ընդ Հօր և սուրբ Հոգին ։ —
Ըստ լի ամաց քոց երեմնից
Գրեցան և տունքըս գովեստից
Ի հիւանդոտ և ցաւալից

Ընծնէ, յաւուրըս քառասնից: —
Երուսաղէմ քաղաք մեծի
Թագաւորին երկնաւորի: —
Ի յԱբգարէ Թագաւորէ
Նոցունց՝ շինեալ ես լինէի: —
Թէ չէք հընար 'ի փորձանաց՝ որ մար-
դոյ գան՝
Փըրկիլ ումեք, քան աղօթիւքըն մաք-
րական: —
Բարձրագոչ ձայնիւ գոչէր տէրն 'ի խա-
չին
Զէլիէլին, և աւանդէր առ Հայր զհո-
գին: —
Այլ և ըզծանր և ըզնըսեմ կիրս մար-
մնական
Եղեալ 'ի բաց, Թուիցուք այսօր յերկ-
նից կայան: —
Տէր իմ, ընդէր վէրք 'ի քո ձեռս ան-
պարտական ...
Պատասխանէ. Յիմ սիրելեացն 'ի
Հրէաստան
Ես ընկալայ, և զայս պահեմ 'ի յա-
պագայն»:

Հ. Զինչ է յանգն.

Պ. Նմանավերջութիւն երկուց կամ բազում տողից ոտանաւորաց:

Հ. Օրէ՞ն իցէ անյանգ յօրինել տաղս.

Պ. Եւ կարի իսկ քաջ, մանաւանդ առ

մեզ, զի ոտանաւոր մեր և առանց յանգիցն իսկ նմանութեան զանազանի բաւականապէս 'ի հեռեակ բանէ։ Եւ այս և 'ի շարականս մեր և այլուր բազումք են օրինակք. զոր օրինակ

«Նորահրաշ պըսակաւոր
Ձու զօրագլուխ առաքինեաց,
Վարեցար զինու Հոգւոյն
Երիաբար ընդդէմ մահու.
Վարդան քաջ նահատակ,
Որ վանեցեր ըզթըշնամին,
Վարդագոյն արեամբըդ քով
Պըսակեցեր զեկեղեցի»։

Ուր, որպէս քաջ տեսանի, ներդաշնակութիւն մեծ առանց յանգից նմանութեան յօրինէ քերթողն որպէս և յամենայն տաղին։ Բայց գեղեցկութիւն մեծ և առաւելագոյն յայժ ներդաշնակութիւն յօրինեն յանգք, մանաւանդ ճարտարութեամբ և ըստ կանոնաց 'ի կիր առեալ։

Հ. Ո՞ր իցեն կանոնք յանգից նմանութեան.

Պ. Եթէ 'ի պարզ ձայնաւոր յանգիցի տողն, այն ևեթ ձայն բաւական է. զոր օրինակ

«Ո՞ւր են գահոյք թագաւորի
Վաղարշապատ քո քաղաքի.
Կամ նախարարքն ո՞ւր արքայի,

Այրարատեանըդ գաւառի ·
Ո՞ւր զօրականքն յասպարիզի
Կամ լեգէոնքն 'ի ճակատի ·
Ո՞ւր մեծամեծքն 'ի բազմոցի,
Կամ ո՞ւր սեղանն ամենալի » · Շնորհ ։

Բայց լաւ ես յօրինի յանգն և ճոխ, եթէ զէթ և նախադաս բաղաձայնն՝ որ զվեր-ջին վանկն գործէ՝ նոյն իցէ կամ լծորդ · զոր օրինակ

« Որ քեզ հասին յայնըմ վայրի
Բոլոր ամէն մասունք չարի ։ —
Վասն իմ 'ի լա՛ց նիստ ու 'ի սըգի,
Շարժեա 'ի յողբ զամէն հոգի ։ —
Ան էապէս մեզ քարոզէ
Զօրէնն ուսեալ 'ի Մովսիսէ » ։

Իսկ եթէ 'ի բաղաձայն յանգիցի տողն, հարկ է զի նախադաս ձայնաւորի նոյն իցէ ամենեւին, և բաղաձայնն՝ որ զկնի՝ կամ նոյն և կամ զէթ լծորդ · ապա թէ ոչ, չէ բաւական ։ Լաւ ես և ճոխագոյն՝ գործի յանգն, եթէ բաղաձայնն ես՝ որ յառաջէ քան զձայնաւորն զայն՝ իցէ նոյն կամ լծորդ, այսինքն եթէ վերջին վանկն ողջոյն նոյն իցէ · զոր օրինակ

« Շրջին կոծով գնացօղքըն զարշ ,
Կապար մեղացն անկցին 'ի քարշ ։ —
Հանգչել ասէ 'ի չար ախտէն,
Ծանիր թէ մերձ է որ դատէն ։ —

Նորոգ , ասէ , երիտասարդ
Զիմաստութիւն զգեցիր քեզ զարդ։ —
Մատուցանէ քեզ օրինակ
Զորս 'ի մանկանց բարեաց ունակ ,
Ըզ Դանիէլ մանուկ յըստակ ,
Որ և ցանկայր նըմա հրեշտակ »։

Համառօտ ասել, որչափ առատագոյնք իցեն նոյնատառք յանգից, այնչափ ևս առաւել գեղեցիկ է յանգն. որպէս զի եթէ կրկին վանկք 'ի յանգս դիպեսցին նմանք, ախորժելի յոյժ գործի ներդաշնակութիւն. զոր օրինակ

« Լիւն լո՛ւր , ասէ , հօր քո խրատու ,
Յորմէ շահիս բան լուսատու։ —
Եւ թէ մըտօք ես բութ և գուլ,
Ջանիւ զիմաստըս կեր և կուլ։ —
Լուր և անսա իմում բանիս,
Երանելի և մեծ լինիս
Եթէ զերկիւղ տեառն ուսանիս։ —
Նըմանաբար խորհուրդ խորին
Յայտնէ և միւս անուն նորին ։ —
Մերժէ 'ի բաց զախտըս տարտամ,
Գործով բարեաց առնէ փարթամ »։

ԴԱՍ Դ

Հ. Խիստ թուի այդքան երկիւղածու_
թիւն 'ի յանգս, ուր Շնորհալին մեր քաջ տաղաչափ 'ի գեղեցկագոյն տաղս իւր 'ի յանգ ածէ զբառս ուրբ ընդ զօրաւոր, տաղա– ընդ գերակայ, անբեր ընդ անպարաբեր, այլով_
քըն հանգերձ. զոր օրինակ

« Որպէս զայգի մեծ տաշտաւոր. .
Կամ բարունակ ողկուզաւոր,
Իբր 'ի յանկեան տունկ սորեկ որթ
Տեղւոյ պարարտ և զօրաւոր :—
Թէ և մեռայ այժմ 'ի մարմնի,
Կեանք առ Քրիստոս ծածեալ ունիք:—
Նա այս 'ի յամս էր ոչ սակաւ
Այլ քառասուն կամ գերակայ: —
Այս զաւանսըն պարագայ,
Որ շուրջ զինև կային 'ի ճահ,
Աւերեցին և քանդեցին,
Հողաբլուր թողին զնոսա: —
Այլ անվախճան է և անբեր
Նա յաւիտեան անպարաբեր : —
Անպաղթելի սուրբ զօրութիւնք
Ի յարարչին փառաւորութիւն » :

Պ. Վեր 'ի վերոյ հայեցեալ 'ի տողսդ, թուի ապատութեամբ վարեալ քերթողին. այլ յընթեռնուլն զնոսա ուշիւ, կատա_

րեալ նոյնայանգութիւն ազգի լսելեաց ։ Քանզի յառաջնումն թ ուր բառին խառնեալ ընդ յաջորդ տուննն՝ միայն ուր ․ յերկրորդումն 'ի նուրծն զկնի ունելով զ է բառին էնան․ գործէ ընդ նմա զյանգս էէ նոյն ընդ էն ․ իսկ յերրորդումն , 'ի չորրորդումն և 'ի հինգերորդումն տառքս ա , հ , բ , ե , կցին ընդ ձայնաւորս յաջորդ տաղիցն , և միան յանգքն նմանաձայն ։

Ոպաքէն երեւի ուրեք ուրեք և առ նախնիքերթողս մեր կարի իմն ազատութեամբ զանբաղադրայս 'ի յանգից 'ի մի ըծորդել ․ որպէս ալ ընդ ար , էլ ընդ էր , արդ ընդ ափ , աս ընդ այս , ալը ընդ արը , անը , ոս ընդ որ , որ ընդ ուր ․ և այլ այսպիսիք ․ բայց այսոքիկ չեն հետևելի , այլ մանաւանդ զգուշալի են , բաց 'ի ըծորդ տառից՝ որ փայելչապէս կազմեն զնմանաձայնութիւն յանգից ․ զոր օրինակ

« Լայեաց և տես , աւէ , զՅովսէփ
Ազհրեշտակաց նրմանն 'ի դէպ ։
Ում թէ սրբոյ լինիս 'ի յոյզ
Իջ տաս անձել իբրև բզբոյս ,
Զհոգին մաքուր պահէ և լոյս ։ —
Զի մի կրեսցես զոր առաց տէր ,
Զտանջեն 'ի հուրըն մահարեր ։ —
Ձէն ձառագայթ առ 'ի սրբաէգ .
Ասէ , ծագեա լուսոյ հանդէտ ։ —

Յեկեղեցիսըն խաւարած
Յայնժամ վառի լոյս կանթեղաց ։ --
Մէր աշխարհիս այս ախտաշարժ
Ըռել խրատէ ղաղտեղի գարշ » ։

Ըյսպիսի յանգք կազմեալք 'ի լծորդաց գեղեցիկք են, որպէս ազգուամն իսկ լսելեաց վկայէ ։

Հ. Իցէ՞ ինչ այլ նկատելի 'ի յանգս բայց 'ի նմանաձայնութենէ ։

Պ. Ըյո ամենեւին. զի թէպէտ և ամենեւին նմանաձայնք իցեն, այլ ոչ այնպէս զուարճացուցանեն զմիտս՝ եթէ իցեն նոյն մասունք բանի նոյնահոլովք, կամ յար և նման միմեանց ածանցեալք. զի ոչ է ճարտարութիւն քերթողի յօրինել տողս համգոյն այսոցիկ.

« Զբանս բարիս հեղ 'ի լեզուէդ,
Զողորմութիւն 'ի ձեռանէդ ։ —
Մինչդեռ յիշեմ զօրն ահագին,
Եւ զատաւօրն մրթագին ։ —
Որպէս այգի մեծ տաշտաւոր
Կամ բարունակ ողկուզաւոր ։ —
Զայնս ահագինըս հընչէին,
Մինչ զի զերկիր դըղըրդէին
Մի՛ տըրտմիցիք այլազգաբար,
Զերդ հեթանոս կամ հրէաբար »։

Զի թէպէտ և գեղեցիկք են տողքս, այլ ոչ որպէս այլուր նոյն քերթող յայլ և

այլ մասանց բանի և յայլ և այլ հոլովոց յօ-
րինէ յանգս. զոր օրինակ

« Բայց և ծնողաց մեր հանդերձ քերբ
Լիցի յիշումն յաւուրն աներբ : —
Առ միջակին է խրատ մարդոյս,
Յորժամ շարժի ախտիցըն բոյս : —
Բարունական սիրոյն տիպար
Կացուցանէ անմիջաբար : —
Մեծին ծագմամբ չփայլեն այլում,
Մինչ փայլակէ լոյսն անպատում: —
Լայն ճանապարհըն հեռևել
Տանի 'ի գուբ խորին ւ անել : —
Նըմանաբար խորհուրդ խորին
Յայտնէ և միւս անուն նորին : —
Սիրոյ 'ի բաց լեր աշխարհիս ,
Եւ յԱստուծոյ սէրըն վառիս :
Ի ցասմանէ դու 'ի բաց լեր,
Եւ մի ըղըանըս թունաբեր
Որ 'ի սըրտէդ յառաջ բերեր : —
Պըրտուեայ տապանն , ասէ , զՄովսէս
Ըստ Յակովբայ զարմին հանդէս » :

Յայսմ ամենայնէ 'ի միտ առնուլ է, զի տաղըն այնորիկ միաձայնք յանգեալք ծայր 'ի ծայր 'ի սեռական անուանս Խորանին, Հիմին, Սիոնին, Նոյին, Քաւարանին, են, կամ 'ի բայս անկատարս փայլակէին, գնային, գո-չէին, որոտային, հնչէին, դղրդէին, խռշախէին են, ձանձրալի են, թէպէտև 'ի քերթողաց

առաջնոց 'ի կէր առեալ . զի նոքին իսկ իւր առաւելագոյն ուշիւ և արուեստաբար տաղաչափել կամին, փոխեն զյանգս, և գեղեցկայօրէն կազմեն տաղս նախանձելիս քերթողաց ։

Իսկ զնոյն բառս, կամ զբարդեալս 'ի նոյին բառից, կամ զբարդս ընդ արմատս իւրեանց յանգել, բնաւ և հակառակ է արուեստի. վասն որոյ ոչ են ըստ օրինի տաղքս .

« Նովուն հրաման Մովսէս քև տայ .
Բայց տէրըն քև խրախոյս մեզ տայ ։ —
փոխի 'ի ցօղ զըւարթարար ,
Որ անյուսիցն է տըրտմարար ։ —
Զիմաստութիւն զգեցիր քեզ զարդ ,
Մի զպատմուճանըս բազմազարդ ։ —
Որպէս այգի ողկուզալի ,
Կամ ձիթենի պըտղով 'ի լի » ։

Բայց նոյն բառ ըստ ամենևին այլ և այլ նշանակութեան, կամ որոյ բարդու-թեամբ փոխեալ իցէ նշանակութիւն , և կամ բայ ընդ անուան՝ յորմէ ածանցեալն իցէ՝ կազմեսցէ զյանգ , ըստ արուեստի է . զոր օրինակ

« Թագաւորըն կամարար ,
Որ զՄարեմանեան ուրախ արար ։ —
Զի մերկ յայտնեաց զայն միածին Որ
դին և բան ,

Արդ ժողովուրդ սարսափեցին՝ լը-
ւեալ զայս բան : —
Բամեալ 'ի քերթս տարրապէս
Սուրբ հոգևոր բանըս պէսպէս » :

ԴԱՍ Ե

Քանակ բառից :

Հ. Զի՞նչ է, և որպէս չափք քանակի բառից .

Պ. Քանակ բառից է երկարութիւն և սղութիւն ը ձայնաւորի, յորմէ չափք թիւ վանկից : Զի ուր երկարի սա 'ի մէջ բաղաձայնից, վանկ գործէ . իսկ ուր սղի, չհամարի 'ի վանկ . վասն որոյ մի 'ի կարևորագոյն հմտութեանց տաղաչափին է գիտել՝ ուր ձայնաւորս այս սղի կամ երկարի, և ուր ազատ է առ երկաքանչիւրսն :

Արդ ըստ գեղեցիկ կշռութեան չափուց Շնորհալւոյն, ուր 'ի վերջս բառից զկնի բաղաձայնի յաջորդէ ․ դիմորոշ կամ յոքնակի, չսղի՝ եթէ ոչ զհետ գայցէ ձայնաւոր՝ կամ տառքս ; , ; : Այլ եթէ բաղաձայնն նախադաս ․ տառին՝ իցէ մի 'ի նոյից ՝, ը, —, ը, ւ, ՞ , մարթի սղիլ և առաջի բաղաձայնի, մանաւանդ եթէ նոյ իցէ և

բաղաձայնն այն յաջորդ։ Այս ամենայն երեւի յօրինակսդ.

« Ընդ սանդղաձեւ բանըս քոյին։
Զանկեալս 'ի մեղս անդընդային։
Նըրանեցեր զօրս 'ի բարըն։
Առ դրունս լուսոյ առաւօտից։
Մինչ 'ի յականջս հընչեալ ուժգին »։

Զայն է իմանալ եւ վասն գիմորոշին դ, որ չսղի՝ թէ չյաջորդէ ձայնաւոր. իսկ զկնի միոյ նոյ տառի մարթի սղել զոր օրինակ.

« Զներող բնութիւնըդ շարժեցին։
Յորդեգրութիւն Հօրըդ վերին։
Անապական ազգ երկնային։
Քանզի ըղձէրդ իւրեանց տեսլին։
Ըզքեզ որ զանձդ ես երկնային։
Զնորս ուսուցեր բանդ 'ի մարմին։
Բացեր զըներանդ աստուածային։
Այլ որ նըստիսդ յերկնից երկին »։

Իսկ եթէ սղելովն գուցէ վտանգ շփոթելոյ ընդ այլ բառս՝ չսղի. որպէս մարթին շփոթիլ բանըդ, ջանըդ, տարըդ, ընդ բանդ, ջանդ, տարդ։ Զայս շփոթումն բառից ըստ տեղւոյն դիտելի է եւ 'ի ս եւ ն որպէս մարթին շփոթիլ հարըսս, պարըսս, վարըսս, բառարըն, առ-ըըն ընդ հարս, պարս, վարս, բառան, առըն։

Հ. Զիա՞րդ փոփոխէ զքանակ բառից տառս կամ նախդիրս ը.

Գ. Ընդ բաղաձայնս, մանաւանդ բազմավանկ բառից, սղի սովորաբար՝ եթէ նախադաս բառն յանգի 'ի ձայնաւոր . զոր օրինակ

« Լուսաւորեա զխաւարս անձին ։
Զի զթագաւորդ ընդունիցին ։
Զի զգուշացայց ուագակին ։
Ինձ պարգևեա զքեզ ձիր շնորհի » ։

Իսկ եթէ նախադաս բառն յանգի 'ի բաղաձայն, ազատ է 'ի սղել կամ 'ի վանկ կազմել ։ Զնոյն է ասել և ես, եթէ ը բնական իցէ . զոր օրինակ

« Կոչել զդրացիս զերաշխարհին ։
Զի կատարեալ էառ զընութիւն ։
Նարդոսաքըրքըմ զմուռ ընդ հալուին ։—
Զգեստ արկանէ տղայոց բեհեզ,
Զհնազանդ լինելըն հօր և հեզ » ։

Բայց ընդ միավանկ բառս, և յորժամ զկնի ունիցի կրկին բաղաձայն սղելի, սովորաբար չսղի, եթէ ոչ միավանկիցն սկզբնատառք իցեն յ, կամ հ . զոր օրինակ

« Ծածկեալ ըզգլուխըդ կըռափէին ։
Գեր 'ի վերոյ քան ըզընութիւնս ։
Նա ասս անձել իբրև ըզբոյս ։
Մերժել ըզչարն ատելութեամբ,
Գործել զբարին սիրելութեամբ ։ —
Նա ըզմնապարծ բան յիմարին » ։

Որեք ուրեք չսղի և ընդ ձայնաւորի . զո

« Ըռնու ըզթագն և զգաւազան :
Հիւսէ ըզմեզ ընդ նոյն սիրով:
Խրատէ ըզքեզ մի՛ յաչաղել:
Կամ պետութիւն իշխանական
Թէ ընկալցիս դու ըզմարդկան » :

Բայց հասարակաբար գիտելի է, զի ուր ուրեք ազատ իցէ ամենևին սղելն կամ երկարել, լաւ է երկարելն քան զսղել. զի որովհետև բաղաձայնք լեզուիս յոլովք են, պարտ է քերթողին զգուշանալ 'ի յաճախելոյ և ևս զնոսին, զի մի՛ դժուարալուր լիցին տաղ.քն լսելեաց :

ԴԱՍ Զ

Նայ տառք. — Զուգադրութիւնք բաղաձայնից :

Հ. Զի՞նչ կանոնք իցեն երկարելոյ և սղելոյ ը ձայնաւորի առաջի նայ բաղաձայնից.

Պ. Յորժամ նայ բաղաձայնքս ն, ր, ռ, ւ, ղ, մ, հանդիպին 'ի սկիզբն բառից զկնի այլոց նայ կամ թաւ բաղաձայնից, որպէս բն, բր, գն, գր, գւ, տր, թռ, խր, կր, կն, ճր, ձն, ծն, պր, փն, փղ, պղ, չր, ճն, մր, նր, սր, սովորաբար սղին. զոր օրինակ

« Մրրկեաց սնապարծ իւրով բանիւ :

Զի՞նչ յանրնականն որ ախտացին ։
Զեղէ՜ նմանող քում ծառային »։

Բայց եթէ յաջորդ ձայնաւորն իցէ երկ-բարբառս ուա , ուէ , ուի , ոչ ևս սղի․ զոր օրինակ

« Եւ իբրր ճրագ ընդ գըրուանին ։
Ազգըրգութիւն կրուասիրին »։

Իսկ ’ի միավանկ բառս եթէ ունիցին ւ կամ ’ի նախդիր յայնժամ սղին սովորաբար․ ապա թէ ոչ, կարեն լինել երկար կամ սուղ ըստ փափկութեան կամ թանձրութեան նախադաս վանկին։ Զի եթէ նախադաս վանկն իցէ թաւ ինչ կամ խիստ, չսղին․ իսկ եթէ պարզ իցէ ձայնաւոր կամ յանգեալ’ի բաղաձայնքս ն, ր, լ, ղ, յ, ւ, մարթին սղիլ։ Նոյնպէս եթէ նախադաս բաղաձայնն իցէ նոյն ընդ սկզբնատառ սղելի բառին ․ զոր օրինակ

« Եւ ոչ տըհաս տըղայն ’ի նմին ։
Որք անազան գընել գնացին ։
Պաշանջեցեր զկնի նորին ։
Ծածկեալ ըզգըլուխըդ կըափէին ։
Զի հնար լիցի ոգւոյս սորին ։
Մ՛ի արտաքոյ մնար հեղգութեամբ ։
Խորասուզեալ մանկանցն ’ի յուխ
Խրատ ընծայէ սա հոգեբուխ »։

Հ․ Զի՞նչ ապա եթէ ’ի վերջին վանկ բառից դիպիցին նայ տառքդ ․

Պ․ Ի յառաջել նայիցն՝ զկնի ունելով

զայլ բաղաձայնս, սղին. որպէս բանկ,
գանգ, ղարդ, արբ, ձեղձ, ամբ, թանգ, էշ, ևն։
Իսկ ՚ի հետևել նայիցն՝ յառաջոյ ունե-
լով զայլ բաղաձայնս, ոչ սղին՝ եթէ չյաջոր-
դեսցէ անմիջաբար ձայնաւոր, կամ տառքս
յ, ն. զոր օրինակ.

« Ցօղէր արտօսըր ցաւագին
Մայր տեառն՝ որ կայր մերձ առ խաչին։—
Բայց ինքն ինքեան անտեսանայ.
Նա ինքըն զուլ և ոչ սրանայ. —
Գուրըն բանայ քեզ զիտութեան.
Նա հրէական ազգըն կոծին.
Ըզչափ մեղացն որով ստեցին. —
Նրբեմն էաք մեք ըղձալի,
Բայց այժմ եղաք յոյժ եղկելի. —
Նյլ մասն եղէ անձամբ անձին.
Որք զեզն յառաջ պատրաստեցին »։
Եթէ զկնի վերջին նայիցն կայցէ զիմո-
րոշ ինչ ա, դ, ն, նայքն սղին, և զիմորոշքն
ոչ. որպէս այծմնա, համբերդ, ձեռանըն, ատամղըն.
զոր օրինակ.

« Բախեմ ըզդուռնըդ երկնային.
Բուրըն հարից տեառնըդ ոսկին »։

Հ. Իցեն և այլ զուգադրութիւնք բա-
ղաձայնից սղելիք.

Պ. Սղին սովորաբար և բառք, որոց
սկզբնատառք իցեն սփ, ստ, սկ, սպ, սթ, սք,
սխ, շփ, պս, քս. զոր օրինակ.

« Լուսոյ սկըսաւ աւէ առեղծուած ։ —
Մի՛ գառնեցայց ընդ սպանողին ,
Ընդ փայլականըն առորանկին ։ —
Կտաւոց մաշուն մարմնապատար ։
Օքան հին և նոր կտակարանին ։
Մխալեաց կամաւ 'ի յերկրորդին » ։

Բայց այսոքիկ 'ի միավանկս ոչ սղին , եթէ անմիջապէս չիցէ նախադաս ձայնաւոր ինչ կամ նայ և կամ բաղաձայն ինչ նոյն ընդ սկզբնատառ սղելի բառին . զոր օրինակ .

« Քանզի է սկիզըն իմաստութեան ։
Նու քանկըն հին փոփոխեցին » ։

Այսպէս և բառքս կըպան, դըրան, ըսփիւռ, եւն, սղին, 'ի կպան, 'ի դրան, 'ի սփիւռ, 'ի սղան, և այլն ։

Ի զուգադրութեանց աստի այնոքիկ՝ որ 'ի սկիզըն իւրեանց ընդունին զձայնաւորն ը, եթէ զկնի երկուց բաղաձայնիցն յաւելցի միւս ևս նայ՝ տակաւին սղին . զոր օրինակ , 'ի սպանանել, 'ի սպրդել, եւն ։ Իսկ եթէ զձայնաւորն ը ոչ 'ի սկիզըն՝ այլ 'ի մէջ երկուց բաղաձայնիցն ընդունին , ոչ սղին . զոր օրինակ կըպըրտել, սըխըրալ, և այլն ։

Այսպէս և այլ ամենայն զուգադրութիւնք երից բաղաձայնից ոչ սղին , և պահանջեն զձայնաւորն ը ։

Իսկ զուգադրութիւն կրկին թաւ բա‐

ղաձայնից 'ի սկիզբն բառի ոչ սղի , բայց եթէ նախադաս տառն իցէ ձայնաւոր կամ նայ՝ ընդ որ հեշտեաւ կցեսցի մին 'ի բաղաձայնից անտի . որպէս 'ի զգայութեան , 'ի սփանէլ, 'ի ըմբահէլ ըմբռնոց, 'ի դժոխոց, 'ի գբի, ըշտանալի ճրագից . զոր օրինակ

« Ըղձ զգայութեան պտուղս առաջին :
Մինչև քակել շտեմարանին :
Ի մարտ մրտեղն ընդդէմ տկարին :
Շինեալ 'ի գիրկս իմ ջրեղաւոր :
Եւ վասըն թքոյն 'ի յիս գըթա » :

Այլ յայժ զգուշութեամբ , և զուն ուրեք առ հարկինեթ վարելի է ազատութեամբքս, զի դժուարին իսկ է անսայթաք հնչել զայնս:

ԴԱՍ Է

Սղութիւն նախադրութեանցս Ընդ, Ըստ: — Սղութիւն ձայնաւոր տառից:

Հ . Ո՞ր օրէն իցէ սղել զնախադրութիւնքս Ընդ և Ըստ .

Պ. Ընդ միայն , ուր առաջի կամ զկնի ունիցին ձայնաւոր . զոր օրինակ

« Զի ը՛նդ փեսայիդ 'ի յառագաստ:
Ը՛նդ առաջ նորա թըռչիս ամպով:
Դարձեալ ասեմք ը՛ստ. անառակին :
Ը՛ստ արարչութեան երէց որդին » :

Կայ սղեալ և առ հ և մ տառիւք, զոր օրինակ
«Ը̊ստ հոգւոյնշնորհացըն եօթնարփին։
Առեր մարմին ը̊ստ մերոյ բնութեան։
Սիւն՝ յոր ը̊նդ հանուրըս հաստատեալ»։
Զորս առ հասարակ գրելի է ըստ նախ-
նեաց այսպէս.
«Զի ՚նդ փեսայիդ ՚ի յառագաստ։
՚Դ առաջ նորա թըռչիս ամպով։
Դարձեալ ասեմք ՚ստ անառակին։
՚Ստ արարչութեան երէց որդին։
՚Ստ հոգւոյն շնորհացըն եօթնարփին։
Առեր մարմին ՚ստ մերոյ բնութեան։
Սիւն՝ յոր ՚դ հանուրըս հաստատեալ»։
Հ. Բաց ՚ի ձայնաւորէս ը, մարթի̊ սղել
երբեք զայլ ձայնաւորս.
Գ. Մագիստրոս և Շնորհալին երկա-
վանկ առնեն զՍամուէլ. երևի և այլ ուրեք
ուրեքազատութեամբս այսուիկ վարեցեալ
նախնեաց, զԿեսարիա եռավանկ առնելով,
և զԹադէոս երկավանկ, և այլն։ Բայց ըստ
օրինի երկբարբառքս ուա, ուէ, ուի, ՚ի բազ-
մավանկ բառս սղին. զոր օրինակ լու̊անալ,
զու̊արթուն, նու̊ագել, զու̊արճանալ։ Իսկ յորս
չիք այլ վանկ բայց ՚ի գոյանէ, և ոչ նախ-
դիր, երկավանկ վարին սովորաբար՝ փո-
խելով զու ՚ի ը. զոր օրինակ լըւա, նըւագ,
զըւարթ, զըւարճ, և այլն։
Դարձեալ և ու կամ՝ լով - եղեալ փո-

խառնակ ւի ընդ ձայնաւորս, միշտ սուղ է․ գոր օրինակ

« Վասն իմ՛ ՚ի լաց նիստ ու ՚ի սըգի,
Կականալըր ու ողորմելի : —
Ո՞ւր են խընկոցն ՚ի քեզ բուրմունք,
Աներևոյթ ւ երևելի » :

Կայ սղեալ և ընդ ւ տառին․ զոր օրինակ

« Եւ իմաստուն ւ յիմարեցայ :
Թէպէտ ւ յերկինս հոգիքն ելին » :

Եւ ուրեք գլ ՚ի հանդիպել երկուց ձայնաւորաց, մանաւանդ նմանեաց, մին ՚ի վերջ նախորդ բառի և միւսն ՚ի սկիզբն յաջորդին, յապաւի մին ՚ի նոցանէ կամ սղի․ զոր օրինակ

« Զի մի՛ սոյունց արկցիս տապաստ :

Այսոքիկ են ընդ հանուր կանոնք քանակի բառից մերոց : Ապաքէն դատանին և այլ խոտորմունք ինչ և համարձակութիւնք քերթողականք․ այլ զայս ամենայն սովորութիւն և կրթութիւն ուսուցանեն, և մանաւանդ զայն, թէ որ ՚ի նոցանէ ընդունելի իցէ կիրթ ախորժակաց, և որ զգուշալի :

ԴԱՍ Բ.

Սահման և սկիզբն բանաստեղծութեան, և զանազանութիւն նորա 'ի տաղաչափութենէ ։

Հ. Իցէ՞ ինչ զանազանութիւն ընդ տաղաչափութիւն և ընդ բանաստեղծութիւն.

Պ. Է՛ իսկ, և այնչափ՝ որչափ ընդ հոգի և ընդ մարմին. քանզի տաղաչափութիւն ոչ այլ ինչ է, բայց նիւթական կազմութիւն տողից և տաղից, և իբր մարմին քերթուածոցն. իսկ բանաստեղծութիւն՝ իբր շունչ իմն և հոգի նոցա, այսինքն են իմաստքն և տիպք կերպարանաց բանիցն՝ որ 'ի տողս անդ և 'ի տաղս բովանդակին. վասն որոյ մարթի գոլ ումեք քաջ տաղաչափ, առանց գոլոյ բանաստեղծ. և ընդ հակառակն իսկ մարթ է բանաստեղծել առանց տաղաչափութեան, թէպէտ և ճահաւորագոյն և բնիկ լեզու քերթողին իցէ տաղաչափելն ։

Հ. Ո՞րպէս ապա սահմանի բանաստեղծութիւն.

Պ. Ոմանք ըստ Արիստոտէլի և ըստ Պղատոնի սահմանեն զայն 'ի կեղծիս. այլ կեղծիք ոչ յամենայն քերթութիւնս ունին զտեղի. որպէս ահա 'ի նկարագրական քերթուածս ինչ կեղծիք և ոչ մի ինչ գտանին ։ Այլք սահմանեն զայն 'ի նմանութիւն բը-

նութեան. այլ նմանութիւնս այս չէ ինչ բանաստեղծութեան ևեթ պաճեալ, այլ և արուեստից բազմաց և արձակ շարագրածոց սեփական է նմանել բնութեան։ Ըստ ուրեմն ճշգրիտ ևս այսպէս սահմանի բանաստեղծութիւն. Հոգեշարժ բարբառ երեւակայութեան և սրտի, յաճախագոյն չափով և թուով արտայայտեալ։

Հ. Ո՞րպէս սկիզբն եղև բանաստեղծութեան.

Պ. Յոյնք համարին զՈրփէոս՝ զԼինոս և զՄուսէոս գտիչս քերթութեան, զի սոքա առաջին քերթողք անուանին յԵլլադա կացին, բայց քերթողութիւն յառաջ իսկ էր յոյժ քան զնոսա։ Քանզի բանաստեղծութիւն բնածին է 'ի մարդ. և հոգխահրաշ լինել նորա և 'ի յուզել խանդիցն՝ ոչ ևս բաւէ նմա սովորականն բարբառ, այլ արտաքերեալ խմն յանձնէ, և 'ի բերումն կրիցն թողեալ, յաճախէ իմաստս վսեմս և գեղեցիկս, ձևս մեծավայելուչս և ազնուականս, պատկերս և նմանութիւնս կենդանատիպս, անցանէ ընդ էքս առհասարակ, և զամենայն մեծութիւնս բնութեան 'ի կիր առնու առ 'ի նկարագրել զկիրս իւր. և այս իսկ է բանաստեղծութիւն։ Այլ վսեմականիս այսմիկ և անսովոր կերպարանաց բանի ոչ ևս 'ի ձայն գալով

արձակ բարբառոյ, բազում այն է՝ զի բանաստեղծն զթիւ և զչափ առնու իւր 'ի զօրավիգն, և կամ զէթ զչափ ինչ վեր 'ի վերոյ: Զայս ամենայն է տեսանել յերգս բազումս վաղեմիս:

Օրինակ իմն Մովսէս յանգս Կարմիր ծովուն հիացեալ ընդ աստուածահրաշ սքանչելիսն, և մանաւանդ 'ի նկատել հոգւովն զազատութիւն ազգի մարդկան 'ի դերութենէ դիւին՝ որոյ օրինակ ևեթ էին սքանչելիքն, տես որպիսի իմաստս և ձևս բանից առ յոյժ հիացմանն 'ի կիր արկանէ.

« Օրհնեսցուք զտէր, զի փառօք է փա-
« ռաւորեալ. զերիվարս և զհեծեալս նոցա
« ընկէց 'ի ծով... խորք ծածկեցին զնոսա,
« ընկլան յանդունդս իբրև զվէմս:.. Աջ
« քո տէր փառաւորեալ է զօրութեամբ
« իւրով, աջ քո տէր խորտակեաց զթըշ-
« նամին. առաքեցեր զբարկութիւն քո,
« և եկեր զնոսա իբրև զեղէգն. և հող-
« մով սրտմտութեամբ քո պատառեցան
« ջուրք, պաղեցան որպէս պարիսպ ջուրք,
« պաղեցան ալիք 'ի մէջ ծովուն:.. Ասաց
« թշնամին. հալածեցից և հասից, բա-
« ժանեցից զաւարն, և լցուցից 'ի նոցանէ
« զանձն իմ:.. Առաքեցեր զհողմն քո, և
« ծածկեաց զնոսա ծով. ընկղմեցան որպէս
« կապար 'ի ջուրս սաստիկս: Ո՞վ իցէ նման

« քեզ յաստուածս տէր, և կամ ո՞վ նմա֊
« նիցէ քեզ փառաւորեալդ ՚ի սուրբս սքան֊
« չելի փառօք, որ առնես զնշանս. ձգե֊
« ցեր զաջ քո, և եկուլ զնոսա երկիր։..
« Լուան ազգք, և բարկացան, և երկունք
« կալան զբնակիչս քանանացւոց։..
« Անկցի ՚ի վերայ նոցա ահ և երկիւղ. մե֊
« ծութեամբ բազկի քո քարասցին, մինչև
« անցցէ ժողովուրդ քո տէր, մինչև անցցէ
« ժողովուրդ քո այս՝ զոր ստացար։ Տա֊
« րեալ տնկեսցես զնոսա ՚ի լեառն ժա֊
« ռանգութեան քո. տէր թագաւոր յաւի֊
« տեան և յաւիտեան և ևս. զի մտին
« երիվարք փարաւոնի կառօք և հեծելովք
« նորա ՚ի ծով, և ած ՚ի վերայ նոցա տէր
« զջուրս ծովուն. և որդիքն Իսրայէլի գնա֊
« ցին ընդ ցամաք ՚ի մէջ ծովուն »։

Արդ տես ինձ որպիսի գեղով զնախերգան֊
սըն առնէ, յորդորելով օրհնել զգործող
սքանչելեացն, և քանի՜ ճարտարութեամբ
զսքանչելիսն վեր ՚ի վայր յեղյեղէ, մինչև
բացատրել զամենայն հանգամանս հրա֊
շիցն՝ առանց պատմութեան։ Մերթ առ
ժողովուրդն բարբառի, մերթ առ Աս֊
տուած. է զի ՚ի դիմաց թշնամեաց առնէ
սպառնալիս, և է զի բացադարձութիւն
առ Աստուած և բացականչութիւն։ Իսկ
փոխաբերութիւնք և նմանութիւնք և այլ

եւ ձեւք խիտ առ խիտ ամենայն ուրեք յաճախեն . խորոց ծածկել զթշնամիս, ընկըլնուլ թշնամեաց յանդունդս իբրեւ զվէմս կամ իբրեւ զկապար : Առաքումն բարկութեանն Աստուծոյ, եւ իբրեւ հուր զեղէգն՝ ուտել բարկութեան նորա զթշնամիս : Ի սրտմտութենէ տեառն որպէս 'ի հողմոյ պատառել ջուրց, եւ պաղել ջուրցն որպէս պարիսպս :

Զայրոյթ ազգաց հակառակորդաց, եւ իբր յերկուղս ըմբռնել նոցա առ ցաւոյն, այլ մեծութեամբ բազկի տեառն քարացեալ որպէս զվէմս անշարժս՝ չկարել նոցա զդէմ ունել ժողովրդեան նորա յանցանել նոցա ընդ ծովն Կարմիր :

Տանել տնկել զնոսա տեառն 'ի լեառն ժառանգութեան իւրոյ, որպէս ոք տնկագործ զի զծառս տեղի 'ի տեղւոջէ փոփոխիցէ : Երիվարացն եւ կառաց Փարաւոնի մտանել զխմառնաբար 'ի ծով, եւ տեառն ածել 'ի վերայ նոցա եւ հեծելոց նոցա զջուրս ծովուն, եւ որդւոցն Իսրայէլի ընդ հրաշաշաւիղ ուղին գնալ ընդ ցամաք 'ի մէջ ծովուն :

Արդ ահաւասիկ այս ամենայն կատարեն զբանաստեղծութիւն : Զայս ամենայն եւ յօրհնութիւնսն Դեբովրայ եւ այլոց եւ 'ի մարգարէութիւնսն առ հասարակ է տե֊

սանել. իսկ 'ի դաւթեան աստուածորհնութիւնն քանի՜ պայծառ և կենդանի գեղեցկութիւնք մեծավայելուչք և իմաստք վեհք և վսեմք ոչ գեղեալ յորդեն. գետոց ընդ կրունկն նահանջել, ծովու հերձանել և 'ի փախուստ դառնալ, բլրոց խայտալ և ցնծութիւն զգենուլ, լերանց հալել որպէս զմոմ և սպառիլ, երկնից և երկրի ահիւ և լռութեամբ լսող լինել պատգամաց, և ամենայն էից զղրդեալ սասանել յերեսաց տեառն: Համառօտ ասել, գեղեցիկն և վսեմ՝ որ են երկոքին կարեւորագոյն մասունք բանաստեղծութեան՝ երեւին 'ի նոսա ամենայն շքով:

ԴԱՍ Թ

Վսեմութիւն իմաստից և ասացուածոց:

Հ. *Զինչ է վսեմն.*

Պ. *Ոչ է ինչ դիւրին սահմանել զազդումն վսեմին 'ի մեզ, զի է սա մի յիրաց՝ զորս դիւրագոյն է զգալ քան բացատրել: Է զգացումն իմն ախորժելի, հուպ ահաւորին. և ճշմարտին ընդ նորոյ մեծավայելչապէս խառնումն: Յուզէ զհոգի և 'ի վեր քան զինքն ամբառնայ. և այնպիսի է նորա ազդումն, զի դժուարին է և գրեթէ*

անկարելի զդէմ ունել զօրութեան նորա, և տիպք ազդեցութեան նորա երկարատևք են 'ի միտս և դժուարաջինջք: Գեղեցիկ ինչ զուարճացուցանէ զմիտս, այլ վսեմն յափշտակէ. ընդ վտակ փոքրիկ և ականակիտ և պխտանի զարմանամք, այլ առանց հիացման. բայց հիանամք 'ի տեսանել զԴանուբ, զՆեղոս, զՀռենոս, և զայլ յաղթաջուր գետս, և զՈվկիան լայնածաւալ:

Ըստ այսմ օրինակի ամենայն ընդարձակութիւն անսահման ներգործէ 'ի մեզ զազդումն վսեմին. տեսիլ լայնատարր դաշտի, ամբաւ տարածութիւն երկնից, լերինք բարձրաբերձք, մայրիք երկնածայրք, այլովքն հանդերձ: Նոյնպէս և հզօր զօրութիւն ազդէ 'ի մեզ վսեմապէս. զոր օրինակ ճայթմունք շանթից, որոտընդոստ բոմբիւնք որոտմանց, մռնչիւն հողմոց, խոխոջք ուղխահոս հեղեղատից, ժայթքել հրաբուղխ լերանց, ճարճատել բոցածաւալ հրդեհութեանց, ալեկոծել լեառնաձև կոհակաց ծովու, բաղխել ընդ միմեանս սպառազէն ճակատուց, այլովքն հանդերձ:

Հ. Եւ ո՞րպէս մարթ իցէ քերթողին վսեմ յարդարել զքերթուածն.

Պ. Պարտ է նմա ոչ միայն կայտառին

և զնոցին սակի իրս վսեմս 'ի կիր առեալ 'ի բնութենէ՝ վայելչապէս մուծանել 'ի քերթուած իւր, այլ և համկոյն նոցին իմաստս վսեմս և մեծավայելուչ առաքինութիւնս 'ի բարոյականէն առնուլ 'ի կիր։ Օրինակ իմն. վսեմ է, և յոյժ վսեմ, սրբոյ հօրն մերոյ Գրիգորի լուսաւորչի երթալ մտանել 'ի ծառայութիւն Տրդատայ 'ի հատուցումն հայրենի անիրաւութեան։ Դարձեալ և ըստ աշխարհի առաքինութեան՝ վսեմ է այրել Սկեւողայ իւրովի զձեռնն սխալեալ 'ի հարուածն. և Կեսարու ասել ցնաւապետն ահաբեկեալ 'ի մրրկէ.
« Զի՞ զանգիտես. զԿեսար տանիս »։

Հ. Եւ իցէ՞ բաւական առ 'ի վսեմութիւն քերթուածոյ՝ բովանդակել նեթ իրս և իմաստս վսեմս.

Պ. Ամենևին ոչ. այլ պարտ է շարադրութեան իսկ և եղանակի ասացուածոյն գոլ համեմատ վսեմութեան իրացն, և իմաստիցն պարզ և ինքնազարդ։ Այսպէս Ովրատիոս զանհրապուրելի և զանխռով միտս առաքինւոյն նկարագրէ.

« Զայր անարատ և անյողդողդ և անդոյր
Ոչ բնակակցաց առ 'ի չարիս հրապոյր,
Եւ ոչ բռնանց սաստ հրամանի բռնաւոր

Ի հաստատուն մըրայց շըրջէ 'ի խոտոր ։
Եւ ոչ հարաւ շընչեալ ուժգին 'ի Հան-
դըի ,
Ոչ շանթընկէց ձեռըն մեծին Դիոսի ,
Եւ ոչ աշխարհ թէ քայքայեալ կործանի ,
Զաներկեանըն զայն արկցեն յերկեղի » ։

Եւ Վիրգիլիոս նովին պարզութեամբ , փո-խանակ ասելոյ առ Հռոմայեցիս՝ թէ դուք ոչ քաջ անդրիագործք էք , ոչ ճարտար ձու-լիչք , ոչ աստեղաբաշխք , ոչ ճարտարա-խօսք , այլ միայն քաջ իշխեցողք , ասէ . (Են . զ . 847 .)

«Կոփեսցեն այլք ըղկենդանի դէմս 'ի վէմ,
Ձուլեսցեն քաջ հընչօղ պըղընձըս,
գիտեմ .
Գըծագրեսցեն ցըպով ըղծիրս եթերաց ,
Գոցցեն զարփից ելս , իցեն զոռ դատ-
ասաց .
Իսկ դու իշխել աշխարհի կա՛լ քեզ պա-
հեստ ,
Հռոմայեցիդ դու , այդ լիցի քո ար-
հեստ » ։

Ընդ պարզութեան ասացուածոցն խնդրի և՝ կորով և սաստկութիւն 'ի վսեմն . և այս յաջողէ 'ի բարւոք ընտրութենէ համ-պամանաց իրին՝ զորս քերթողն 'ի ներքս ածէ ։ Օրինակ իմն . 'ի նկարագրել զմըր-րիկ՝ չէ բաւական 'ի մէջ բերել զտատա-

նուաճ ծառոյ , զամբառնալ ալեաց և այլն ,
այլ որպէս Վիրգիլիոս նկարագրէ զայն .

« Իսկ ինքըն հայրն 'ի սուսեր ծոցոյ ամ-
պըռպաց
Հրափայլ աջով թափէ շանթիս կայ-
ծականց .
Ահեղ թընդմամբ դողայ երկիր վիթ-
խարի ,
Եւ խուճապեալ սուզին գազանք 'ի
մորի :
Մահկանացու սիրտք 'ի յերեր տա-
տանին ,
Եւ յարհաւրացն աղինք բոլոր խո-
նարհին :
Հրավառ նետիւ նա կամ զԱթոս հար-
կանէ ,
Կամ զԿերաւնեան բարձունս և կամ
զՌոդոպէ :
Տեղ և տարափ շըչող մըրրիկ շառաչեն .
Մերթ ծովափունք և մերթ մայրիք
մըռընչեն » :

Եւ Հոմերոս վսեմաբար զհրամայել Արա-
մազդայ բացատրէ այսպէս ըստ հինթարգ-
մանութեան . (Իղիական . ա . 228 .)

« Եւ կապուտակայն յօնաքն ակնարկեաց
Զրուանեանն .
Եւ սքանչելի աստուածային վարսքն
շարժեցան յանմահ

Գկլոյ Թագաւորին ; և մեծապէս շար֊
ժեալ տատանեցաւ Ողիմպոս »:

Յոլովք են յոյժ 'ի սուրբ գիրս օրինակք
առ այս. որպէս 'ի Սաղմ. (լզ. 35.) նկարա֊
գիր արագարագ կործանման ամպարշտաց.
« Տեսի զամպարիշտն վերացեալ բարձ֊
րացեալ որպէս զմայրս Լիբանանու. անցի,
և ահա ոչ էր. խնդրեցի, և ոչ գտաւ տեղի
նորա »:

Եւ 'ի գիրս իմաստութեան (գլ. ժէ.)
այսպէս նկարագրի ահ և դողումն անօ֊
րինաց . « Քանզի միով խաւարային
« շղթայիւ ամենեքեան կապեցան . եթէ
« հողմ շնչէր, և եթէ թանձրախիտ ոստոց
« քաղցրաձայն հաւուց բարբառ հնչէր,
« եթէ յորդութիւն ջրոց հոսելոց բռնու֊
« թեամբ, և եթէ բամբիւնք սաստկալեաց
« վիմաց հոլովելոց, և եթէ ընթացք անե֊
« րևոյթք անասնոց կայտառելոց, և եթէ
« բարբառ ահագին գազանաց գոչելոց,
« կամ անդրէն յանձն բեկելոյ 'ի քարան֊
« ձաւաց լերանց ձայնից արձագանգաց,
« լքոյց զնոսա զարհուրեցուցեալ »:

Եւ Յոբ (գլ. իզ. 6.) այսպէս զմեծու֊
թիւնն Աստուծոյ նկարագրէ. « Մերկ են
« դժոխք առաջի նորա, և չիք զգեստ կորըս֊
« տեան. ձգեալ զհիւսիսի զոչընչիւ, կա֊
« խեալ զերկիր 'ի վերայ ոչընչի. ծրարէ

« զջուրս յամպս իւր և ոչ պատառեցաւ
« մէգ 'ի ներքոյ նորա ։ . . Հրաման պա֊
« տեալ զերեսօք ջրոյ . սիւնք երկնից թր֊
« ռեան և զարհուրեցան 'ի սաստէ նորա ։
« Զօրութեամբ հանդարտեցոյց զծով,
« իմաստութեամբ նորա տարածեալ է
« համատարածն ։ Աղիք երկնից սարսե֊
« ցին, հրամանաւ իւրով սպան զվիշապն
« ապստամբ » ։

Եւ Եսայի (գլ. Ե. 28.) այսպէս նկարա֊
գրէ զազգս՝ զորս սպառնայ յարուցանել
տեառն 'ի վերայ Իսրայելի. « Որոց նետք
« իւրեանց սրեալ են, և աղեղունք լա֊
« րեալ. սմբակք երիվարաց նոցա իբրև
« զվէմ հաստատուն, համարեցան ա֊
« նիւք կառաց նոցա իբրև զմրրիկ » ։

Յաճախ են յոյժ և այլ ևս հանգոյն սոցին
օրինակք վսեմութեան յաստուածաշունչ
գիրս ։ Եւ յետ սրբազան մատենագրացն
վսեմախօս է 'ի քերթողս Հոմերոս, մանա֊
ւանդ 'ի քսաներորդ գիրսն 'ի նկարագրել
զԱպողոն. և Վիրգիլիոս 'ի հրկիզութեան
Տրովադայ, և յէջն Ենէասայ 'ի դժո֊
խս. և Թասսոյ 'ի նկարագրել զժողով դի֊
ւացն, և 'ի պատերազմունս ուրեք. յորոց
Հոմերոս (Իղիական. Ա.) այսպէս նկա֊
րագրէ զվրէժխնդրութիւն Ապողոնի 'ի բո֊
ղոքել Քրիսեայ քրմի նորա զզրկանացն և

զարհամարհանաց՝ զոր Ագամեմնոն զօրա-
վար աքայեցւոց արար ընդ նա ․

« Լուաւ Փեբոս զալևորին ըզբողոք ,
Եւ դիւցընկէց 'ի բարձանց էջ անողոք․
Աղեղն 'ի յուս իւր և կապարճ ամրափակ,
Նըմանեմաստուեր ինք զիշերոյ 'ի քատակ․
Եւ յընթանալն հսկայաքայլ 'ի ստորէջ,
Հառաչէն նետք 'ի զըժդմելոյն թիկ-
նամէջ ։
Կառեաւ ապա հանդէպ նաւացն 'ի
բացէ ,
Եւ զլայնալիճն ուղղեալ ըղնետն ար-
ձակէ ․
Արծաթափայլ աղեղն ուժգին ճարճա-
տեաց,
Նախ ըզգըրաստուցըն ջոկ հարեալ և
շոյտ շանց ,
Ապա զմարտիկսն ըղնետն էած մահ-
առիթ,
Խարոյկք մահուն այրին անշէջ խիտ
առ խիտ ։
Եւ զինն արփի նետք սաստուածոյն ան-
դադար
Յաքայեցւոցըն տեղային 'ի ճամբար » ։

Բազումք են յոյժ և 'ի շարականս մեր
իմաստք և ասացուածք վսեմք, մանաւանդ
'ի կանոնս սրբոց խաչին , որպէս օրհնու-
թիւն եօթներորդի աւուրն ․

« Անապական սուրբ զխաչն օրհնեսցուք·
« որ եղև առաջնորդ աւազակին, և յօրի֊
« նեաց մեզ ճանապարհ, որ ձևացոյց մեզ
« սովաւ մտանել ընդ դուռն անեղաշէն
« դրախտին տեառն :
« Բանալի արքայութեան տուաւ հողածին
« մարդոյն. ուստի յառաջին ճաշակմանէն
« արտաքս անկեալ 'ի յաւէժ կենդանու֊
« թեանն. որ ձևացոյց մեզ և այլն :
« Գաւազանաձև երևեալ եգիպտական
« ազգին, ցուցանելով զզօրութիւն սրբոյ
« խաչին, յափշտակելով զգաւազանսն
« դիւթական, որ ձևացոյց մեզ, և այլն :
« Դրոշմ զգայութեան օրինակեալ 'ի վե֊
« րայ սեմոց դրանց նոցա, աներկիւղ
« պահելով զժողովուրդն յանդրանկա֊
« ծախ սատակմանէն. որ ձևացոյց մեզ,
« և այլն :
« Երևեալ աղխսանման ակն պատուա֊
« կան 'ի ձև խաչին. հերձանելով զծովն
« կարմիր, առաջնորդելով ժողովրդեանն
« սեամբ ամպոյ լոյսն անմեկնելի, որ
« ձևացոյց մեզ. և այլն » :

ԴԱՍ Ժ

Թերութիւնք Վսեմին.

Հ. Յորոց թերութեանց պարտ իցէ զգուշանալ, որոց 'ի վսեմն ջանան թեւակոխել.

Պ. Նախ առաջին յերկայնաբանելոյ. և երկայնաբանել իմա ոչ միայն ըստ եղանակի ասացուածոյն և ըստ սեթևեթից և զարդուց, այլ և ըստ իմաստիցն: Քանզի միտք չկարեն ընդ երկար սաւառնեալ կալ 'ի բարձու. և 'ի յերկարել անդ քերթողին, քանզի ոչ է մարթ նմա շարայարել անընդհատ իմաստս վսեմս, խնդրին ստորանկեալ վայրաբերինմիտք: Վասն որոյ պարտ է շատանալ քերթողին՝ երբէք երբէք յափշտակելով զմիտս, և փայլակնաձև զիմաստսն վսեմս յօրինելով. վասն որոյ ընդլայնումն այն չքեղ իմաստից անկարևորաց, եւ առաւել բառից այնպիսեաց. ոչ վսեմախօս յորդարէ զքերթողն՝ այլ Ճամարտակ: Զմարթէր Մովսեսի վսեմագոյնս պատմել զստեղծումն լուսոյ, քան զոր անզարդ պարզութեամբ պատմէ. «Ասաց Աստուած. Եղիցի լոյս. և եղև լոյս»: Որքան վսեմ է և ազդու համառօտս այս

ասացուած , այնքան նուաստ և անզօր դտանէր՝ եթէ այսպէս զնոյն երկայնաբանէր. « Իշխեցողն և տէր ամենայն էից, միով եեթ բարբառով անդարձ իւրոյ հրամանին ասաց եղանել լուսոյ. և 'ի մըշտագիշեր խաւարային անդնդոց եկն լոյս 'ի գոյ »:

Երկրորդ զգուշալին է՝ չնուաստացուցանել զիրս վսեմս գծուծ իմաստիւք կամ ասացուածով, որպէս ստգտեալն յՄվրատեայ ասացուած Մարկոսի զձիւնաբեբաց, թէ

« Ի լեառն Ալպեայ բարձրադիտակ
Եթուք Հերմէս ձիւն ըսպիտակ »:

Եւ որպէս ումն գջրհեղեղէն մաքերեաց անձահս այլաբանել , աստուածասաստ բարկութեանն 'ի թուրջ արկեալ զտիեզերս: Արդ 'ի տարապայման անտեղութենէ օրինակացս 'ի միտ առնուլ է համմատաբար և զնուազ անտեղիսն՝ յորս ստէպ զառածանին քերթողք հետևակք:

Իսկ երրորդ զգուշալին է ընդ հակառակն երկրորդիս , մի զանարդ ինչ և զնուաստ՝ հնարել ձոռոմութեամբ ասացուածոյ ամբառնալ 'ի վսեմութիւն: Քանզի վսեմութիւն 'ի վեհ իմաստս է, և հնարք վսեմախօսութեան 'ի պարզ և 'ի սակաւ բանս: Վսեմագոյնք 'ի քերթողաց

և 'ի մատենագրաց բազում այն է զի պար֊
զախօսք են գտանին. և որ հնարի ոք
հանդէս առնել բառից և յաճախէ մակ֊
դիրս շքեղս, սովորաբար թափուր գտանի
յիմաստից. մանաւանդ 'ի մերս բարբառ
որչափ մեծավայելուչ և վսեմ յօրինին ի֊
մաստք վեհք ընտրութեամբ բառից և
բարդութեանցն ըստ պատշաճի և զգոյշ
պիտառութեամբ, այնչափ ցուրտ և տաղտ֊
կալի է յաճախութիւն բարդիցն և կրկ֊
նութիւն համանշանակ և աւելորդ բա֊
ռից։ Որպէս Յովհաննու կաթողիկոսի ա֊
սելն. « Նա և հեղձամղձուկ յարկածա֊
« ծուկ հողաթաւալ հողահեղձոյց սատա֊
« կումն դիակոյտ բազմութեանն, որ կար֊
« ծրագոյն քարեղէն և անկարեկիր միտս
« էր ստացեալ՝ յորդորէր զնա 'ի բազում
« ողբս և յարտօսրաթոր կականմունս »։
Զոր վայելչագոյն յոյժ մարթէր յօրինել
համառօտիւ այսպէս. Նա սատակումն
դիակոյտ բազմութեանն զանկարեկիր միտս
'ի բազում ողբս յորդորէր։

ԴԱՍ ԺԱ

Սահման Գեղեցկին. — Զանազանութիւն քերթողական լեզուին 'ի հռետորականէն:

Հ. Զինչ է գեղեցիկն.

Պ. Ամենայն որ հաճոյն է և զուարճացուցիչ: Զանազանի յոյժ ազդումն սորա յազդմանէ վսեմին. քանզի նորայն սաստիկ է և սորայս հեզիկ. և թէպէտ ոչ երբեք զվսեմն ամբառնայ սա 'ի վեր զմիտս, այլ զուարճացուցանէ զնա. և յետ վսեմին սա պատրաստէ երևակայութեան առաւելագոյն բերկրանս: Ոչ է մարթ յերկարաձգել զիմաստս վսեմս. իսկ գեղեցիկն ոչ միայն երկարաձգի՝ այլ և յանպարոյր զանազանութիւնս իւրաց տարածանի: Վասն որոյ ամենայն իմաստք և ձևք և բացատրութիւնք քերթողական լեզուին պատշաճք և վայելուչք, որ չիցենն վսեմք, գեղեցիկք են:

Հ. Տուր ինձ օրինակս ինչ գեղեցկին.

Պ. Գեղեցիկ է յոյժ խօսակցութիւնս ընդ անցաւոր ոք և ընդ տատրակ որոյ վարուժանն 'ի վարմս անկեալ.

Օրն. «Զի՞ գործես 'ի տխուր անտառիս,
Ո՞վ տատրակդ ողբերգու, ասա ցիս:

Տափր. Հեծեմ սաստ, զի աւա՛նդ կորուսի
Զվարուժանն իմ միակ ցանկալի։
Անշ. Զերկրնչիս զի հաւորան և ըզքեզ
Թակարգեալ բազմանցէ նոյնպէս։
Տափր. Եթէ ոչ նա դաշինձ արիւնուշտ,
Սակայն ցաւք իմ լեցին ինձ ան-
շուշտ »։

Տիրուղ առ 'ի բացատրել զքաղցր ընկերու-թիւն սիրելւոյ բարեկամին իւրոյ, այսպէս գեղեցիկ յօրինէ զբանն.

« Մենացելումս իսկ յանապատ անմարդի,
Բազմաժողով դու ինձ ակումբ ցան-
կալի »։

Նոյ Կատուղ այսպէս առ սիրելին իւր բարբառի.

« Ոչ ես ըզքեզ տեսից եղբայր իմ սիրելի
քան զարև,
Բայց սիրեցից ըզքեզ և յայսմ հետէ
'ի սէր մշտատև »։

Գեղեցիկ յոյժ և ոճն յարգի քերթողաց յօրինէ այսպէս զգրուատիս եղակին և զմանուշակն ըստ իմաստիցն և ըստ բա-ցատրութեան.

« Երթագոյն մանուշակ
Նոյ եղակ կարմրորակ,
Նազելիք երկոքին
Ցածք համեստք երկոքին։
Երկոքին իսկ մանուանք,

Ըզգեստով են սողունք։
Ոչ այնպէս պատկառող,
Որ զդիմօք ունին քող.
Մինչ գոգցես դեղ նոցա
Դալարեօք չորանայ։
Միշտ 'ի վայր կան թեքեալ
Պարանոցք վաստակեալ,
Բայց սակայն այր և կին
Մեծագրեն յոյժ լինին
Ըզսիրուն մանուշակ
Ոչ զելակ անուշակ »։

Հ. Ի՞ւ զանազանի լեզուն քերթողական 'ի հռետորականէն և յայլոց.

Պ. Քանզի քերթողաց գլխաւորագոյն ուշ նպատակին է զուարճացուցանել, խանդաղատել, ազդել զգացմունս վեհս, և 'ի բաց մերժել զյոռութիւնս, օրէն է նոցա 'ի կիր առնուլ իմաստս և ձևս անսովորս և յանդգունս, կրկնութիւնս յաճախաւորս, մակդիրս նորաձևս, և նկարագրութիւնս բազմազարդս և ընդարձակագոյնս։ Քանզի բանաստեղծութիւն է նկար խօսուն, և այս ամենայն որպէս դեղք երանգոյ են նմա առ 'ի նկարագրել կենդանատիպս՝ զորոց խօսի. վ՛յ պարտ է համբակաց նկատել զայսոսիկ 'ի քերթուածս։

Հ. Տո՛ւր ինձ օրինակս ինչ քերթողական գեղեցիկ բացատրութեանց.

Գ. Ըսյուք յօրինակ գաղմամն ձ՞կ յաղագս արարչութեան : փոխանակ ասելոյ՝ թէ ալիք ծովու մերթ ամբառնան և մերթ խոնարհին, ասէ. « Ելանեն լեռնանան, և իջանեն դաշտանան »: Աստանօր միով բառիւ [illegible] ցուցանէ զլեռնաձև կոհակաց ծովուն զկածմունս, և միով դարձեալ բառիւ [illegible] զգեղեցկածաւալ հանդարտութիւն ծովու իբրև զդաշտ :

փոխանակ ասելոյ՝ թէ բղխեցուցեր աղբիւրս ընդ ձորձորս, ասէ. « Առաքեցեր զաղբիւրս ընդ ձորձորս »: Այս բառիւ [illegible] շունչ իմն և կենդանութիւն աղբերցն ընծայի, հնազանդել հրամանաց արարչին, և գնալ ընդ ձորձորս :

փոխանակ ասելոյ՝ թէ դու սաստեցեր զծառս, և աճեցուցանես զհոսս անձրևոց, և պատրաստես զհոսս ՚ի դադարս թռչնոց, ասէ. « Յագեսցին ծառքն
« անտառն, և մայրքն Լիբանանու՝ զորս դու
« տնկեցեր. անդ թռչունք երկնից ձագս
« հանցեն »: Այս բառս [illegible] ցուցանէ զծարաւ ծառոց իբրև զկենդանեաց պաքելոց. և ձագս հանել անդ թռչնոց՝ զգեղեցկագոյն մասն բնակութեան թռչնոց բացատրէ :

փոխանակ ասելոյ՝ թէ սահմանեցեր զժամ՝

մտից արեգական, ասէ. «Արեգակն ծանեաւ զժամ մտանելոյ իւրոյ»: Իսկ բառիս ֆանչա, առաւել ինչ քան զկենդանութիւն ընծայի արեգական, այսինքն է ճանաչել զկարգ իւր բանաւորապէս, և հպատակել այնմ:

Ասցուք դարձեալ յԵզեկիէլէ (գլ. իէ.) զնկարագիր նաւացն տիւրացւոց, ուր մարգարէն կամի ասել՝ թէ նաւք վաճառականք Տիւրոսի էին ամրակառոյցք և մեծաշուք, և ուղղիչք նոցա քաջահմուտք:
«Մայրք 'ի Սանայիր լեռնէ շինեցան քեզ
«պահանգք, և տախտակք նոճիք 'ի Լիբա-
«նանէ առան՝ առնել քեզ կայմս եղևնա-
«փայտեայս. 'ի Բասանէ արարին զղեկս
«նաւաց քոց. . . : Բեհեզ ընդ դիպակի
«գործեցաւ քեզ 'ի պաստառս. յԵգիպտա-
«սէ արկանելիք քեզ 'ի փառս, և հանդերձ
«ծիրանի և կապուտակ 'ի կղզեաց յելի-
«սացւոց եղեն 'ի զարդ պաճուճանաց քոց:
«Եւ իշխանք քո բնակիչք սիդոնացւոց, և
«եղեն արադացիք նաւավարք քո. և իմաս-
«տունք քո՝ Տիւրոս՝ որ եղեն 'ի քեզ,
«նոքա եղեն քեզ նաւապետք »:

Տես ինձ քանի վսեմագոյն յօրինէ քերթողն զթուումն մասանց. և ապա փոխանակ ասելոյ թէ մասունքն այնորիկ իւրաքանչիւր, այսինքն պահանգքն, կայմք, թիակք

և այլն, յաղնիւ փայտից շինեալ էին, և առագաստքն և դրօշք յաղնիւ կտաւոց, առանձնաւորէ ոչ միայն զորակ փայտիցն և զկտաւոց, այլ և զքաղաքաց՝ որ բերեն զաղնուագոյնս 'ի ծառոց անտի և 'ի բեհեզաց: Նոյնպէս և զթիավարս և զուղղիչս նաւացն առանձնաւորէ ոչ միայն յարլս երևելիս և 'ի հմուտս՝ այլ և 'ի սիդոնացիս և յարադացիս և 'ի տիւրացիս, յորս հմտագոյնք 'ի նաւավարաց էին:

ԴԱՍ ԺԲ

Մակգիրք և շրջաբանութիւն:

Հ. Ո՞ր իցեն սեփականագոյն քերթողաց ձևք.

Պ. Քան զամենայն ձևս յաճախեն առ նոսա մակգրաց պիտառութիւն, և շրջաբանութիւն:

Հ. Զիա՞րդ 'ի կիր առնուն քերթողք զմակգիրս.

Պ. Երբեմն. Նախ զհանգամանս իրաց ծանօթս, զորս ճարտասանն 'ի բաց թողու, քերթողն վայելչապէս բացատրէ մակգրօք: Զոր օրինակ զմանգաղ ասել [illegible], զայծիաղ՝ [illegible], զխաշինս՝ [illegible], զխոչունս՝ [illegible], զեղեամն՝ [illegible], զցո-

բեան՝ [illegible], զաղոց՝ [illegible], զկարապ՝ [illegible], զբաժ՝ [illegible], զհիւսիսի՝ [illegible], զհարաւ՝ [illegible], զձիւն՝ [illegible], այլովքն հանդերձ, որպէս է տեսանել զայս ամենայն 'ի չքնաղ քերթուածս Վիրգիլեայ։ Երկրորդ առ 'ի բացատրել զյատկութիւն հանգամանաց իրացն, զոր այսպէս իսկ պահանջէ սահման բանաստեղծութեան, գոլով բարբառ երեւակայութեան և սրտի. վասն որոյ քերթողն երեւակայէ միշտ զմիշակ՝ [illegible], զհողագործ՝ [illegible], զորիչ՝ [illegible], զյօտոյ՝ [illegible], զերիվար՝ [illegible], զառիւծ՝ [illegible], զհովանի՝ [illegible], զմատառ՝ [illegible], զբաղեղն՝ [illegible], զխաբաղ՝ [illegible], զօձ՝ [illegible], զկիճ՝ [illegible], զծիրանի՝ [illegible], և այլն։ Համառօտ ասացեալ, զամենայն ինչ չար և բարի ստուարացուցանէ յաչս նորա երեւակայութիւն։

Եւ երրորդ՝ ազնուագոյն եղանակ պիտառութեան մակդրաց, որովք քերթողն 'ի միմիայն բառ բովանդակէ նմանութիւնս, փոխաբերութիւնս և այլ ձեւս և իմաստս բազումս։ Ցոյցուք դարձեալ օրինակս 'ի Վիրգիլեայ. զլուսին կոչէ նա ուրեք ուրեք [illegible], և [illegible] զարեգակն, յայտ արարեալ զփայլումն միայն իբրև զարծաթ. և զմիւսոյն իբրև զոսկի։

Կոչէ նա ՅԱՄՐ զամիսս ամառայնոյ և զգի-
շերս ձմերայինս, և ԷՐԱԳԸՆԹԱՑ զարև աշնա-
նային, ակնարկելով յերկայնութիւն տուըն-
ջեան ամառայնի և գիշերաց ձմերայնի,
և 'ի կարճութիւն տունջեան յաշնայնի:
ԾՈՅԼ կոչէ նա զծառաստանս և զարտա-
բայս անըերս, և ԱԳԱՀ զԱխերոն, զբարս
իմն մարդկեղէն տալով նոցա նմանու-
թեամբ:

Կոչէ ԲԱՆՋՐԱԽԷՓ զթևս ագռաւուց՝ զբազ-
մութիւն երամոյ նոցա յայտ առնելով:

Կոչէ ՓԱՅԼՈՒՆ զխոփ, յանդուղ վաստակս
արօրադրին ակնարկելով:

Կոչէ ԼՈՒՌ զանտառս, և ՀԱՄՐ զծառս,
զամայութիւն միոյն յայտ առնելով, և
զմիւսոյն չլինել դադար երգեցիկ թռչ-
նոց:

Կոչէ ԱՆԴԱՐՁԱՆ զգետս, յորս կայցին ամ-
պարիշտ մարդիկ:

Ասէ ոգորել նոխազաց ընդ իրեարս ԱԽԷՐԷՄ
եղջերօք, մասին տալով զհանդամանս
բալորին:

Նոյնպէս ամենայն ուրեք ճարտար մա-
կդրութեամբքն հրաշագան զքերթուածս
իւր յօրինէ քերթողն:

Է և այլ ազգ պիտանութեան մակդրի կամ
յատկացուցչի, յաճախեալ առ քերթողս.
որ ոչ սակաւ յաւելու կենդանութիւն և

գեղ ՚ի քերթուածս։ Նոյն է առանձնաւորել զերս. զոր օրինակ զխէչակ՝ որ մարթի անխտիր յամենայն փայտից գոլ՝ կոչել Հաչէտղ. և ոռոէնէս կոչել զկողովս՝ զոր յադգի ազգի ձիւղոց անխտիր մարթ է հիւսել։ Այնպէս և զվայրս առանձնաւորել յատուկ անուամբ, և զգետս, մանաւանդ ուր ազնիւքն իցեն. զոր օրինակ Խոռոմախան կոչել զարմաւենի, Հնդկաստան՝ զմեղր, զոսկի՝ Սոփփերայ, զայգի՝ ՚ի Բեթղեհեմ, զմայրս՝ Լիբանանու, և այլն։ Տես ՚ի նկարագիր նաւացն տիւրացւոց (Գլուխ Ժա)։

Հ. Տուր ինձ օրինակս շրջաբանութեան քերթողականս։

Պ. Սաղմոսերգուն փոխանակ ասելոյ (Սղմ. ՀԷ.) թէ որդիք Եփրեմայ քաջ պատերազմօղք փախեան ՚ի պատերազմէ, ասէ.
« Որդիք Եփրեմի, լարձիգք և պնդաձիգք,
« յաւուր պատերազմի կապարձս դար֊
« ձուցին »։

Յոր փոխանակ ասելոյ՝ թէ ծաղր եղէ ազգաց և սնոտի մարդկան, ասէ (Յբ. Լ.)
« Որք պատէին խարշափուն բանջարով,
« և զարմատս փայտից ծամէին ՚ի սաս֊
« տիկ սովոյ, որոց տանիք իւրեանց էին
« ծակք վիմաց, որք ընդ խոռովք վայ֊
« րենեօք բնակեալ էին, արդ քնար եմ ես
« նոցա »։

'Նոյն ինքն դարձեալ (գլ. լթ.) փոխանակ ասելոյ 'ի դիմաց տեառն՝ թէ ես ստեղծի զձի, այսպէս շրջաբանէ. « Եթէ դու
« ադուցեր ձիոյ զօրութիւն, և զգեցուցեր
« զրահ զպարանոցաւ նորա, արկեր զնո-
« վաւ սպառազինութիւն, և փառս լան-
« ջաց նորա զյանդգնութիւն »:

'Նոյն ինքն դարձեալ և 'ի նկարագրել զվիշապն, փոխանակ ասելոյ՝ թէ ահարկու են ատամունք նորա, պարանոց նորա հզօր, և կորուսանէ զամենեսին՝ որ ընդ առաջ պատահին նմա, ասէ (գլ. խա.)
« Շուրջ զատամամբք նորա ահ, 'ի պա-
« րանոցի նորա զօրութիւն բնակէ,
« առաջի նորա կորուստ ընթանայ »:

Եւ Սողոմոն յերգս երգոց (գլ. բ. 11.) փոխանակ ասելոյ՝ թէ եհաս գարուն, այսպէս շրջաբանէ. « Ահա ձմեռն էանց,
« անձրևք անցին և գնացեալ մեկնեցան,
« ծաղիկք երևեցան յերկրի մերում, ժա-
« մանակ եհաս յատանելոյ. ձայն տա-
« տրակի լսելի եղև յերկրի մերում »:

Ղուկանոս քերթող փոխանակ ասելոյ՝ թէ Կադմոս փիւնիկեցի եգիտ զատակ դպրութեան, ասէ.

« Փիւնիկեցիք նախկին իշխեալ,
Եթէ լսեմք համբաւոյ,

Ընհարթ ձեւովք կայսումըն տալ
Ընդանելի բարբառոյ »։

Օ՜ որ գեղեցիկ ես այսպէս շրջաբանէ ոմն 'ի գաղղիացի քերթողաց ․

« Ի նմանէ հանճարեղս այս արուեստ 'ի
լոյս ել ,
Նկարել ըզբարբառ, և ընդ աչըս խօսել.
Եւ 'ի գիծըս պէսպէս և 'ի ձև բազ-
մազան ,
Խորհըրդոց անմարմնոց տալ երանգ և
իրան »։

Եւ ոմն 'ի քաջացն մերոց արդի քերթողաց փոխանակ ասելոյ՝ թէ մինչ մերազնեայ մանկտին ողբերգէ 'ի տեսարանի , վայելուչ իմն այսպէս շրջաբանէ ․

« Ի չափ տաղի մինչ Թորգոմեան ման-
կանց պար
Ի սոփոկղեան սօլերս ագոյց գարշա-
պար »։

Եւ Ովրատ (Տաղերգ. ա. Ի.) փոխանակ ասելոյ՝ թէ դու ազնիւ ըմպես գինի, իսկ ես ոչ, այսպէս շրջաբանէ ․

« Դու զԿեկուբեանն ըմպես ըզհոյզ ,
Եւ զ'ի հընձանըս Կաղենեան ճըմլեալ
ողկոյզ ․
Ոչ Փալերնեան որթք յիմ բաժակ
Եւ ոչ Փորմեան խառնեն բըլուրքըն զան-
ապակ »։

ԴԱՍ ԺԳ

Զանազանութիւն քերթողական ձևոց 'ի հռետորականաց: — Ձև նկարագրութեան:

Հ. Ի՞ւ զանազանին ձևք քերթողականք 'ի հռետորականացն.

Պ. Ապաքէն քերթողական արուեստին ձևք բազում իւիք յար և նման հռետորականացն գտանին, բայց գրեթէ և ամենայն ուրեք զանազանին յայնցանէ սաստկութեամբն. քանզի բազում ինչ օրէն է քերթողի, որ հռետորի առաւելազանցն է, և է ուրեք՝ զի ծաղրելի իսկ: Օրինակ իմն. գեղեցիկ է շրջաբանութիւն շարականին, ուր փոխանակ ասելոյ՝ թէ սուրբ լուսաւորիչն մեր զամս հնգետասան 'ի խոր վիրապին բնակէր, ասէ. «Երեք հնգօք ամօք 'ի «մէջ թունաւորացն բնակէր անդնդային «տանջանօքն 'ի վիրապին»: Այլ եթէ զայն ասացուած ոք 'ի ճառս կամ ևս առաւել 'ի հետեւակ բանս 'ի կիր արկանիցէ, որպէս ասել՝ երից երրեակ որդիս ուրուք ծնեալ, կամ երիս հնգեակ ճառս յօրինեալ և այլն, կարի յոյժ ծաղրելի գտանի:

Դարձեալ և Սողոմոն 'ի ձև փոխա֊
բերութեան ՃՂԸԷ կոչէ զատամունս . և
ոչ անդ զկայ առեալ , այլ և տկարութեամբ
ձայնի աղօրւոյն այլաբանէ զտկարանալ
ատամանց ծերոց , որ անցանէ անդր քան
զսահման ճարտասանին ։
Նաւ Ովրատիոս ԹՃԳՈՅՆ կոչէ զմահ , 'ի ձև
փոխանունութեան տալով մահու զհան֊
գամանս մեռելոյ կամ զգլխական . և ոչ անդ
զկայ առեալ , յաւելու 'ի ձև զխմոնու֊
թեան քերթողականն՝ զի նովին առամբ
հարկանէ աժգոյն մահ զաղքանիս և զհիւղ֊
գոր 'ի ճարտասանական ճառս արուեստա֊
կութիւն համարելի է ։
Նմանապէս Վիրգիլիոս և Ովիդիոս այսք
'ի քերթողաց 'ի ձև խելամտութեան ԷՂՆԲՆ
կոչեն զնաւ բազում ուրեք , զնիւթն փո֊
խանակ իրին առեալ . որ կարի իմն է ճար֊
տասանին ։
Նոյն ինքն Վիրգիլիոս բազում ուրեք 'ի
կիր արկանէ շրջաբանութիւնս գեղեցիկս
յոյժ , որք 'ի ճարտասանական ճառս ան֊
յարմարք թուին . զոր օրինակ փոխանակ
ասելոյ՝ թէ մինչև սառուցեալ իցեն ջուրք՝
պարտ է աւանդել երկրի զսերմանս , ասէ .
« Մինչև տխուր ձմերայնոյն սանձահա֊
« րեալ զուղխս սառամանեօք » ։ Նաւ զկար֊
ճութենէ ասուրց ձմերայնոյ ասէ՝ թէ արե֊

դաշտունք ձմերայինք ճեպին մտանել յԱկկիան: Նա այլուր փոխանակ ասելոյ հովուի առ հովուակիցն թէ յիշեսցի անուն քո մինչև 'ի սպառ, ասէ. « Յորչափ « ծաղկամբք մեղուք և ցօղով պարարեսցին « ճպուռնք, յիշեսցի անուն քո առ հա- « վիւս »: Նա այլ սոցին համգոյն շրջաբանութիւնք անթիւք, զորս ոչ է օրէն ճարտասանի 'ի կիր արկանել:

Նոյն ինքն դարձեալ 'ի ձև նմանութեան առ 'ի բացատրել թէ որով կարգաւ բղծաւս 'ի բլրի պարտիցէ անկել, ածէ յօրինակ զբանակ զօրաց, որպէս 'ի մեծի պատերազմի երկայն գգումարտակն տարածանէ լեղէոն, և յընդարձակ դաշտի գետոյ ճամբար, կարգին տագմք, և ծածանի փայլուն պղնձով երկիրն ամենայն, մինչև ահագին մարտիցն խառնել և մինչ մաբանեալ 'ի մէջ զինուցն Թափառի Արէս: Արդ ըստ կարգաց այսպիսեաց ճակատու պատուիրէ անկել գծաւս 'ի դաշտ խվայրի. որ թէպէտ և գեղեցիկ է նմանութիւնն, և բացատրութիւնքն ամենայն ճարտասանականք, մանաւանդ յարձակ թարգմանութեանս, այլ ո՞չ տեսանէ զի ձև նմանութեանն 'ի վեր է քան զսահման ճարտասանութեան, և անպատկանաւոր հռետորական ճառից:

Նոյն ինքն դարձեալ 'ի ձև չափազանցու-
թեան փոխանակասելոյ՝ թէ անհնար է
զազգս ազգս այգեաց թուել և ուսանել
զանուանս նոցա, ասէ. « Զոր թէ գիտել
« ոք կամիցի, կամիցի նա գիտել եթէ
« քանիք յաւազուտս Լիբիոյ մրրկին զե-
« փիւռիւ հատք, և կամ քանիք զծովա-
« փուն Յոնիոյ բաղխեն ալիք, յորժամ
« խստաշունչ 'ի վերայ նաւաց անկանի
« Եւրոս »: Ահա և աստ չիք ինչ 'ի բա-
ցատրութիւնսն օտար 'ի ճարտասանու-
թենէ: Բայց գլխաւոր մասինն դեղ և
վայելչութիւն՝ որ է ձևն չափազանցու-
թեան՝ փոխի 'ի ճամարտակութիւն՝ թէ ոք 'ի
վարդապետելն հետևակ բանիւ զմշակու-
թենէ և կամ 'ի ճարտասանելն կամիցի 'ի
կիր արկանել զնոյն:

Նոյն ինքն դարձեալ 'ի ձև բացադարձու-
թեան այսպէս մտում 'ի հովուաց տայ
բարբառել. « Թուփք դալարագեղք, լե-
« րուք հովանի զառանցս իմոց »: Արդ
գեղեցկութիւն բացադարձութեանս այսո-
րիկ փոխի 'ի պչրանս ընդ գրչաւ հռե-
տորին:

Զնոյն գրեթէ և զայլ ամենայն ձևոց
ասելի է, մանաւանդ զնկարագրականէն՝
որ առաւել քան զամենայն ձևս թուի
հասարակաց քերթողին և ճարտասանին:

Վասն որոյ ոչ է պարտ մեր 'ի վերոյ հայել յօրինակս ձեւոյ, այլ նկատել 'ի նոսա զհանգամանս և զտիպս յատուկս քերթողականին, զի մի արուեստք երկաքանչիւր ընդ իրեարս խառնակեալ շփոթեսցին. իբր այն թէ հեծելոյն հետեւակելով, և հետեւակին պեգասօրէն ձախրելով:

Հ. Կարեւո՞ր իցէ քերթողի նկարագրութիւն:

Պ. Նկարագրութիւն ոչ միայն կարեւոր է յոյժ քերթողի՝ յամենայն ազգս քերթութեանց խառնեալ, այլ և ցոյց մեծ է հզօր երեւակայութեան նորա, և նովաւ հանճարք մեծամեծք զանազանին 'ի չափաւորացն: Հետեւակ քերթող առաւել ինչ քան ըզ լուեալն և զընթերցեալս չգտանէ յիմիք 'ի նկարագրել, և թուի նմա ամենայն ինչ ասացեալ յայլոց և սպառեալ: Իսկ քերթող քաջ ամենայն ուրեք գտանէ տիպս անսպառելի, և Ճշգրտահան գրչաւն առաւել քան զՃարտար նկարիչ կենդանատիպ յանդիման առնէ զիրս, պատշաՃ ընտրութեամբ հանգամանացն: Քանզի յայսմ իսկ է արուեստ նկարագրութեան.

Նախ՝ զի մի իցեն 'ի նմա տիպք նուաստք և սովորականք, այլ ամենայնն ընդոստուցիչ մտաց.

Երկրորդ՝ զի իցեն տիպքն յատուկք և

սեփականք նկարագրելոյ իրին, և առանձնաւորեսցեն զայն.

Եւ երրորդ՝ զի իցեն համաձայնք իրերաց տիպքն, այսինքն ուր զվսեմութիւն իրին առաջի կայցէ ցուցանել ընտրեսցին հանգամանք վսեմք, իսկ ուր զգեղեցկութիւն՝ հանգամանք գեղոյ, և ամենայն իսկ ուրեք ըստ պատշաճի առաջարկութեանն։ Ի վերայ այսոցիկ պարտ է քերթողին պարզ և անսեթևեթ առնել զնկարագրութիւնսն, մանաւանդ ՚ի վսեմ իրս. որպէս զի մի՛ ճապաղ ընդարձակութեամբն տկարասցի ազդեցութիւն բանին։ Դարձեալ և ՚ի նկարագրութիւնս անկենդան իրաց խառնել զկենդանութիւն և զկիրս, որպէս Վիրգիլիոս ՚ի դաշտային նկարագրութեան առնէ՝ զգեղջէիցն առաքինութիւնս ՚ի ներքըս ածեալ.

« Ո՛վ երջանիկք յոյժ, թէ մըշակք
Բաղդին իւրեանց իցեն գիտակք.
Ոյց ճաշ դիւրին տայ շնորհապարտ
Ի խաղմարար զինուց զերծ արտ։...
Այլ է անդորր անդ անկասկած,
Խաղաղութիւն համատարած.
Կենցաղ անփորձ խաբէութեան,
Փարթամ ՚ի յինչըս բազմազան.
Անձաւք և լիճք ականակիտք,
Եւ դաշտք Տեմպեայ հովանախիտք.

Է բառաչող անդաձոր կով.
Եւ քաղցրախորժ նինջ ընդ ծառով.
Ընդ գազանաց որջք և անտառք,
Եւ ժիրաժիր մանկրաւոյ պարք,
Սովորք 'ի կեանըս խըստամբեր,
Պնից և ծնողաց պաշտօնասէր:
Արդարութիւն զվերջին զիւր հետ,
Ի գնալն յերկրէ, առ նոսա եկ »:

Ճարտար է յոյժ քերթողս յամենայն ուրեք 'ի նկարագրել՝ քաջակիրթ ախորժակօքն յընտրութիւն հանգամանաց, և մանաւանդ 'ի նկարագիր առմանն և հրկիզութեան Տրովայ յերկրորդ գիրս Ենէականին:

Բայց Հոմերոս գերազանցէ զամենեքումբք 'ի նկարագրականին, մինչև կոչել նմա մե-ծագոյն նկարիչ նախնեացն յիշատակաց: Օրինակ իմն 'ի պատերազմական նկարա-գրութեանց նորա. (Իղիական. Ը:)

Բանին դրունք ողջոյն, թափ 'ի դուրս
ոտաչի հրոսակ ամբոխին
Հետի այրուձի, և շռնդըն Ճայթեաց
ամպրոպ ահագին.
Մինչ ռազմարարեալ 'ի մի համագունդ
դըրդէին 'ի վայր,
Ճակատ առ Ճակատ միմեանց 'ի դիմի
բաղխէին զուպար,
Նիզակ և վահան, և սըրտմտութիւն
քաջաց կորովեաց

Կուռ հարծրածածկայթ սպառազէն
փառեալ բուռն ախոյանաց ,
Ընդ գըմբեթազէն ասպարաց կոփիւն
ընդ իրեարս խեթկէր ,
Եւ որոտընդոստ բոմբիւն խաղմարար
թընդայր գըղըրդէր ·
Ընդ պոյժ խառնաձայն, անկելոց մըռն-
չիւն , զոռք նահատակաց ,
Եւ յատակք երկրին վիժեալ խոխոջէր
յապաժոյժ արեանց :
Յառաւօտին պահ մինչ այն ինչ աճէր
տիւըն դիւցական ,
Զերկոսին կողմանս հարկանէին նետք,
տապալէր խուժան :
Իսկ իբրև արևն յերկնից միջակին ե-
լեալ սաւառնէր ,
Զոսկեղէն կըշիռն առեալ յայնժամ՝
Հայրն ամբառնայր 'ի վեր » :
Եւ 'ի քսաներորդ դիրսն 'ի նկարագրել
զորոյական պատերազմն ·
« Այլ այն ինչ և դից անմահիցըն պար
Խառն ընդ մահացուաց իջին 'ի գու-
պար ,
Աշխոյժք երկուստեք զարթեան արու-
թեան ,
Շըռինդն և զայրոյթ , Ճապաղիք ա-
րեան :
Աստուստ 'ի ցասումն Աթենաս Պալլաս

Զխուրց եղագեանց բորբոքէր ըզգաս,
Նու անգոյստ Արէս աՀեղաբարբառ,
Ի խիտ մառախուղ և յամպրոպ խաւար,
Յեղխոնական ամբին 'ի բարձանց
Խրախոյս տայր անդուլ տեւկրեան պա-
տանեաց:
Այսպէս 'ի ճակատ արիւնոտ կռուոյն,
Գըրգիռ քաջալերք անմաՀից պարուն
Զաքայեանց գընդին և զտեւկրեանցն
աշխոյժ
Վառեալ բորբոքէին յեռանդն ապա-
ժոյժ:
Որոտայ աՀեղ յՈղիւմպեայ բարձանց
Անմահիցըն Հայր և մաՀկանացուաց.
Նու յանդընդախոր 'ի Հիմանց անտի
Շարժեաց Պիսիդոն զերկիր վիթխարի,
Ըզբարձրածայրեալ լերանց ըսպա-
ռուած
Յիւր երեքժանւոյն զըրգուեալ 'ի Հա-
րուած:
Շարժըլին խորաձոր իդեան դաշտա-
վայրք,
Գագաթունք բըլրոց ձօձին երկնա-
ծայրք.
Պանէշք աքայեան զըրգուին նաւա-
կերտք,
Պարիսպք և պատուարք տատանին և
բերդք:

Սոսկացաւ Պղուտոն, և երկիւղալից
Ոստուցեալ 'ի վեր յիւրոց գահոյից,
Դադարեա՛յ, գոչէ առ շարժմանն
առիթ,
Ձըգել զերկրաշարժ քո զերեքժանիդ·
Գուցէ պատառես արդ զերկիր համակ
Եւ հաստակառոյցդ այդ բացեալ յատակ
Անմահից պարուն և մահկանացուաց
Դիտեսցեն վերուստ աչք 'ի ստորեր-
կրայս ։
Ի նըսեմաստուեր տեսիլ ահարկու
Տարտարոսական մըթապատ գահու.
Ի տըխուր ոգւոց կայս մըշտագիշեր,
Եւ դիցն անմահից գոլ դըժոխըմբեր »։

Բայց նկարագրական ճարտարութիւն Հոմերոսի առաւել ևս երևի յՈդիսականին իւրում, մինչև ընթերցողին որպէս յանդիման աչաց զամենայն անցս դիւցազինն նկատել ։

Գեղեցիկ է նկարագիր Թռուցիկ հաւուն 'ի գիրս իմաստութեան. (գլ. Ե.) « Իբրև
« զհաւու թռուցելոյ յօդս, որոյ ոչ գտա-
« նին նշմարանք գնացից· բաղխելով մազ-
« լացն պատառեալ զհողմն թեթև և հեր-
« ձեալ բռնութեամբ, ընդ ոլորտս մտանէ.
« յածել թևոցն՝ յառաջադէմ սլանայ, և
« յետ այնորիկ ոչ գտանի նշանակ ամբառ-
« նալոյն 'ի նմա »։

Պարձեալ և 'ի գիրս Յոբայ վսեմ է յոյժ նկարագիր ձիոյն. (գլ. լթ.) « Որոտայ « 'ի դաշտի և գափր հատանէ. ելանէ 'ի « դաշտ զօրութեամբ. 'ի պատահելն նետից՝ « արհամարհէ, և ոչ դարձցի յերկաթոյ։ « Ի վերայ նորա շողան աղեղն և սուսեր, « և շարժումն վահանի և նիզակի, և բար- « կութեամբ ապականէ զերկիր, և ոչ « հաւատայ մինչև փող հարկանիցի։ Եւ « իբրև փող հարկանի, նա վաշվաշ կար- « դայ. 'ի հեռաստանէ առնու զհոտ պա- « տերազմի, վազս առնլով և փռնչելով »։

Մինս ևս կարևոր պայման նկարագրու- թեան է ընտրութիւն ածականաց, զի մի մայրապար առ 'ի լնուլ զթիւս ոտից յա- ւելցին մակդիրք՝ սեւ կոչելով զագռաւս, սպիտակ զկաթն, ջերմ զամառն, և այլն. այլ զի իմաստս նորա և կամ զօրութիւն յա- ւելցեն 'ի գոյականն. որպէս Սողոմոն յԵրգս երգոց խնկաբերս կոչէ զլերինս, այծեայս զվարսս, ձախարակեայս զոսկիս, և այլն. և որպէս Վիրգիլիոս լուռ կոչէ զանտառս, ոգորող զերինջս, զողկոյզս, ծխամած զձեղունս գեղջկիցն տանց, ձայնձայնող զորոց, և այլ այսպիսի մակդիրք իմաստալիցք՝ յատուկք քերթողական նկա- րագրութեանց։ Տես 'ի Պաս մր։

ԴԱՍ ԺԴ

Ձեք նմանութեան, այլաբանութեան, և փոխաբերութեան:

Հ. Տուր ինձ օրինակս նմանութեան քերթողականս.

Պ. Ի Շարականէ. «Եւ զխակունք «սուրբ մանկանցն իբրև զծաղիկս նորանենեաց հարեալ 'ի կարկտէ, և անկեալ «'ի սուրբ Բեթղեհէմ. և հոգիք սուրբ «մանկանցն որպէս զերամս աղաւնեաց «թռուցեալք 'ի յերկինս, և դասեալ ընդ «զուարթունս երկնից»:

Ի Շնորհալւոյն.

«Ես ոչ եմ վէմ յեզր 'ի ծովին,
Որ 'ի յալեացն անշարժ պահին.
Եւ ոչ արմատ ծառոց խորին,
Որ 'ի հողմոց ոչ տապալին.
Այլ եմ նըման բեկեալ նաւին,
Տարաբերեալ միջածովին.
Կամ հողմահար խըռիւ խոտին
Ի ժամանակս աշնանային»:

Եւ յՈսկանէ.

«Որպէս մըռայլ մըրրիկք աշնան
Շղթայաձերծ 'ի դուրս սուրան,
Յերկուց լերանց հանդիպակաց

Խորոխտ գըրընդմամբ խառնին յիրեարս.
Սապէս երկու այն դիւցազունք
Ցոլոր պատին զերթ գալարունք։
Եւ որպէս ուխք կըրկին պըղտոր
Բարձր 'ի ժայռից գըլէն 'ի գլոր,
Բախին յիրեար՝ ժայթքեն փըրփուր,
Ի մի ձուլեալ վազեն 'ի դիւր,
Մեծ դըղրդմամբ առ 'ի թաւալ
Ծածկեն ըզմարգ մանուածաւալ.
Այապէս 'ի կռիւ աշեղասաստ
Մըրըրկալից և ստուերամածք
Ինիսֆէլա ւ արին Լօքլին
Ահեղ գոռմամբ 'ի դաշտ իջին։ . .
Որպէս գոչէ մեծ ովկիան
Երբ թաւալէ զալեաց խուժան,
Որպէս ճայթէ շանթ 'ի յերկնէ,
Նոյն էր բոմբիւն յայնըմ մարտէ »։

Եւ յումեմնէ յարդի քերթողաց 'ի վեր-ջարանի ճարտար եղերերգութեանն 'ի մահ սոխակին.

« Աչք գեղեցիկ ցօղազին,
Լացէք ըզմահ սոխակին.
Աչք լուսալիր աստեղաց,
Ըզսոխակին հարէք լաց։
Նըման եղև սոխակին
Որ սըրսկապանքն աւարին.
Անգութ սըրտիւ և ափով
Հովուին մանուկ առ մեղմով։

Որս 'ի բերան մայրըն գայ ,
Ոչ տուն գտանէ , ոչ տըղայ ,
Աւարառուն զամենայն
Տարաւ , եթող զինքն ունայն ։
Մխոք լուր 'ի սիրտըն բորբոք ,
Գուլթ որդեկայն 'ի մորմոք ,
Բուստ զոր եբեր ըստընտու
Ըզկնի որդւոյն ընկենու ,
Երթայ մըտէ 'ի խաւար ,
Ողբոց առնու ձիչ երկար ։
Այսպէս 'ի հետ սոխակիս
Զըգեմ և ես ըզգործիս
Ի վիհ խըրթնի գըժոխոյ ,
Ոչ բըժըշկի սըրտիս խոց ·
Աչք շողշողուն աստեղաց ,
Ըզսոխակին առէք լաց ·
Աչք գեղեցիկ ցօղագին ,
Լացէք ըզմահ սոխակին ·
Լացէք լացէք սուրբ մանկտի
Եւ օրիորդք նազելի » ։

Հ. Տո՛ւր ինձ օրինակս այլաբանութեան քերթողականս ·

Պ. Եսայի (գլ. ե.) գեղեցիկ յոյժ այլաբանէ զպալուստ փրկչին անձայն և առանց աղմկի 'ի մեղմիկ և 'ի թեթև ընթացս մանկան՝ ընդ որոյ ոտիւք եղէգն ջաղխջախ կայ անբեկ, և նուաղ բոց պատրուկի անշէջ · « Զեղէգն ջաղխջախեալ

« մի՛ բեկցէ, և զպատրոյկն առկայծեալ
« մի՛ շիջուսցէ »։
Եւ Կոմիտաս կաթողիկոս այսպէս այլա-
բանէ զՀռիփսիմեանց.

« Պէկավարքք Ճորտալք, հոգևոր հրմ-
տութեամբ
Թեթևաբերըն մարմնով և մտօք սը-
լացեալք
Ընդ երկայն ասպարէզ ծովածուփ կեն-
ցաղոյս,
Անվընաս նաւեցիք և հասիք առ
Քրիստոս »։

Օրինակ 'ի Շնորհալւոյն.

« Նոր ծաղիկ պայծառ ցուցաւ
Այսօր 'ի նոր գերեզմանէն.
Երփնազարդ հոգւոյըն տունկ
Կանաչազան կենդանութեամբ.
Բենական լուսոյ սաղարթք
Ի հոգևոր դարնան փըթթեալք։

Մեծ է և այլաբանութիւն առաջ օրհնու-
թեանցն դարձեալ 'ի շարականի. « Ձիա-
« ւորեալ ոչ միայն 'ի վերայ բուսաբեր ար-
« մատոյն, այլ քրոբէական կառօքն սառ-
« իջեալ 'ի դժոխս՝ կենդանարծեաց հզօ-
« րեղապէս զերամս արդարոց »։ Որ
Հիւսուրեն 'ի վերայ բուսաբեր արմա-
տոյն՝ այլաբանէ զելանելն Քրիստոսի 'ի
խաչ, որ և յայլ կանոնս առաջ օրհնու-

թեանցն այլաբանի այսպէս. « Հեծելու-
« թեամբք քով ազատեցեր զգերեալսն։
« Հեծելութիւնդ քո փրկութիւն եղև ա-
« զանց. յելանելն քո 'ի կառս, զուարճա-
« ցան արարածք »։ Նա է աղբիւր այսո-
ցիկ ամենայնի այլաբանութիւն Ամբակու-
մայ, ուր ասի. « Միթէ գետո՞ց բարկաս-
« ցիս տէր, կամ սրտմտութիւն քո 'ի վե-
« րայ գետո՞ց, կամ ասպատակք քո 'ի վե-
« րայ ծովո՞ւ. զի ելցես յերիվարս քո, և
« հեծելութիւն քո փրկութիւն է »։

Հ. Տուր ինձ օրինակս փոխաբերու-
թեան.

Պ. Վիրգիլ և Ովրատ փոխանակ ասե-
լոյ յենուլ զորթ 'ի ծառս, փոխաբերու-
թեամբ ասեն ամուսնացուցանել կամ հարս-
նացուցանել զորթ ծառոյ. զոր օրինակ,

« Զաձումնաձիգ այգին ուռոյն 'ի ձա-
պաղ,
Մերթ հարսնածէ առ բարձրուղէշ
կաղամախ »։ ՈՎՐԱՏ. ՎԵՐԵՐԳ. Բ։

Նոյն ինքն Ովրատիոս (Տաղերգ. Բ. ԺԵ.) ԱՅՐԻ կոչէ փոխաբերաբար զծառս, 'ի ցամաքել որթոցն յեցելոց 'ի նոսա.

« Նա մերթ այրեաց ծառոց կրցորդ
Տընկագործէ առընթեր զորթ »։

Նա այլ ուրեք (Տաղերգ. Բ. ԺԵ.) ԱՄՈՒՐԻ

կոչէ զծառ, առ որում չեւ են տնկեալ որթք.

« Սօսն 'ի բաց ամուրի
Հալածէ ըզկընձնի ».

ԴԱՍ ԺԵ

Ձեւք խելամտութեան, դիմառնութեան, բացադարձութեան, անիծից, կրկնութեան, եւ անուանաստեղծութեան:

Հ. Տո՛ւր ինձ օրինակս խելամտութեան քերթողականս.

Պ. Սաղմոսերգուն (Սղմ. ԼԵ.) զմասն փոխանակ բոլորին առեալ, ասէ. « Մի՛
« եկեսցէ 'ի վերայ մեր ոտն ամբարտաւա-
« նից, եւ ձեռք մեղաւորաց մի՛ դողացուս-
« ցեն զմեզ »:

Նոյն խելամտութեան ձեւով եւ քերթողահայրն մեր զբառս նոյն 'ի կիր արկանէ փոխանակ նախամօրն. « Քանզի կողին
« վիրաւորեալ նախահայրն, 'ի քո յանա-
« րատ 'ի կողդ ընկալար զխոցումն գե-
« ղարդեանն »:

Նաեւ Կոմիտաս կաթողիկոս զտեղի փոխանակ բնակչացն առեալ, երգէ.

« Արեւմուտք յարեւելս ընթացեալք հասին,

« Կարօղել յայտնապէս ըղձըքնաղ տե-
սութիւն »։

Ուր տրնձուպ նշանակէ զընակիչս արե-
մտից ։

Ընդ հակառակն Շնորհալին զպարու-
նակեալն փոխանակ պարունակողին ա-
ռեալ, երգէ (Տաղ. 383.)

« Խոր խաւարին սաստէր Յիսուս լու-
սով խաչին,
Խընդիր առնէր իւր ծառայիցն անդ
գերելոց »։

Ուր խոր խաւար նշանակէ զդժոխս ։

Եւ Վերգիլէոս սովին ձեւով զգործ փոխա-
նակ պատճառի առեալ, զերկայնել սուսե-
րաց եւ զծխել հիւղից դեղջէիցն 'ի կիր
արկանէ փոխանակ տարաժամելոյ աւուրն։
(Ծաղկաքաղ ա̃. 83.)

Հ. Տուր ինձ օրինակս դիմառնութեան
քերթողականս .

Պ. Իմաստունն փոխանակ ասելոյ՝ թէ
հուրն ոչ եւս այրէր, ասէ. « Երբեմն
« ընտանենայր բոցն, զի մի այրիցէ »։
Եւ Եսայի փոխանակ ասելոյ՝ թէ մի եւս
զօրք թագաւորին բաբելացւոց հատցեն
զանտառս Լիբանանու՝ հորդան տալ ընդ
այն, ասէ . « փայտքն Լիբանանու ստնհար
« եղեն քեզ, եւ մայրքն Լիբանանու ասեն՝
« թէ յորմէ հետէ դու դադարեցեր, ոչ

« ելին 'ի մեզ փայտահարք » :
Դիմառնական ձև է և Ամբակումայ ասելն ցանէր. « Զարթեաւ աղեղն քո. զնետս « կապարճից քոց արբեցուցեր » :
Եւ Դեբովրայ ասելն. « Յերկնից ճակատեցան աստեղք, յիւրաքանչիւր յօրինուածոց եառւն պատերազմ ընդ Սիսարայ. հեղեղատն Կիսոնի մերժեաց « զնոսա : »

Հ. Տուր ինձ օրինակս բացադարձութեան քերթողականս.

Պ. Երեմիա (գլ. խե.) այսպիսի առնէ բացադարձութիւն առ սուր վրէժխնդրութեան տեառն. « Մինչև յե՞րբ կոտորեսցես սուրդ տեառն, դարձի՛ր 'ի պատեանըս քո, դադարեա և վերացի՛ր » :
Եւ Յոբ (գլ. ժզ.) առ 'ի ցուցանել զաղետալի վէրս իւր, նովին ձևով առ երկիր բարբառի. « Երկիր, մի՛ ծածկեր զարիւն « մարմնոյ իմոյ » :
Եւ սաղմոսերգուն (Սղմ. ճժզ.) այսպիսի յօրինէ բացադարձութիւն առ ծովն Կարմիր բաժանեալ, և առ Յորդանան գետ նահանջեալ. « Զի՞ է քեզ ծով, զի՞ տեսեր « և փախեար. կամ դու Յորդանան, զի՞ « դարձար անդրէն » :

Հ. Տուր ինձ օրինակս անիծից քերթողականս.

Գ. « Լերինք Գեղբուայ, մի՛ իջցէ 'ի
« ձեզ ցօղ, և մի՛ եկեսցէ 'ի վերայ ձեր ան-
« ձրև՝ անդաստանք պտղոց, զի անդ ա-
« պականեցաւ վահան զօրաւորաց »:
(Բ. Թագ. Ա:)
« Եթէ մոռացայց զքեզ Երուսաղէմ, մո-
« ռասցի զիս աջ իմ »: (Սղմ. ՃԼԶ:)
« Եթէ հեծեաց երբէք երկիր վասն իմ,
« եթէ ակօսք նորա լացին առհասարակ,
« և եթէ զզօրութիւն նորա կերայ միայն
« առանց գնոց.., ապա փոխանակ ցորե-
« նոյ բուսցի եղինճ, և փոխանակ գարւոյ
« մորենի »: Յոբ. ԼԱ. 40.

Վսեմ է և ուրումն յարգի քերթողաց
մերոց յողբսն 'ի մահ Ներսէսի Մեծի ան-
ծանել զգալիչ մահադեղոյն.

« Երկիր, շնչոյ կենդանութեան մայր
դայեակ,
Սոկրատայ միշտ ծնանիս 'ի քէն դեղ
վրիժակ:
Ո՛յ զիւաքախ գըլուխ և սիրտ մահա-
ցուի,
Որ առաջին ցուցեր ըզթոյն աշխարհի.
Եթէ քո չէր շնչեալ ըզսիւք եթերաց,
Ներսէս այժմիկ շնչէր և տայր շունչ
կենաց.
Դու, դու եղծեր զպատկերըն զայն
վայելուչ,

Որբացուցեր զազգն 'ի հօրէն անտե֊
րունչ։
Խաւարեսցին բիբք աչացս, ա՜հ, մի՛
տեսցեն
Զայս աններշոյլ կափոյց աչաց յարևէն.
Մի՛ զայն երես մահու դեղին և կա֊
պոյտ,
Կարմիր վարդից փառեալ երբեմն ե֊
րևոյթ »։

Հ. Տո՛ւր ինձ օրինակս կրկնութեան քերթողականս.

Պ. Կրկնութիւնք յաճախագոյն վարին 'ի քերթութիւնս, և յաւելուն շուք մեծ թէ 'ի տաղաչափութիւնն նիւթական և թէ յիմաստն և 'ի բացատրել զկիրս հոգւոյ։

Այսպէս ողբայ Դաւիթ զորդեակն իւր. (Բ. Թագ. ԺԹ.) « Որդեա՛կ իմ Աբեսողոմ,
« Աբեսողոմ որդեակ իմ. ո՞ տայր զմահ
« իմ փոխանակ քո. ես փոխանակ քո,
« Աբեսողոմ որդեակ իմ, որդեակ իմ
« Աբեսողոմ։ »

Դարձեալ նոյն ինքն 'ի սաղմոսն (ՀԶ.) երգէ. « Տեսին զքեզ ջուրք Աստուած,
« տեսին զքեզ ջուրք և երկեան »։ Եւ 'ի գիրս Յուդիթայ (գլ. ԺԶ.) « Եկն Ասուր
« 'ի լերանցն հիւսիսոյ, եկն 'ի բիւրաւորս
« զօրօք իւրովք »։

Մովսէս յօրհնութեանն. «Մինչև անցցէ
« ժողովուրդ քո տէր, մինչև անցցէ ժողո-
« վուրդ քո այս՝ զոր ստացար »։
Եւ Դեբովրա յօրհնութեանն. «Կապուտ
« երանգոցն Սիսարայ, կա՛պուտ երան-
« գոցն գունագոյն նկարուց, այն էր պա-
« րանոցին նորա կապուտ »։
Ի մերոցս քերթողաց Ճարտար է 'ի ձևս
այս Նարեկացին. զոր օրինակ

« Երփին երփնունակ ծաղկին
Շողշողէր պլտուղն 'ի Ճղին.
Շուշանն շողէր յոստին
Շողշողէր դէմ արեգական.
Շուշանն շաղով լցեալ
Շող շաղով և շար մարգարտով »։

Եւ դարձեալ.

« Եւս ձայն զառիւծուն ասեմ,
Որ գոչէր 'ի քառաթևին.
Ի քառաթևին գոչէր,
Ձայն առնէր 'ի սանդարամետսն »։

Եւ այս ամենայն կրկնութիւնք, որպէս է տեսանել յօրինակդ, մերթ զգեղ միայն յօրինեն, մերթ յաճախեն զազդուութիւն, և է զի կարի քաջ բացատրեն զկիրս։
Յոյժ վայելուչ բազում ուրեք զձևս զայս 'ի կիր արկանէ Վիրգիլիոս, մանաւանդ յԵնէականն և 'ի հովուականսն, յորոց քանի մի ածցուք 'ի մէջ յօրինակ. թէ-

պէտ և անհնար է զնոյն գեղ բնագրին պահել 'ի թարգմանութեան այսպիսի ձևոց։

Կրկնութիւնք՝ որք պերճ յօրինեն զբանն.

« Եւ չքնաղագեղն ընդհետ գայր Ռո-
տուր ,
Ռոտուր քաջաձին ». Ենէական . Ժ. 118։

« Գեղածաղիկք երկաքանչիւրն իսկ տիօք,
Երկաքանչիւր արկադացիք հայրենեօք».
Ծաղկաքաղ Է։

Կրկնութիւնք՝ որք տան զազդուութիւն .

« Եւ ինքն ինձ Պան թէ յատենի կաց-
ցէ ոսոխ յանդիման ,
Եւ ինքն իսկ Պան ընդպարտութիւն անդ
լինիցի խոստովան ». Ծաղկաքաղ. Դ։

« Զի ոչ պառնասեան ձեզ լերինք
բնաւին ,
Զի ոչ և պինդեանք խափան ինչ ար-
կին ». Ծաղկաքաղ. Ժ։

« Պատերազմ ահեղ, ահեղ պատերազմ
նշմարեմ ընդ հուպ ,
Եւ ընդՏիբերեայ 'ի յարիւն ներկեալ
կոհակացն ընդծուփ ». Են. Զ. 86։

'Նոյն ինքն Վիրգիլիոս 'ի վեցերորդ գիրս Ենէականին առ 'ի ցուցանել զի Դեդաղ չկարաց առ վշտին գրօշել զանկումն Իկարեայ որդեկին իւրոյ , կարի վայելչապէս 'ի կիր արկանէ զձևս զայս .

« Եւ դու մասըն մեծ գրաւէիր արդեօք
'ի վեհ քանդակին ,
Եթէ զայն դաւինք նըմա , Իկարէ ,
ցաւքըն թողուին .
Երկիցս 'ի յոսկւոյ ջանայաւ զարկածն
ածել 'ի նըկար ,
Երկիցս հայրենի դողդոջեալ անկան
ձեռքն անզօրք 'ի վայր » :

Կրկնութիւնք որ քաջ բացատրեն զկիրս .

« Դու միակ իմոյն Աստիանակտեայ
մնացեր ինձ պատկեր .
Այսպէս զաչս այսպէս նա զշըրթունս
այսպէս նա զձեռսըն շարժէր » .

Ենէական Գ . 489 :

« Զուր ընդ երկինս ամբառնայր զաչ-
սըն գեղափայլ,
Զաչսըն զի ձեռք նորա մատաղք կայ-
ին կապեալ » . Անդ . 405 :

« Անգիտիոյ ըզքեզ մայրիք ,
Ըզքեզ վըճիտ լիճք , և բիւրղեայ
Զքեզ փուկինեան լացին ալիք » .

Անդ . Է . 739 :

Հ . Տուր ինձ օրինակս ինչ անուանա-
ստեղծութեան քերթողականս .

Պ . Գեղեցիկ է Նարեկացւոյն մերոյ
գիւտն 'ի բացատրել զձայն անուոց սայ-
լին .

« Ի գիլ գայր 'ի գիլ սայլիկն 'ի գիլ
Ի Մասեաց յաջ կողմանէն,
Սայլիկն 'ի գիլ գայր 'ի գիլ,
Ճռընչալով գայր մըտանէր յԵրուսաղէմ »:

Եւ ուրումն յարգի քերթողաց մերոց 'ի նկարագրել զհովիւ քաջ.

« Ինքն 'ի սոյլ սուր սըրընգի
Մարգ 'ի ծործորս կարկաջուն
Դոյլթ տայ սպիտակ իւր խաշին
Եւ մակաղէ միշտ արթուն »:

Որ և 'ի ցուցանել զյօրինուած հայկական բարբառոյս՝ խիտ առ խիտ բաղաձայն տառիւք, տես քանի՛ գեղեցիկ նմանութեամբ զձայնս նոցին բացատրէ.

« Բարբառ Հայկին Երամայ
Գոռ կաքաւչաց Երիսի
Ի դաշտ ռազմից խաղմարար
Հընչէ նուագ սոսկալի.
Եւ խիտ առ խիտ լուռ վաշտից
Բաղխէ գուպար 'ի բանակ,
Կոփէ մըկունդ ընդ ասպար
Դոփիւն ոտին ընդ սըմբակ »:

ԴԱՍ ԺԶ

Չափազանցութեան ձև, և տեսութիւն 'ի ձևս քերթողականս առ հասարակ ։

Հ. Տուր ինձ և օրինակս ինչ չափազանցութեան քերթողականս ·

Պ. Չափազանցութիւն 'ի բանաստեղծութեան վարի յաճախ, ոչ միայն ըստ իմաստից, այլ և յօրինակս և 'ի նմանութիւնս ։ Ըստ այսմ օրինակի բացատրէ Հոմերոս զզօրութիւն Արամազդայ · (Իղիական · Ը̅ · 18 ։)

« Հա՛պա 'ի հանդէս օ՛ն արիք ո՛վ դիք
'ի փորձ ձեզ հանուրց ,
Շղթայ ոսկեձոյլ առեալ կախեսջիք
'ի վայր 'ի յերկնուստ ·
Բուռն 'ի նա արկէք աստուածք համօրամ և աստուածուհիք ·
Այլ ոչ ինչ բընաւ , թէպէտ գուն
սաստիկ եդեալ նկրտիք ,
Զհանճարեղն Որմիզդ յերկնից ընդ
երկիր բաւեսջիք դլորդել ·
Իսկ թէ ես ինձէն յօժարեալ երբէք
կամիցիմ քարշել ,
Զերկիր գըլխովին և զծով միալուծ
ձիգ ընդ քարշ ածեմ ·

Ապա ըզշողթայն յՈղիմպեայ կատար
ոլորեալ պըրկեմ ,
Եւ այն ամենայն օդայլին եղեալ կախի
երկնաբերձ .
Այսքան վեհագոյն եմ դից և մարդկան
և բնաւին տարերց » ։

Եւ ոմն ՚ի քաջացն մերոց արդի քեր֊թողաց ՚ի գովեստ խաշնդեղին յաւելեալ ՚ի բանս իւր՝ ասէ .

« Շէկ արմատդ անմահութեան առհա֊
ւատչեայ
Զուլամբ խաշին որ ՚ի Կարէզ ձեմ գընայ
Բուրազուարձ զանդեալ հովտաց ծաղ֊
կանց ՚ի բոյլ
Քան շար ոսկի տայ նըշոյլ .
Թոյր ևեթ բերեալ զոսկւոյն խարտե֊
շագեղ ,
Այլով չէ հուպ ՚ի նըզովեալ հող գունեղ.
Այլ աւաղ , նա ախրեալ էր , դու ան֊
ծանօթ .
Յամր է բարին գալ յանօթ ։
Թէ խոհեր ժանտին փոխան էր սա ՚ի
գիւտ ,
Ոչ Մեդեայ ձեռք մահ յօրինէր չարա֊
գիւթ ,
ԶՆշխոն ոչ Սպարտուհին գօշտա
այրէր ,
Եւ ոչ մեզ մի գոյր Հոմեր » ։

Ջուրք և եկք, զի զարմանայք թէ յիմ
աշխարհ
Ջուր գեղեցկին իբրև զատեղս է 'ի
պար ·
Կենաց բղյան առողջութեան ընծա
սիրեաց ,
Ընդ է Կարէզ Բզնունեաց »։

Հ. Զինչ կարևորագոյն յօրինակս յայսոսիկ քերթողական ձևոյ առ հասարակ իցէ նկատելի ·

Պ. Զայն զի առ 'ի լինել քաջ քերթող՝ հարկ է լինել քաջ ճարտասան · քանզի ուր սա կատարէ, անտի սկսանի քերթողն, և 'ի նորայն զիւրն յաւելու ։ Զի պարտ է բանաստեղծին ոչ միայն զձևս զայսոսիկ հռետորականս և զայլն ամենայն զբառից և զիմաստից յօրինել քերթողաբար, այլ և զմասունս հռետորական ճառից, և զհասարակ տեղիս, և զդոյգս կրից, այլովքն հանդերձ։ Օրինակ իմն՝ յիղիականն Հոմերի Քրիսէս քուրմ Ապողոնի 'ի խնդրել զդուստր իւր գերեալ յաքայեցւոց, համառօտ ինչ առնէ աղերս · բայց 'ի նմա քերթողն բովանդակէ զամենայն հնարս հռետորականս 'ի համոզել։ Նախ յանդիման առնէ զքուրմն սպասուք պաշտամանն՝ առ 'ի պատկառելի առնել զնա, և ընծայիւք՝ առ որսալոյ զսիրտ

աքայեցւոց․ ապա դնէ 'ի բերան նորա մաղ-թանս հասանելոյ նոցա ցանկալւոյն իւր-եանց, այսինքն առնլոյ զՏրովադա և դառ-նալոյ ողջամբ 'ի հայրենիսն, և յաւելու մե-ծարանաց բանս առ 'ի յորդոր․ ապա ղա-ղերսն առաջի արարեալ կնքէ ահիւ սպառ-նալեաց ածոյն՝ եթէ չլսիցեն քրմի նորա ։

« Քանզի Քրիսէս 'ի գրաւաթափ դըս-
տերն իւր,
Աղերսաւոր գայր ընդ փըրկանս բազ-
մաքիւր․
Եւ զգիպաղեղն Ապողոնի վարսակալ
Գաւազանաւն ոսկւով 'ի ձեռըն կա-
լեալ,
Աքայեցւոցն յերագաթև նաւատորմ
Եւ իշխանացն Ատրորդւոց ձայն տայր
ողորմ․
Ո՛ Ատրորդիք, տացեն աստուածքն երկ-
նաբնակք
ԸզՊրիամու առնուլ մարտիւ ձեզ քա-
ղաք,
Եւ գնալ ողջամբ 'ի հայրենիս ձեր
անդրէն,
Աքայեցիքդ 'ի գարշապարքաջագէն ։
Այլ դարձուցէք ինձ փըրկանաւ զիմ
դըստրիկ
Ի քաջաղեղն որդւոյն Դիայ ակն ած-
ջիք »․

ԴԱՍ ԺԻ. (*)

Հովուաբանութիւն. — Քնարերգութիւն. — Անակրէոնեան տաղ. — Արձանագրութիւն. — Դամբանագիր. — Նուագ:

Հ. Տուր ինձ համառօտիւ տեղեկութիւն զազգի ազգի քերթուածոց. զի՞նչ է հովուաբանութիւն:

Պ. Հովուական կենաց և դաշտային գեղեցկութեանց քերթողաբար նկարագրութիւն: Ախորժելի է յոյժ քերթուածս, այնու զի զնկարագիրս հովուաց և զմշակաց և զգեղջկաց` զորս զանմեղ և զանխռով կեանս նկարագրէ 'ի նմա քերթողն` բաղդատել մեր ընդ քաղաքականին, զուարճանամք:

Բայց երբակի զհովուականն մարթ է նկատել կենցաղ. մի` որպէս այժմեանս գծուծ և արհամարհ. երկրորդ` որպէս նախնեացն

* Ի վարժս յայսոսիկ, որ յաղագս ազգի ազգի քերթուածոց, բազում ինչ 'ի կիրառնում 'ի դասոց` նորա Հ. Գէորգեայ Վարդապետի Հիւրմիւզեան 'ի հրահանգս ճանկաւոյ 'ի վարժապետէին իւրում յօրինեալ է:

բարեկեցիկ և զուարձալի, զի ամենայն մեծութիւնք յայնժամ էին 'ի հօտս և յանդեայս. և երրորդ՝ մտացածին իմն ընդ նախնի պարզութեան և անմեղութեան կցորդեալ այժմու կիրթ ախորժակք և բարեձև տարազ կենաց: Ի սոցանէ առաջինն կարի իմն խիստ է և անախորժ, իսկ երրորդն անբնական. վասն որոյ Թէոկրիտոս ուրեք ուրեք առաջնոյն սողտանի, իսկ գաղղիացիք երրորդաւս: Այս պարտ է վարել միջնովն կարելեաւ և բնականաւ. ածելով 'ի ներքս 'ի քերթուածն հովիւս հեզաբարոյս, զուարթս և սիրելիս, և ոչ բիրտս և անհեթեթս, և խօսակիցս զնոսա առնել ընդ միմեանս, և վիշտս և կիրս յաւելուլ 'ի նոսա առանց ատելի առնելոյ զհովուականն կենցաղ:

Նկարագրութիւնք դաշտային և շինական տեսարանաց անհրաժեշտ կարևորք են 'ի սմա: Այլ այս ծաղկանց ևեթ անուամբք, կամ քաղցրաշունչ օդոց յիշատակաւ, կամ 'ի շրջիւն տերևոց, կամ առուաց կարկաջանօք, կամ թռչնոց երգովք ոչ վճարի. պարտ է քաջի քերթողին այնպէս 'ի մանունս իջանել հանգամանս, մինչև մարթել նկարչի հանել զայն 'ի նկար: Քանզի յաճախ ուրեք հանգամանք ինչ ևեթ պատշաճապէս 'ի ներքս ածեալ,

կենդանատիպ զնկարագիրն գործեն, որ֊
պէս Վիրգիլիոս բազում ուրեք 'ի հո֊
վուերգութիւնսն առնէ . զի

« Ալիք համայն , ոչ տեսանես, այժմ
  հանդարտեալ քեզ լռեն,
Եւ սաստկաշունչ դադարեալ կան հող֊
  մոյ հընչմունք համօրէն .
Ի դէմ եղեալ ուղւոյն 'ի կէս աստ ա֊
  ւասիկ եմք ժամուն ,
Բիանորայ աստի հազիւ արդ նըշմարի
  գերեզման .
Աստ, ուր մըշակք ըղ թանձրախիտ սա֊
  ղարթս 'ի բաց յապաւեն,
Աստ, ո՛վ Մերիս, եկ երգեսցուք. զխաշն
  'ի ճարակ թո՛ղ աստէն ։» Տաղ․ Թ․ 57։

Պարտ է դարձեալ ըստ առաջարկութեան
քերթուածոյն պատշաճել զտեսարանս, ու֊
րախական ընդ ուրախալիս , և տրտմական
ընդ տրտմալիս . որպէս նոյն ինքն դար֊
ձեալ Վիրգիլիոս առ 'ի բացատրել զտըրտ֊
մութիւն Կորիդոնի 'ի խնդիր Աղեքսեայ
նկարագրէ .

« Այլ թաւամուր նա 'ի սօսխս անդր յա֊
  ճախէր ,
Ոյց գագաթունք ամբառնային նըրսեմա֊
  սատուեր .
Եւ առ լերինս և առ անտառս 'ի ձիգն
  ընդ վայր

«Զայս մենաւոր հեզոյր բողոքյերգ անյարգար»: Ծաղկաքաղ. Է. 3:

Հովուքն կամ գեղջէք 'ի ներքս մուծեալք թէպէտ և պարզամիտք պարտին գոլ և անմեղք, այլ մարթ իսկ է նոցա հանճարեղս գոլ և ուշիմս, աշխոյժս, զուարթս, դիւրագորովս. և քերթուածեան պարտ է ըստ կարի պարզ լինել և անսեթեեթ, և դէպք 'ի նմա հոգեշարժք ուրախալիք և տրտմալիք վայելուչ յոյժ և զմայլելի գործեն զքերթուածն:

Դէպքս այսորիկ առ բազումս 'ի քերթողաց ցուրտք են և անախորժք, որպէս ողբք և զանգատք հովուի զսիրուհւոյն, կամ հովուաց ընդ միմեանս մրցութիւն յերգս, և այլ ևս սոյին սակի դէպք առանց հանճարոյ: Բայց Գեսներ քերթող հելուետացի եբաց ասպարէզ նոր յայս ազգ քերթուածեան, մուծանելով անդր դէպս բարոյուցականս՝ որգորովեն զսիրտ: Իսկ իտալացիք և ևս յառաջադէմ լեալ, զթատերականն հնարեցան հովուերգութիւն. յորում կարգի հռչակաւոր են յոյժ հաւատարիմ հովիւն Գուարինեայ, և Ամինտայն Թասսոյի:

Բայց Թէոկրիտոս 'ի Յունաց և Վիրգիլիոս 'ի Հռոմայեցւոց օրինակագիրք կացին յայս ազգ քերթուածեան, առաջնոյն

յարքունիս Պտղոմեայ եղբայրասիրի, և երկրորդին 'ի գրան Օգոստեայ կայսեր գրեալ զքերթուածն ։

Հ. Զի՞նչ է քնարերգական քերթութիւն ։

Պ. Այն՝ զոր քնարաւ կամ այլովք նուագարանօք մարթ է երգել. և կոչի սա տաղ կամ գանձ. և քառեակ ազգք են սորա ։

Ա. Օրհնութիւնք կամ սրբազան երգք որպիսիք են Մովսիսին, Դեբովրայն, Եզեկիէլին, և սաղմոսք Դաւթի ։

Բ. Երգք կամ տաղք ներբողականք, որպէս Պինդարեանքն առ հասարակ, և կէսք յՈվրատեանցն, և բազումք 'ի շարականաց մերոց ։

Երկոցունց այսոցիկ ազգաց քնարերգութեան սեփական տիպք են վսեմութիւն, որպէս է տեսանել յօրհնութիւնն Մովսեսի. զի անդստին 'ի նախերգանացն լի զարմացմամբ և գոհութեամբ ընդ սքանչելի ազատութիւնն յորդորէ զժողովուրդն յօրհնել զազատարարն՝ այսպէս սկիզբն առնելով երգոյն, « Օրհնեսցուք զտէր, « զի փառօք է փառաւորեալ. զերիվարս և « զհեծեալս նոցա ընկէց 'ի ծով »։ Եւ ապա համեմատ նախերգանացն մերթ առ ժողովուրդն և մերթ առ Աստուած ուղղելով զդէմս բանին, առանց պատմու-

թեան բայարէ զամենայն հանգամանս սքանչելեացն վսեմաբար, լի վեհ իմաստիւք և ձեւովք յօրինեալ զերգն. որպիսիք են տեառն խորտակել զպատերազմունս, խորոց ծածկել զընտիրս հեծելոց փարաւոնի և զսպառազէնս, ընկլնուլ նոցա յանդունդս իբրև զվէմս, և սոյին սակի ձեւք և իմաստք: Հանգոյն իմն և Դեբովրա վսեմաբար սկիզբն առնէ երգոյն. «Ի «սկսանել զօրավարացն Իսրայելի, մտա«դիւրութեամբ ժողովրդեանն օրհնեցէք «զտէր»: Նուապա ընդ ամենայն երգն սփռէ իմաստս և ձեւս վեհս և վսեմս. երկրի շարժել յերեսաց տեառն, երկնից խռովել, ամպոց ցօղել ջուր, և լերանց շարժել, յերկնից ճակատել աստեղաց և յիւրաքանչիւր յօրինուածոց տալ պատերազմ ընդ Սիսարայ, հեղեղատին Կիսոնի մերժել զթշնամիս, կարթակոտոր լինել զարշապարաց երիվարացն Սադդարովթայ, ձգել Յայելի զձեռն իւր ձախ 'ի ցիցն, և զաջ իւր 'ի սպառասպուռ ջաղխջախանս, և վարսել ընդ ծամելիս Սիսարայ և անցուցանել ցից ընդ գլուխ նորա. մօրն Սիսարայ հայեցեալ դէտակն ունել 'ի վանդակապատ պատուհանէն և տեսանել զդարձեալսն 'ի Սիսարայ, և յետնիլ կառաց նորա 'ի գալոյ, և մօրն վարանել

թէ ընդէ՞ր յամեցին հետք կառացն նորա, և կանանց իմաստնոց տալ նմա պատասխանի, և նորա ինքնին անձամբ անձին առնել իւր պատասխանի. և աւարտ երգոյն՝ թէ « Այսպէս կորիցեն ամենայն թշնա֊ « միք քո տէր: » Այս ամենայն տան ըստ բաւականին զնկարագիր վսեմութեանն՝ որ խնդրի յերկուսին վերոյ ասացեալ ազգս քնարերգութեան:

Գ. Երրորդ ազգ՝ բարոյական և իմաստասիրական տաղք, յորս ներքողին առաքինութիւնք, որպէս յոլովք 'ի տաղից Ովրատեայ և քաջաց արդի քերթողաց: Սոցա տեսք բանիցն ոչ իբրև զառաջնոյն պարտին գոլ վսեմք, այլ միջին իմն և յորդորական:

Դ. Իսկ չորրորդ ազգ՝ տաղք կամ երգք հանդիսից և խնջոյից առ 'ի զուարճութիւն ևեթ քերթեալք, որպէս Անակրէոնի տաղք, և Ովրատեայ սակաւք, և բազմաց յարդի քերթողաց տաղք: Եւ սոցա սեփական տեսք են պերճութիւն, քաղցրութիւն և զուարճալի իմաստք և ձևք: Քանզի քնարերգութիւն զամենայն այլ և այլ գեղեցկութիւնս ազգի ազգի քերթութեանց յինքն ժողովեալ, 'ի վերայ այնոցիկ և զիւրն յաւելու յատուկ նկարագիր՝ որ են խանդք: Որ իբրև ազդի 'ի քերթողն՝ ջերմանան միտքն, վառին ցնորքն, և ա֊

միայն զօրութիւնք հոգւոյն զարթուցեալ՝ օժանդակեն՝ ի քաջ քերթողութիւն: Մերթ իմաստք ազնուականք և պերճք, և մերթ խանդաղատելի և վայելուչ պատկերք ընդ առաջ լինին. իմաստք բարոյականք վսեմք, վէպք քաջայարմարք, և գրուագք գեղեցկագոյնք յոյժ տան զնիւթ քերթութեան : Բայց թէպէտ և ազատութիւն է քերթողին 'ի սմա յիմաստից յիմաստս վազս առեալ անցանելոյ առաւել քան յայլ ամենայն քերթուածս, սակայն ոչ առանց իրիք կցորդութեան. ապա թէ ոչ, զառանցելոց բանք թուեսցին քան առն խոհականի :

Պինդարոս, քնարերգակ քերթութեան հայր 'ի Յոյնս, զոմանս 'ի հետևողաց իւրոց զառածեցոյց յայս թերութիւն : Բայց Ովրատիոս հռոմայեցի զպինդարեան թռիչս մտաց չափաւորեալ, գիտաց զկցորդութիւն իմաստից ընդ վսեմ գեղեցկութիւնս լծորդել. նմին իրի և պատուեցաւ նա, և պատուեսցի միշտ առ կիրթ ախորժակս : Բազումք եղեն հետևողք սորա անուանիք առ գաղղիացիս և առ անգղիացիս իսկ, որոց տաղք մարթին օգնել յոյժ լեզուագիտաց : Այլ առ մեզ իսկ ոչ պակասեն զարդիս հետևողք տաղիցն Պինդարեայ և Ովրատեայ. առ որ և վսեմու-

թիւն հայկականս բարբառոյ օգնէ ոչ սակաւ: Օրինակ իմն յարգի տաղերգուացն մերոց երգն 'ի նահատակութիւն սրբոց Վարդանանց .

« Հրաշունչ վիշապաց
Բորբոքեալ մեծ գազան ,
Խամրել ըզդրախտ քրիստոսեան .
Զանխոտոր հաւատոց
Աշխարհիս հայաստան
Յայտէ հուր լափող պարսկաղեն .
Ո՞վ արդ կացցէ կիզմանն ընդդէմ :
Արի 'ի զէն , մեծ Գրիգորէ ,
Ա՛ռ դու զասպար քո 'ի հօրէ .
Արի 'ի մարտ , տո՛ւր մեզ խրախոյս ,
Լըքելոց պարիսպ մեծայոյս .
Զարթի՛ ըզնոր Մակաբէ ,
Զվարդան 'ի քոյդ զաւակէ :
Ամբարձիր Մամիկոնեան
Զօրագլուխ հաւատոյ ,
Տո՛ւր ձայն գընդին Աստուծոյ ,
Սպառազէն քաջազանց
Վառելոց 'ի հոգւոյ ,
Դիմել առ խուժան որերոյ ,
Ու 'ի պարծանս 'ի կռիւ մարտնոյ :
Առէք խրախոյս դուք 'ի հանդէս ,
Առիւծաբար յոյս տապարէս .
Առէք խրախոյս արիապէս ,
Յաղթութիւն անշուշտ հասեալ ձեզ .

Ահա պըսակ անթառամ,
Ահա յերկնից ցօղանայ ։
Հընչեցին 'ի յերկնից
Սօսափիւնք աստեղաց
Յահ 'ի կորուստ Սատանեանց.
Ամաչեաց բելիար
Ի քանդուած կրակատանց.
Արիւն ձեր ցօղեալ նորոգեաց
Զօդ և զերկիր Ասքանազեանց ։
Փութայք ելէք պըսակաւոր,
Բարձր 'ի յեթերս խըրախաւոր.
Նստէք բազմեալ յանմահ աթոռ,
Գահակից առ սուրբ թագաւոր.
Հրեշտակք պարեն զերգըս նոր,
Օրհնել ըզտէր մեզ յորդոր ։
Ախոյեանք երկնընթացք
Արամեան աշխարհի,
Սիւնք հաստատեալ լուսարփի.
Տօնական ձեր հանդէս
Մեզ տուեալ յերաշխի,
Կանխեմք միշտ յաղերս ցնծալի,
Տուք մեզ թիկունս 'ի վտանգի ։
Օրհնեմք ըզտէր անհատական
Ի քո անուն քաջդ Վարդան.
Պըսակ 'ի մէնջ ձեզ գովութեան
Խըմբակից զօրուդ միաբան.
Յաղթողք յերկրի աններըմման,
Երկինք յաւէրժ ձեզ կայան »։

Բազում և այլ ազգք են քնարերգական տաղից, որպէս Անակրէոնեանն՝ որոյ տողք 'ի սուղ ոտից բաղկանան, և իմաստք 'ի նմա չքնաղք և գեղեցիկք պարտին գոլ՝ քան վեհք և վսեմք։ Որպէս արձանագրութիւնք և դամբանագիրք, յորս խնդրի ամենեւին ճշգութիւն՝ առանց աւելորդաց, և իմաստք 'ի նոսա վսեմք քան բազմազարդք։ Որպէս և նուագն՝ գիւտ իտալացւոց, որ յերկուց քառատողեց և յերկուց եռատող տանց բաղկանայ. յորում բառ մի աւելորդ, և իմաստ ինչ օտար յառաջարկութենէն դրուագեալ յայն՝ խանգարէ զգեղ նորա։ Չափաբերութեան ոտից նորա պարտ է գոլ անսայթաք և դիւրասահ, և յանգիցն յար և նման։ Նիւթոյն ամենեւին մի ինչ, և ոճոյն տակաւ զօրաւորագոյն, աւարտեալ յանակնկալ իմն և 'ի հանճարեղ իմաստս։ Դարձեալ և համառօտ երգք բաժակաց, և այլ այսպիսիք քնարերգականին են ազգք։

Օրինակ անակրէոնեան տաղի, երգեալ յումեմնէ յարգի քերթողաց 'ի հանդէս ուխտի երկոցունց ինքնանուէր կրօնաւորաց.

« Զոյգ տատրակ յանտառէն
Փըրկեցան յորսողէն.
Ուխտ 'ի սիրտ մընչեցին,

Ձօնի եմք փրկողին ։
Օհ իցեն անարատ,
Սաւառնեն յանապատ
Ի կարկաջ խոխոջանս
Հեղասահ վտակաց ։
Թօթափեն ըղձին թեւս,
Առնուն սուր և թեթեւս ,
Նորաբոյս պրձնեցան ,
Գեղգեղեալ գունեցան ։
Ի փրկչին թռեան տուն ,
Արժանիք սեղանոյն ։
Ո՛հ գողտրիկ անուշի ,
Թէ յուշիկ ձենձերի » ։

Օրինակ արձանագրի 'ի Մարտիաղեայ հին քերթողէ 'ի վարսավիրայ դանդաղ.

« Ըզ Օւպերկեայ մինչդեռ ըզդէմըն յարդարէր
Վարսավիրայն Եւտրապեղ շուրջ ա-ռեալ դեգեր ,
Նոր արձակէր ընդ դերծելոց մորուա-ցըն հեր » ։

Օրինակ դամբանագրի 'ի նախնեաց , ար-ձանագրեալ 'ի վերայ անկելոցն Յունաց 'ի Քերոնեայ պատերազմին.

« Որոց առեալ զէն 'ի վերայ հայրենեաց ,
Հալածեցին հըզօր բազկաւ զհէնս 'ի բաց ,
Ահեղախրոխտ 'ի ճակատու նահատակք

Զսանդարամետըս նըկատեալ յաղ-
թանակ ,
Զի մի Հելէնն ընդ խուժայնոցըն
լըծով
Կրեսցէ զգաժան ծառայութեանըն
գըսրով ,
Զնոցա կոշկոճ մարմինս յիւր ծոց ծած-
կէ աստ
Հայրենին հող. այսպէս վըճռեաց Արա-
մազդ ։
Ուղիղ գործեն դիք զամենայն և արդար.
Խուսել 'ի խիստ ճակատագրէն ոչ
է կար » ։

Օրինակ նուագի զղջական Տէպառոյի զաղ-
ղիացւոյ , երգեալ առ Հայրն երկնաւոր՝
յիշատակաւ չարչարանաց միածնին .

« Ուղիղ են տէր, և ճշմարիտ են դատաս-
տանք քո Աստուած .
Այլ դու քաւիչ գոլ ախորժես քան դա-
տաւոր մահացուաց ։
Սակայն եղեռն անօրինիս այնքան շեղ-
ջեալ բարդ 'ի բարդ ,
Զի ինձ ներել արդարութեամբ՝ քում
բարութեանդ ոչ է մարթ ։
Այո այո , լեռնահանդէտ չարիքս իմ ոչ
առնեն թոյլ
Ամենակալ ձեռինդ այլ ինչ , բայց պա-
տուհաս յիս հեղուլ .

Երանութեանս իմում դառնամ փառք
և պատիւ քո ընդդէմ,
Ողորմութիւնդ իսկ քո սպասէ զի ես
'ի սպառ կորիցեմ ։
Կատարեսցին յիս կամք քոյին, զի փառքդ
ըզնոյն պահանջեն .
Մի՛ յարտասուս իմ ողորմելի աղբերա-
ցեալ ուղխօրէն .
Որոտա, հա՛ր զիս շանթընկէց , որ ընդ-
դէմ քո առի զէն ։
Երկրպագեմ 'ի կորընչեն իմում ձեռին
քո վրիժակ .
Այլ զո՞ր յիս կէտ հարկանիցեն ահեղ
շանթից քոց սըլաքք ,
Որ Յիսուսին քո յարենէ չիցէ ծած-
կեալ այն համակ » ։

ԴԱՍ ԺԸ

Վարդապետական քերթութիւն . — Թուղթ .
— Երգիծաբանութիւն . — Առակք ։

Հ. Զի՞նչ է վարդապետական քերթու-
թիւն .

Պ. Խրատք կամ ուսմունք քերթողա-
բար աւանդեալ , նմին իրի և քան զամե-
նայն ազգս քերթութեանց օգտակար . զի
ձևով բանիցն ևեթ զանազանի 'ի բարոյ-

ական և յիմաստասիրական ճառից , և
քաղցրութեամբ տաղաչափութեան և քեր֊
թողական լեզուին՝ ախորժ և դիւրընկալ
ընծայեցուցեալ զուսմունս և զխրատս ,
և կենդանատիպ նկարագրութեամբք և
պէսպէս գեղեցիկ դրուագօք յափշտակէ
և զրաւէ զմիտս ընթերցողաց, ազդողագոյն
յարդարեալ զբանսն։ Բազում ուրեք յաս֊
տուածաշունչ գիրս գտանին առ այս օրի֊
նակք . որպէս ահա ժողովողն նկարագրու֊
թեամբ ծերութեան մարմնոյ և կորստա֊
կան կենացս և յիշատակաւ մահուն՝ այս֊
պէս քերթողաբար յորդորէ զմարդիկ յաս֊
տուածպաշտութիւն . (գլ . ժբ .) « Եւ
« յիշեա դու զայն՝ որ հաստատեացն
« զքեզ՝ յաւուրս մանկութեան քո , մինչև
« հասեալ իցեն աւուրք չարութեան, և հաս֊
« ցեն ամք՝ յորս ասասցես , ոչ են կամք
« իմ ՚ի դոսա ։ Մինչև խաւարեալ իցեն
« արեգակն և լոյս և լուսին և աստեղք, և
« դարձցին ամպք զկնի անձրևաց։ Յաւուր
« յորում շարժեսցին պահապանք տանն,
« և թիւրեսցին արք զօրութեան , և դա֊
« տարկասցին աղօրիք՝ զի նուազեցան , և
« խաւարեսցին որք տեսանեն ընդ ծակս, և
« փակեսցեն զդրունս ՚ի հրապարակս ՚ի
« տկարութենէ ձայնի աղօրւոյն . և յարի֊
« ցեն ՚ի ձայն հաւուն , և նկուն լիցին

« զստերք երգոյ , և 'ի բարձունս հայկա-
« ցին , և ապշութիւն 'ի Ճանապարհին . և
« ծաղկեսցի նշին, և թանձրասցի մարախն,
« և տարածեսցի կապարն . զի գնաց մարդ
« 'ի տուն իւր յաւիտենից, և շուրջ եղեն կո-
« ծողք 'ի հրապարակս : Մինչև կործա-
« նեալ իցէ լար արծաթոյն, և խորտակեալ
« մանեակ ոսկւոյն , և մանրեալ սափորն
« յաղբիւրն , և ընկրկեալ անիւն 'ի գուբ .
« և դարձցի հողն յերկիր՝ որպէս և էրն, և
« հոգին դարձցի առ Աստուած՝ որ ետն
« զնա » :

Արդ տես ինձ քանի՜ վսեմ և գեղեցիկ այլաբանէ յամպս և 'ի խաւարումն արեգական և լուսնի և աստեղաց զնուաղել մտաց և զգայութեանց մարդոյ . 'ի պահապանն տան զձագուկս . յարս զօրութեան զբարձս ուսից , յաղօրիս զատամունս , 'ի պատուհանս զաչս , և 'ի դրունս զշրթունս: Քանի՜ գեղեցիկ բացատրէ զանանդորր քուն ծերոյ՝ զարթնուլ նորա առէպ 'ի ձայն հաւուն , զտկարութիւն լսելեաց նորա՝ նուաղումն երգեցկաց , զկորանալ նորա՝ հայելն 'ի բարձունս, զտկարութիւնն 'ի գնալ՝ ապշութիւն 'ի Ճանապարհին , զալեւորել նորա՝ ծաղկել նշենւոյ , թանձրանալ մարախոյ և տարածանել կապարի . զմեռանել նորա՝ գնալ 'ի տուն իւր յաւի-

տենից, և շուրջ լինել կծողաց 'ի հրա-
պարակս. և զխանդարումն գործարանաց
որովք կեայն և շնչէ՝ կործանումն արծա-
թեայ լարին, խորտակել մանեկի ոսկւոյն,
մանրել սափորին յաղբերն, և ընկրկել
անուոյն 'ի գուբն:

Զայն հատուած ժողովողի 'ի խորհըր-
դական միտս առեալ Շնորհալւոյն, այս-
պէս վայելուչ տաղաչափէ, տալով զնկա-
րագիր վախճանի աշխարհիս.

« Խորասուզեալ մանկանցն 'ի յուղի
Խրատ ընծայէ սա հոգեբուղխ...
Հայել վերջին օրն և 'ի մահ,
Ու 'ի սպառնալեացն երկիւղ եահ:
Զայնըն հաւուն յոյժ դերասանձ,
Որով գայցեն մուեալքն 'ի դարձ.
Պջեալ սարսեն դըստերքն 'ի խաղ,
Ողբան տըկար ձայնիւ նըւաղ.
Ճառագայթից լուսոյն ճաճանչ,
Լուսին ուաստեղք ճեմեալ զըւարճ,
Մեծին ծագմամբ չփայլեն այլում
Մինչ փայլակէ լոյսն անպատում:
Յայնժամ թռչին 'ի կառս ամպոյ
Երգարք նըման խիտ մարախոյ:
Նըշէին ծաղկէ գուշակ գարնան,
Գունով պըճնին վըկայքն արեան:
Շըրջին կոծով կնայօղքըն դարշ,
Կապար մըղայն անկցին 'ի քարշ:

Որք 'ի բարձունս հայլին լուսոյ ,
Աշխին գողան յահեղ բոցոյ .
Չէ պիտանի արծաթըն յինչ ,
Եւ ոչ ոսկւոյն գեղ զարդարիչ :
Պարօղն անուոյ հասցէ 'ի վրէպ ,
Պատկեր եօթանց գարուցս 'ի դէպ .
Ջըրոյն կենաց սափորն 'ի մէնջ
Այն խորտակի յաղբերըն մէջ :
Սահեալ սըրբոցըն լուսավառ ,
Գնասցեն յերկինս'ի տունն անձառ » :

Բայց կատարելագոյն 'ի վարդապետա-կան բանաստեղծութեան են քերթուածք կանոնաւորք զկարևոր և զօգտակար ինչ իրաց . որպիսիք են առ Յոյնս՝ Գործք և աւուրք Եսիոդեայ , Աստեղաբաշխականքն Արատոսի . և առ Լատինս՝ քերթողական արուեստն Ովրատեայ , որ ըստ կարգա-ւորութեանն ևեթ ստգտանի . թէպէտ և այլք աղաւաղութեան գրչաց տան զայս թերութիւն . քանզի փոփոխմամբ կարգի ևեթ տողիցն բառնայ թերութիւնն : Քան-զի յայս ազգ քերթութեան կարևոր է յոյժ կարգաւորութիւն , թէպէտ և ոչ որչափ յուսումնական և 'ի ճարտասանական ճառս , այլ որչափ խնդրի առ 'ի դիւրա-հաս առնել զբանսն : Վասն որոյ մշակա-կանքն Վիրգիլեայ ամենակատար օրինակք են առ այս , յորս փայլէ կարգ սքանչելի ,

հրահանգք արուեստին ճշգրիտք , ոճ քեր֊թողական , պերճութիւն եւս և 'ի նուաստ և 'ի գուզնաքեայ իրս, կենդանատիպ նկա֊րագրութիւնք յեռեալք ըստ պատշաճի , և հրաշագան ճարտարութիւն 'ի յերիւրել զդրուագս . որպէս զսքանչելիսն լեալ 'ի մահուն Կեսարու , զներբող Խաչելոյ, այ֊լովքն համդերձ։ Քանզի այս ամենայն բառ֊նան զտաղտկութիւն հրահանգաց և զվար֊դապետական ոճոյ, և մանաւանդ դրուագ֊քն յեռեալք սփոփեն զպարապումն մտաց։ Տես ինձ զտաղտկալի հրահանգս տնկա֊բանին ո՛րպէս գեղեցիկ 'ի հատուածս յայ֊սոսիկ քերթողաբանէ , ըստ գեղեցիկ թարգմանութեան ուրումն 'ի ծերունեաց մերոց հարց .

« Նա ոչ կողմանք երկրի համայն
Բերեն ըզգոյսըս զամենայն .
Այլ առ գետովք լինի ուռի,
Նա 'ի ջրարբի վայրըս բարտի .
Անքեր ուամուլըն ծառ Որնի
Յապառաժուտ լեռնավայրի .
Ի գետեզերս է մրտենի,
Ապանդարապետ բոյս 'ի բլրի .
Նա սոճիղակ 'ի հիւսիսի ,
Խորաքանչիւր յիւրում բընի .
Ի հատանել ըղձիւղս ոլթոյ ,
Ուռ իւր արտօսր հեղու լալոյ :

Ի սկըզբանէ արարածոց
Բնութիւն պէսպէս տըւաւ ծառոց .
Որ և լընուն ըզգաշտս համակ ,
Եւ զգետեզերս առ հասարակ .
Որպէս փափկիկ Թուփըն Միւղար ,
Եւ Կենխստայն մորչ և դալար :
Կէսք 'ի սերմանց են բուսական ,
Զերդ շագանակն ամբարձական .
Նոյն և մեծ շօճըն վարսաւոր ,
Յանտառըս դիցն ոսմըզգական .
Այլ և կաղնիք՝ զորս Հռոմոց
Պատգամատեղ կարծեալ կըռոց .
Եւ այլք մայրի մացառախիտ
Շառաւիղեն 'ի յարմատոյ .
Որպէս պըտեղն և կեռասի ,
Եւ Պառնասեայ լերին դափնի ,
Այն որ զփոքումբըրն Թեւարկէ
Մայրօրինակ լեալ հովանի :
Արդ եղանակ զայս երեքկին
Կարգեաց բնութիւն նախ առաջին ,
Որով մայրիք Թուփք դալարին
Եւ ամենայն ծառք անտառին :

Ի՛ և այլ ազգ տընկոց սերունդ ,
Գործածութեանըն գոլով գիւտ :
Ոմըն կորզեալ տունկ փանաքի
Ի մօր մարմնոյ՝ տընկէ յառուի .
Եւ ումն 'ի հող վարէ ողջոյն

Զկրտոն ըստուար ցից հաստաբուն·
Ուր ոստաքանց փայտ ձիթենի
Արմատանայ ըսքանչելի ։
Եւս և փոխեալ ծառոց ըզձիւղ,
Այլ ընդ այլոյ բերեն պտուղ ։
Զի պատուաստեալ խընձորենի ,
Պըտղաբերէ իբր ըզտանձի ·
Եւ 'ի յանբուն շըլորենի
Արիւներանգ չուամ՛ շառաւղնի » ։

Ի թուղթս խնդրի ընտելական ոճ, հան-
դերձ քերթողական նկարագրութեամբք ,
և հանճարեղ զարդուք և գրուագօք ։ Ով-
բատեալ թուղթքն լիցին վարժապետ լե-
զուագիտաց ։ Բայց և մերոյս Շնորհա-
լւոյ երկոքին թուղթքն քերթողականք ,
որ առ իշխանն արևելեան , և մանաւանդ
որ առ Ապիրատ եղբօրորդին իւր , ոչ
սակաւ արուեստիւ են գրեալ ։ Գեղեցիկ
է 'ի նմա համառօտ նկարագիր զինուորա-
կան կարգի նորին ·

« Ապիրատիդ գրեմ զայս բան ,
Եղբօրորդւոյդ իմ ըղձական,
Պանծացելումդ արիական
Զինավարժից ներհըմտական·
Ի տէգ նիզակ շարժողական
Որպէս ծըղօտ մի եղեգան ,
Բամեալ յահեակ կըրօղ վահան
Իբր սանձով անշեղական ·

Երխութեանց պարառական
Նախնեաց քաջացըն գոլ նըման » ։

Եւ 'ի սկիզբն իսկ Թղթոյն, և ուրեք ուրեք սիրալիր բանքն, հոգի և զորով մուծանեն 'ի նմա ․

« Երգական լուսոյ ծագման
Մեր քո առ իս համանըման,
Ուխտին քաղցու բըժըշկական
Յագեցուցիչ որ քեզ բաղձան ...
Տենչանք սիրոյդ սրտի տարփմամբ ,
Մինչ զի կիզուլ տեսոյդ յիշմամբ ․
Նից վե՛հ երանական
Օքոյդ տեսութիւն քոյքըս փարկան » ։

Եւ ապա յուսով գալստեան նորա զուարթութիւնն և խնդրել 'ի նմանէ գրել գիրացն ստուգութիւն՝ եթէ արդարև գալոց իցէ ․ և ապա հայրենի խրատքն հանդերձ օրինակօք և անձին իւրոյ հանգամանքն նկարագրեալ՝ մի 'ի գեղեցկագոյն քերթութեանց նորա յօրինեն զթուղթն ։

Բայց Թղթոց իսկ այլ և այլ ազգք են ըստ իմաստիցն ․ է որ բարոյական և քըննաբանական, է որ խառն ընդ եղերերգակ և ընդ սիրային քերթութիւնս , որպէս Ովիդեայ Նասոնի Թուղթք մծուհեացն՝ հոծ և խիտ իմաստիւք և զօրովականք ․ և է որ խառն ընդ երգիծաբանութիւն , որպէս Ովրատեանքն ։

Սկիզբն երգիծաբանութեան անյայտ է, և թուի մնացորդ իմն նախնոյ կատակերգութեանն՝ որ ըստ մասին ոտանաւոր և ըստ մասին արձակ բանիւ էր քերթեալ, և լի շաղակրատանօք։ Էննիոս և Լուկիլիոս հարթեցին զայն, և Ովրատիոս էած յայժմու կերպարանս։ Նա է երգիծաբանութեանն գործ՝ ուղղել զթարս, նմին իրի և պարսաւել զյոռութիւնս. այլ չէ օրէն նշաւակել 'ի նմա զոք, և ոչ լռելեայն։

Ովրատ, Յորնաղ և Պերսիոս, երեքին ես լատինք, այլազգ 'ի միմեանց յօրինեցին զերգիծաբանութիւնսն։ Ովրատ զանմտութիւն մանաւանդ և զտկարութիւն մարդկան առնու կշտամբել քան զյոռութիւնս. և զայն՝ զուարձաբանութեամբ, և ընդ նուրբ իմաստասիրութեան կցորդելով զարեկիրթ քաղաքականութիւն։ Զոր օրինակ առ 'ի խրատ որդւոց 'ի հնազանդութիւն հայրենի խրատուն, զօդուտ այնոցիկ այսպէս առաջի առնէ.

« Մաքիմք ես յայնց ողջ լեալ յախտից՝
Որոց կորուստ ընթանայ կից,
Դուզնաքէիւք փոքրիկ կարեօք,
Նա ոյց դիւրաւ ներես արդեօք »։ Եւ.Գ.Ի.Ծ.

Նա առ 'ի խրատ անտրտունջ գոհութեան անտոհմից ընդ բախտ իւրեանց, այսպէս քերթողաբանէ.

« Չեմ ես անմիտ զի ընդ իմն հայր ամա~
չեմ,
Նա՝ և ոչ յայն ինչ անբասիր զիս տա~
նեմ
Որպէս բազումք, թէ ոչ այն իմ ինչ է
մեզ՝
Ոչ չեն ծնողքս ազնըւական և
շքեղ.
Իմ միտք և ձայն յոյժ են 'ի սայց երկ~
պառակք.
Ոչ թէ յամս ինչ՝ հրաման տացեն ախ~
տարակք
Դարձ ընդ կըրունկն առնել կենացս
յասպարէզ,
Եւ այս ընտրել իւրաքանչիւր մէն
մի մեզ
Ոչ որ ոք ցանկայր ծնողս անձին պեր~
ճափառ,
Ես զոհ իմովքս՝ ոչ զորս 'ի խուրձն
են պայծառ
Եւ 'ի վըսեմ գահ՝ կամէի առնուլ ինձ »:
ԵՐԳԻԾ · ա · զ · 89 :

Յօրնաղ թէպէտ և ազգողայոյն քան զՍվրատ, այլ դեղով և կիրթ ախորժակօք տորև. քան զնա, բուռն և զկծեցուցիչ բանիւք կշտամբէ զյոռութիւնս. և մանաւանդ ուրեք ուրեք նշաւակէ և զանձինս ոմանց: Որպէս զՊարիս կատակերգու,

վասն խառնելոյ նորա յարքունիս 'ի բաշ-
խըս աւագութեանց, այսպէս երգիծանէ.

« Նա և յոգունց ընձեռնէ զօրականին
    բարձ և պատիւ.
Նու զքերթողաց կիսամեայ պըձնէ զմա-
    տունս ոսկի օղիւ.
Նու զոր աւագք ոչ կարեն, զայն խեղ-
    կատակըն տայ պարգև »: Երգիծ. Է. 88:

Բայց պերճք են տիպք կերպարանաց բա-
նից նորա, և հանճարեղ բացատրութիւնք.
որպէս կշտամբել նորա զեգիպտացիս՝ վա-
սըն պաշտելոյ նոցա զկենդանիս և զբոյսս.

« Բիւթանացիդ Վոլուսիէ,
Ո՞ որ երբէք ոչ գիտիցէ,
Թէ յետսամիտն եգիպտացի
Որո՛ց հրէշից պաշտօն տանի:
Կէսք տխեռան երկրպագեն,
Այլք յօձակուլ ցեծոյն սարսեն:
Ճողեալ կապկին սրբանուէր
Ոսկեձաձանչ փայլէ պատկեր.
Ուր հնչաւուրց Թեբէ քաղաք
Հարիւր դըրամբք կայ հարթյատակ.
Նու 'ի Մեմնոն կիսակործան
Հընչէն քընար լարք դիւթական:
Անդ ըզծովու աստ ըզգետոյ
Պաշտեն լուղակ մի առ միոյ.
Անդ ամենայն քաղաք ըզշուն,
Իսկ զԱնահիտ ոչ ոք համբուն:

Ըղպրաս և սոխ մէջք են խոլել
Եւ տատամամբք պատառոտել :
Ո՛վ սուրբ ազանցն , որոց պարտէզ
Բուսուցանէ աստուածս այսպէս » :

ՆՐԳԷԺ . ԺԵ :

Իսկ Պերսիոս ազգութեանն Յորնա- ղայ քան ընտիր ախորժակացն Ովլատեայ նմանագոյն գտանի :

Յայսոսիկ ամենայնի ենթէ 'ի թուղթս և ենթէ յայլ վարդապետական քերթու- թիւնս կարևոր է յոյժ ովրատեան կա- նոնն՝ Համառ:պ պարառեծէա . քանզի համա- ռօտութիւն յաւելու 'ի սոսա կորով և զօ- րութիւն : Եւ դարձեալ նկարագրութիւն բարուց և բնաւորութեանց , կարճառօտ պատմութիւնք և առասպելք և զուար- ճալի համեմատութիւնք պատշաճա- գոյն գործեն զարդ յայս ազգ քերթու- թեան, որք այլուր դուն ուրեք գտանեն տեղի :

Առ գաղղիացիս գերազանցեաց յայս ազգ քերթութեան Պուալոյ . և Քերթո- ղական արուեստ նորա և թուղթք և եր- գիծաբանութիւնք մեծարեցին միշտ ըստ համեմարեղ իմաստիցն և ըստ քերթողա- կան լեզուին :

Իսկ առ անգղիացիս անուանի են Բոբ և Իունկ :

Յիտալացւոց Մէնծինի եկաց հետևող Յօրնադայ · իսկ Արիոստօ, Սալուաթոր Ռոզա, Վենինի, Քիապրէրա, Կոցցի և Փարատինի կացին հետևողք Ովրատեայ։ Հանճարեղ է յոյժ և պերճ փարինեայ երգիծաբանութիւնն, որ զմեծամանց աշխարհի զառօրեայ զբաղանայն։ Իսկ քերթողական թղթոց գրիչք կային առ նոսա Ֆռուկոնի, Ալկարոթթի, Պեթթինէլլի և Փինտէմոնթէ։

Առակք կամ առասպելք ազգ ինն վարդապետական քերթութեան են, յորս քերթողն ՚ի ձեռն կեղծեալ օրինակաց կենդանեաց և անշունչ իրաց հրահանգէ զմարդիկ։ Կարի յաճախեալ էր առ արևելեայս այս ազգ քերթութեան, յորում Եսովպոս ՚ի Յունաց անուանի քան զամենեսեան եկաց, և առ Լատինս Փեդրոս և Աւիանոս՝ որք զԵսովպայ առակսն յեղեալ ՚ի լատին բարբառ, բազում ինչ և ՚ի հանճարոյ իւրեանց յաւելին յայնս. մանաւանդ Փեդրոս այնպէս վայելուչ զնոսա յօրինեաց, զի ոչ ինչ ստորև քան զօրինակաղիրն ժառանգէ փառս։

Օրինակ ինն առակ ամբարտաւան ճային և սիրամարգի.

« Մի օտարին պանծալ բարեօք յանկալեաց,

Իւրըն գոյիւք կեալ միշտ զաւուրըս կենաց ,
Զայս Եզովպոս քաջ յարացոյց մեզ երգեաց :
Յաւակնութեամբ զուր յօրացեալ վէրըն ձայ ,
Թափեալ փետուր սիրամարգի զիւրեաւ արկ ,
Պըճնեալ զարդուք ընչաց քերէր իւր դասուն ,
Երթեալ խառնէր սիրամարգաց յազնիւ տարմ ,
Նոքա հասեալ թափեն ըզզարդ լերկ հաւուն ,
Եւ չարագան կըտցօք տանջեալ վըտարեն .
Դայն անշընորհ յազգ իւր դառնայր կորակոր ,
Անտի վանեալ լինէր տըխուր նըշաւակ :
Անդուստմի ումն յորոց երբեմն ըմպահկեաց ,
Թէ գոհ էիր ասէ ընդ մեր աստիճան ,
Եւ ըզբնութեան տուրս հանդուրժել ընտրէիր ,
Ո՛չ այն ընդ քեզ բասիր ձաղանք անցանէր ,
Ոչ յաղէտքո և այս աքսոր գիզանէր » :

Եւ շանն ագահի միս 'ի բերան անցք ընդ գետ.

« Աւելազանց տենչ զայր ագահ
Առնէ 'ի խաբըս դիւրասաս:
Յինչս օտարին որկորուստ,
Զիւրըն մասնէ 'ի կորուստ:
Ընդ գետ 'ի լող անկեալ շուն,
Միս 'ի բերան յիւր 'ի չուն,
Յառեալ ետես զըստուեր իւր
Ի հայելւոջ անդ 'ի ջուր:
Եւ համարեալ այլ իմն որս
Յորկոր այլոյ ջուրցն 'ի խորս,
Գրաւել և զայն ցանկացաւ.
Այլ ցանկութիւնն ինքնադաւ
Ելք զոր ունէրն 'ի բերան,
Եւ ոչ միւսումըն ժաման »:

Գեղեցիկ է և ուրումն 'ի մերոց քերթողաց ըստ պատեհի առակեալն զյախուռն ձգտելոյն 'ի նմանել մեծագունից .

« Համբերողէ որ ընդ վեհագունին տան ընդդէմ բերէ հակառակութեան վէճ: (Պետ. յեռեմեդեայ. 41:)

« Ընդ ձի վարգեալ քառասմբակ՝
Յոտիցըն հուր թօթափելով,
Նախանձեցաւ զորտ լըճաբնակ՝
Չափոյն անգէտ անձին զօրով:
Եւ յոստոստելն անձահ ու 'ի զուր,
Մինչ համարէր նա թատր հանգոյն

Տեսանողայն ընծայել իւր ,
Նշղև 'ի ծաղր ամենեցուն » :

Յիտալացւոց անուանի են Պազլլոյ Կոացիոզոյ, Բինիոնթթի, Տէռոսսի, Բռասեոլնի , Պեռթոլա և Բեռեննոյ : Իսկ 'ի գաղղիացւոց անուանին և հռչակաւորն յոյժ Լաֆոնթէն :

ԴԱՍ ԺԹ

Դիւցազներգակ քերթութիւն :

Հ . Զի՞նչ է դիւցազնականն քերթութիւն .

Պ . Դէպք ինչ մեծագործ քերթողաբար վիպագրեալ , առ 'ի սէր և 'ի զարմացումն առաքինութեան ձգելոյ զընթերցողս : Վեհագոյն քան զամենայն ազգս քերթութեանց է սա , այլ դժուարին յոյժ 'ի կատարումն . քանզի հզօրագոյն ձգանց քերթողական հանճարոյն պէտք են առ 'ի յօրինել վէպս քերթողականս զուարճալի և ախորժալուր ամենեցուն, 'ի ներքս ածելով դէպս պատշաճաւորս , և նկարագրութիւնս կենդանատիպս բնութեան և բարուց , հանդերձ պերճութեամբ և վսեմութեամբ իմաստից և ասացուածոյ, որք դիւցազնականին 'ի դէպ գան առաւել

քան այլ ամենայն քերթուածեանց, և ո֊
րովք զանազանի սա 'ի պատմութենէ ։

Առաւել քան զԹատերական քերթու֊
թիւնս երկայնէ սա զչափ ժամանակի. և
հակառակ նորին՝ զբնաւորութիւնս ան֊
ձանց փոխանակ իմաստիւքն և կրիւք
նոցա ցուցանելոյ, գործովքն ցուցանէ ։

Հ. Որպիսի՞ ինչ պայմանք խնդրին 'ի
վէպս դիւցազնականին.

Պ. Առաջին պայման, որ առաւել քան
յայլ ամենայն ազգս քերթուածոց պա֊
հանջի 'ի դիւցազնականին, է միութիւն. զի
առանց այսորիկ մեծագործութիւնք խառն
'ի խուռն անկցորդք ընդ միմեանս՝ ոչ ինչ
ազդեն յընթերցողն ։ Վասն որոյ յամենայն
դիւցազնական քերթութիւնս անուանիս
մի ինչ է գլխաւոր վէպն. յԻղիականին
Հոմերի՝ քէն Աքիլլեայ, յՈդիսականին՝
դարձ և հաստատութիւն Ոդիսեայ 'ի հայ֊
րենիսն, յԷնէականին Վիրգիլեայ՝ եկա֊
ւորութիւն Էնէասայ յԻտալիա և հաս֊
տատութիւն նորա անդ, և 'ի դիւցազնա֊
կանն Տասսոյի՝ ազատութիւն Երուսաղէ֊
մի 'ի ձեռաց անհաւատից ։ Իսկ այլ ամե֊
նայն դէպք որպէս մասունք 'ի բոլոր անդր
բերին. վասն որոյ միութեամբ վիպացն
ոչ արտաքսին 'ի դիւցազնականէն դրուագք
կամ յարակից դէպք, որք թէպէտ և չի֊

ցեն կարեւորք յոյժ 'ի բովանդակութիւն առաջարկութեանն՝ այլ քաջ ընդ այնմ կցորդեալք իցեն. որպէս տեսութիւն և զրոյցք Հեկտորի ընդ Անդրոմաքեայ յԻլիականին, և իրք Կակոսի և Նիսոսի և Եւրիալեայ յԵնէականին ։

Վասն որոյ նախ առաջին խնդրի 'ի գրուածս անբռնազբօս կցորդութիւն ընդ վէպսն, զի իցեն որպէս անդամք նորին մարմնոյ՝ և մի ապուցիկք. որպիսի ստոր-տանի գրուածն երկայնաձիգ Ողինդեայ և Սոփրոնեայ յԱզատութեանն Երուսաղէմի։ Եւ երկրորդ՝ քանզի գրուածք առ'ի զարդ յաւելուն, պարտ է նոցա գոլ նոր ինչ առ 'ի փոփոխութիւն տեսարանաց, և մի համմասեռ ընդ գլխաւոր վէպսն կամ ընդ այլ գրուածս. վասն որոյ 'ի վէպս պատերազմաց անյարմարք են գրուածք դարձեալ պատերազմականք, այլ կարի քաջայարմարք վերոյասացեալ գրուածքս Իլիականին և Ենէականին, և Երմինեայ ընդ հովուին դէպք յԱզատութեանն Երուսաղէմի ։

Առ միութիւն վիպացն խնդրի դարձեալ ամբողջութիւն, որպէս զի ըստ Արիստոտելի՝ իցէ նորա սկիզբն՝ մէջ և կատարած ։ Վասն որոյ պարտ է քերթողին կամ իւրովի և կամ 'ի ձեռն ուրուք 'ի դիմաց՝

զօրս 'ի ներքս մուծանէ՝ տեղեակս առնել ամենայնի ընթերցողս, ոչինչ 'ի կարևորաց թողեալ'ի բաց մինչև յանթերի կատարումն վիպացն։

Զչափ ժամանակի վիպացն ոչ է մարթ ճշդիւ սահմանել։ Եղիականին Հոմերի վասն բուռն սաստկութեան ցասմանն Աքիլլեայ, չանցանէ չափ ժամանակին քան զաւուրս քառասուն. իսկ Ոդիսականին 'ի կործանմանէն Տրովայ մինչև ցխաղաղութիւնն Իթակայ՝ որ են ամք ութ և կէս. բայց յելիցն Ոդիսեայ 'ի կղզւոյն Կալիփսեայ լինին աւուրք յիսուն և չորք։ Նոյնպէս և Ենէականին առեալ 'ի հրակիզմանէն Տրովայ՝ լինին ամք վեց. իսկ յետ մրրկին մինչև ցմահ Տուռնոսի, ամ մի և ամիսք։

Երկրորդ պայման վիպացն է, զի իցէ զմեծ ինչ և զկարևոր իրաց, արժանի վատակոց քերթողին և արժանալուր։ Առ այս կարևոր է և հնութիւն իրացն. քանզի նորք և արդիք դուզնաքեայք թուին, իսկ հնութիւն որպէս ստուերաւ քօղարկեալ՝ վեհ երևեցուցանէ զամենայն, և տայ համարձակութիւն քերթողին՝ պաճուճել զայն պատշաճ կեղծեօք։ Վասն որոյ Վոլթէռ և Լուկանոս ոչ յաջողեցան 'ի քերթուածս իւրեանց, զվէպս իւրեանց

ժամանակին երգելով. քանզի Լուկանոսի չհամարձակեալ յաւելուլ կեղծիս 'ի ծանօթ իրսն, անպաճոյճ և ցամաք զքերթուածսն արար. իսկ Վոլթերի կամեցեալ յաւելուլ կեղծիս, չկարաց պատրել զընթերցողս, և եպերեցաւ:

Վասն ցանկալի լինելոյ վիպացն օգնէ յոյժ յազգային իրաց առնուլ զայն, որպէս արարին Հոմերոս և Վիրգիլ, և Թասսոյ. և մուծանել 'ի ներքս իրս գորովականս և ազդոյս. զի շաչիւն զինուց և պայծառ արութիւնք զաչս ևեթ շլացուցանեն, այլ պարտ է և զսիրտ ընթերցողաց շարժել 'ի սէր՝ 'ի բարեկամութիւն և 'ի կարեկցութիւն, յոր առաւելապէս հաստատեալ է յարգ քերթութեանն: Վասն որոյ պարտ է այնպէս ճարտար զգլխաւոր դիւցազինն յարդարել զնկարագիր, զի ընթերցողացն ոգիք կապեալ ընդ նմա՝ յամենայն խոչս և 'ի վտանգս կարեկից լիցին նմա:

Այս խոչք և վտանգ կազմեն զհանգոյց քերթութեանն, և 'ի ճարտար մանուած նոցա հաստատի արուեստ մեծ քերթողին: Պարտ է նմա մօտալուտ և անձողոպրելի վտանգօք զարթուցանել զմիտս ընթերցողաց, տակաւ առաւելուլ զդժուարութիւնս և զվտանգս, և յերկար 'ի վարանս և յերկիւղի կալեալ զընթերցողս՝

տալս հաւանական դիպօք անակնկալ լուծանել զկնճիռն, և հանգուցանել զխաղն։ Նմին իրի և յաջողութեամբ պատշաճագոյն թուի աւարտել զդիւցազնական քերթուածս, զի մի՛ ընթերցողք աղետալի կատարածիւն ընկճեսցին տրտմութեամբ։

Հ. Որպիսի՞ ինչ խնդրին բարք 'ի դէմս իւրաքանչիւր 'ի դիւցազներգութեան։

Պ. Քանզի վէպս ճշմարտատիպս յօրինէ քերթողն 'ի դիւցազնականին, պարտի զիմաց իւրաքանչիւր որ 'ի նմա՝ տալ բնաւորութիւն և բարս սեփականս և համագունատիպս ճշմարտին։ Ոչ է հարկ ամենեցուն նոցա առաքինիս գոլ և անբաստանելիս բարուք, այլ և զդէմս ախտաւորս և զմոլիս մարթի ըստ պատշաճի 'ի ներքս մուծանել, բայց միայն զի աւագագոյնք 'ի նոցանէ և առաքինիք եւեթ սիրելիք ընծայեսցին։

Ոչ է բաւական առաքինիս և իմաստունս զդէմսն յօրինել, այլ պարտ է և զանազանել զառաքինութիւնս նոցա ըստ իւրաքանչիւր հանգամանաց և ըստ բուսոյ բարուց, յորում առաւելապէս փայլէ հանճար քերթողին. և զբարս և զնկարագիր իւրաքանչիւրոց անյեղլի և անփոփոխ ունել մինչև ցվախճան։ Յայսմ մասին գերազանցէ Հոմերոս զամենեքումբք.

զի զխմաց իւրաքանչիւր՝ զորս 'ի մէջ ա-
ծէ, այլ և այլ բնաւորութիւնք են, և ընդ-
նոյն մինչև 'ի սպառ պահեն անթերի:
Եւ Վիրգիլ զԴիդէի բարսն քաջ նկա-
րագրէ, և անջնջելի պահէ զայն: Բայց
ճարտար քան զՎիրգիլ գտանի Տասսոյ
'ի նկարագիրս բարուց. և Գոփրեդոս
դիւցազն նորա գտանի արդարև խոհեմ
իմաստուն և արի մինչև ցվախճան:

Յամենայն իսկ դիւցազնական քերթուա-
ծս խնդրի որ դիւցազն առաջնորդ իրա-
ցն մեծ և երևելի քան զայլս, որում
պարտ է առաւել քան զայլս զարմանալի
գոլ առաքինութեամբ և սիրելի. նմին ի-
րի մի ինչ ատելի և արհամարհ իցէ 'ի
նմա: Այսպէս յԻղիականին Հոմերի դիւ-
ցազն է Աքիլլէս, յՈդիսականի նորին՝
Ոդիսեւս. յԵնէականին Վիրգիլեայ՝ Ե-
նէաս, և Գոփրեդոս յԱզատութեանն Ե-
րուսաղէմի:

Ի դիւցազնականն քերթութիւն խառ-
նին և հոգեղէն էակք. և 'ի ճարտար
խառնութեան նոցին է բարւոք կազմածն
որ մեքենայն կոչի: Բայց պարտ է քեր-
թողին յայսմիկ զչափ պահել, և մի հրաշս
'ի մտաց ստեղծանել. այլ զոր կրօնք և ա-
ւանդութիւն ընկալան՝ նոքօք ևեթ վարել,
զի հաւանականք իցեն: Հոմերոս ստոգա-

նի որպէս կարի նուաստացուցեալ զգիս. Վիրգիլիոս պահէ զպատիւ նոցա. Թասոյ փոխանակ դիցն զԱստուած և զհրեշտակս մուծանէ, բայց 'ի յաճախելն զգիտական կախարդութիւնս՝ ստորանելի է։ Քամօէնս այլանդակ խառնմամբ զդիցաբանութիւն ընդ ճշմարիտ կրօնիցս կցորդեալ, ընդ Քրիստոսի և ընդ սուրբ Կուսին 'ի ներքս ածէ զԱրամազդ և զԱստղիկ։ Տարաբանագոյն ևս է զանենթակայ իրս անձնաւորել, որպէս զհերձուած և զատելութիւն. և տալ նոցա դէմս և խօսս, որպէս առնեն Վոլթէռ և Արիոսթոյ. քանզի գիւտք այսպիսիք 'ի նկարագրութիւնս ևեթ ուրեք վարին առ 'ի զարդ։

Հ. Որպիսի՞ ինչ խնդրի ոճ 'ի վէպս դիւցազնականին.

Պ. Եթէ բազմաժամանակեայ իրք քերթութեանն իցեն, և չիցէ մարթ քերթողին անդստին 'ի սկզբանէ իւրացն սկիզբն առնել, զմասն ինչ վիպացն տացէ պատմել ումեք 'ի դիմաց՝ զորս 'ի ներքս ածէ. որպէս առնեն Վիրգիլ յԵնէականին, և Հոմեր յՈդիսականին։ Իսկ եթէ կարճժամանակեայ իցէ, մարթ է քերթողին իւրովի վիպել զամենայն։

Յառաջին առնել զերմն, 'ի կարդալ ըղ-

Մուսայն, և յայլ նախաշաւիղ պատրաստութիւնս, ազատ է քերթողն առնել որպէս և հաճոյ թուի նմա. բայց միայն պարզ և բացայայտ պարտ է նմա յայտնի առնել զառաջարկութիւնն, առանց ճոռոմ ճամարտակութեան և մեծամեծս խոստանալոյ. վասն որոյ իմաստութեամբ պատուիրէ Ովրատիոս. (Արհ. Քերթ. 136:)

« Մի՛ լիցի քեզ առնել ըսկիզբն իբր ըզ-
 քերթող սինլըքոր,
Թէ զՊրիամու երգեմ ըզբախտն և զքա-
 ջայաղթ մարտին զոռ:
Զի՞ զինչ ապա ածցէ շըքեղ նախեր-
 գանացն արժանի.
Յերկունս գոլով գոչեն լերինք, և չըն-
 չին մուկըն ծնանի:
Իսկ քանիօ՜ն բարւոք երգէ, որ ոչ ո-
 գեալ ինչ անճահ,
Պատմեա ինձ զայրն, ասէ, Մուսա՝ որ յետ
 բեկմանն Տրովայ
Զյոգունց ետես բարս մարդկան և ընդ քաղա-
 քըս շրջեալ.
Նա ոչ ըզծուխ 'ի փայլմանէ, այլ 'ի
 ծըխոյ տայ ըզփայլ »:

Երկոքին յետին տողքդ նօտրագիր՝ են ըսկիզբն Ոդիսականին Հոմերի, որոյ համեստ նախերգանք զպոռոտախօս երգաբանին առաջնոյ նշաւակեն զճամարտա-

կութիւն ։

Ընդ բացայայտութեան և աշխոյժք և եռանդն խնդրին 'ի վէպս, և զարդք առաւել քան յայլ ամենայն քերթութիւնս, նկարագրութիւնք վսեմք, կիրք հոգեշարժք և ազդոյ բացատրութիւնք ։ Բայց ամենայն ինչ մեծ և վայելուչ, և մի ինչ ծերծերեալ և արուեստակեալ. վասն որոյ հանճարեղք և որոց կիրթք են ախորժակք՝ ստգտանեն 'ի Հոմերոս զդժպատեհ թշնամանս Աքիլլեայ ընդդէմ Ագամեմնոնի, զսաստ Արամազդայ առ Հերա, զըսպառնալիս Ոդիսեայ առ Թերսիդէս. և յԵնէականին Վիրգիլեայ զՀարպեայցն առասպելս. և յԱզատութեանն Երուսաղէմի զանհամեստ նկարագրութիւնս ։

ԴԱՍ Ի

Դիւցազներգակ քերթողք անուանիք, և քերթութիւնք նոցա ։

Հ. Ո՞րք եղեն քերթողահարք դիւցազնականին.

Պ. Հոմերոս առ Յոյնս, և Վիրգիլիոս առ Լատինս զառաջին մրցանակն դիւցազնականին կալան քերթութեան ։ Հոմերոսի մեծ են փառքն վասն առաջ-

նութեանն և վասն կրկին գեղեցկահիւս և երկայնաձիգ քերթութեանցն, ընդ որս զարմացին միշտ ազգք իմաստունք։ Վիրգիլեայ կանխեալ մահուն, ոչ ժամանեաց զվերջին կատարումն տալ գործոյն․ սակայն գեղեցկութիւնք հրաշալիք են 'ի նմա, մինչև ոմանց վերադասել զնա քան ըզՀոմերոս։

Հոմերոս եռանդեամբն և կորովով և վսեմութեամբ գերազանցէ, բայց և ուրեք ուրեք անփոյթ գտանի, և զանց առնէ զկանոնօք։ Իսկ Վիրգիլիոս թէպէտ և գեղեցկութեամբն և կարգաւորութեամբ գերազանց, այլ զՀոմերոս ունի իւր նախատիպ, և բազում ուրեք թարգմանիչ նորին է քան թէ նմանող։ Արդ ըստ գիւտոյն գերազանցէ Հոմերոս․ իսկ ըստ դատման և ըստ կարգաւորութեան բազումք Վիրգիլեայ տան զգերազանցութիւնն, թէպէտ և չև ևս սահմանեալ է վէճն։

Հ. Զի՞նչ են Իլիականին վէպք․

Պ. Քուրմն Ապողոնի աղաչէ զզօրավարն Յունաց զԱգամեմնոն, դարձուցանել յինքն զդուստր իւր՝ որ յաւարէ միոյ 'ի քաղաքաց անկեալ էր նմա բաժին։ Մերժէ զնա Ագամեմնոն․ և Ապողոն ղաչանօք քրմին արկանէ ախտ ժանտ 'ի

բանակն Յունաց։ Հարցանէին խղճք, և տան պատգամ, զի չէ հնար դադարել ախտին՝ մինչև դստեր քրմին առ հայրն դարձ արարեալ։ Յամառ Ագամեմնոն ընդդէմ քրմին, և թէպէտ յանձն առնու վասն փրկութեան բանակին տալ 'ի բաց զգերին՝ զոր առաւել սիրէր քան զԿլիտեմնեստրա զկին իւր, սակայն փոխանակ նորա պահանջէ զօրիորդն Բրիսիտէ ըզգերին Աքիլլեայ։ Ոանրացասումն լինի ընդ այն Աքիլլէս և թշնամանեալ զԱգամեմնոն վասն յափշտակասիրութեանն և հարստահարութեան, երդնու ընդդէմ զօրավարին՝ նահանջել զօրօքն իւրովք 'ի բաց, և ոչ ևս նպաստ 'ի կռիւ լինել Յունաց ընդդէմ տրովացւոց. և արդեամբք զսպառնալիսն կատարէ։ Եւ աստուածուհին Թետիս մայր նորա աղերսէ զԴիոս յօգնութիւն որդւոյն, և Դիոս 'ի վրէժխնդրութիւն զրկանացն Աքիլլեայ ընդդէմ դառնայ Յունաց, և թողու յաղէտս ծանունս տառապել նոցա ընդ երկար, մինչև ցածուցեալ Աքիլլեայ 'ի ցասմանէն, և հաշտեալ ընդ Ագամեմնեայ, դարձեալ Յոյնք 'ի ձեռն Աքիլլեայ յաղթեն տրովացւոց։

Հ. Զի՞նչ են վէպք Ոդիսականին.

Պ. Ոդիսեայ յետ պատերազմին Տրո-

վաղայ՝ դէմ եդեալ դառնալ յԻթակա 'ի կղզի իւր, զամս բազումս հալածի 'ի մրրկաց յայլ և այլ կողմանս երկրի զանազանեալս ըստ բարուց, ըստ տարազու կենաց և ըստ քաղաքավարութեան։ Յարկածոն, ընդ որս հարկ լինի նմա մաքառել, կորնչին ընկերք նորա՝ ատուգանեալ խրատուց նորա։ Մինչդեռ նա 'ի բացեայ էր, ճոխք և հզօրք կղզւոյն զարքունիս նորա վեր 'ի վայր աղմկեն, դարան գործեն որդւոյ նորա Տելեմաքեայ, և զկին նորա հրապուրեն լինել կնութեան միում յինքեանց՝ ընդ մեռեալս համարելով զայր իւր։ Բայց Ոդիսեայ հասեալ անդր, յայտնէ զանձն որդւոյ ևեթ իւրում և սմանց 'ի բարեկամաց իւրոց, որք մինչև 'ի սպառ հաւատարիմ կացեալ էին ընդ նմա. և ականատես իսկ լեալ ստահակութեան հրապուրողաց զկին իւր, պատուհասակոծ առնէ զնոսա. ապա յայտնէ զանձն իւր կնոջ և հօր իւրում, և յառաջին կարգն և 'ի խաղաղութիւն դարձուցանէ զկղզին։

Հ. Զի՞նչ են վէպք Ենէականին.

Պ. Ենէաս տրովացի որդի Անքիսեայ և Աստղկան, որոյ զԿրեւսա դուստր Պրիամու առեալ էր կնութեան, և ծնեալ 'ի նմանէ զՅուլոս Ասկանիոս. յետ կոր-

ծանման հայրենեացն առ 'ի Յունաց, կո֊
րուսեալ զկին իւր, քան նաւօք անցանէ
'ի Թրակիա, անտի 'ի Դեղոս և ապա 'ի
Կանդիա: Անդ սկսանի շինել քաղաք.
բայց հալածեալ 'ի սրածութենէ, անցա֊
նէ յԷպիրոս՝ ուր իշխէին ազգականք իւր
Եղենոս և Անդրոմաքէ. և Եղենոս գու֊
շակէ նմա զհանդերձեալ արկածսն: Ան֊
տի անցանէ 'ի Սիկիլիա, և անդ մեռանի
հայր նորա: Եւ վանեալ 'ի մրրկէ, զոր
Եւողոս աղաչանօք Հերայ յարուցանէ
ընդդէմ նորա, անկանի 'ի Կարքեդոն
և հիւրընկալի յարքունիս դշխոյին Եղի֊
սայ կամ Դիդէի: Եւ յանդիմանեալ 'ի
Հերմեայ, նաւարկէ անտի. իսկ Դիդէ
թողեալ 'ի նմանէ, առ վշտին դնայ զիւ֊
րովին: Ենէաս հասեալ 'ի Սիկիլիա, ըղ֊
տարեդարձ մահու հօրն կատարէ: Անդ
կանայք տրովացիք պատրեալ յԻրեայ ըստ
սադրանացն Հերայ, և տաղտկացեալք
'ի բազում երկայն ուղևորութենէն, հըր֊
ձիգ առնեն զնաւս նորա. վասն որոյ շի֊
նէ անդ զԱկեստա քաղաք, և թողու անդ
զկէսս յուղեկցացն՝ որ կամէին կալ անդ:
Ապա 'ի գնալն յԻտալիա՝ կորուսանէ զՊա֊
լինուրոս. և հասեալ 'ի Կումա, առաջ֊
նորդութեամբ Սիբիլլային իջանէ 'ի սան֊
դարամետս՝ տեսանել զհայր իւր: Անտի

անձանէ 'ի Կայետա, ուր թաղէ զդայեակ իւր. և 'ի մտանել նորա 'ի բերան Տիբերի, հիւրընկալէ զնա Լատինոս արքայ երկրին, և խոստանայ տալ նմա ըզդուստր իւր զԼաւինիա կնութեան։ Զայրանայ ընդ այն Տուրնոս արքայ Ռուտուղայ, որում Լաւինիա խոստացեալ էր 'ի մօրէն 'ի կնութիւն։ Զէն առնուն. Ենէաս նիզակակից իւր արարեալ զԵւանդրոս և զԷտրուրացիս, սպանանէ նախ զՄեզենտիոս և ապա զՏուրնոս, և զբաւ առնէ մարտին և ուղևորութեանն և վշտակրութեանց իւրոց։

Բայց քերթողն ոչ անդստին 'ի սկզբանէ առնու պատմել զվէպքս, այլ սկիզբն 'ի մրրկէն առնէ զոր յարոյց Եւողոս. իսկ զայլն ամենայն կարի յոյժ վայելչապէս ճարտարութեամբ տայ դիւցազին իւրում պատմել Դիդէի տիկնոջ։ Բայց թէպէտ և դշխոյս այս երկերիւր ամօք յետոյ եկաց քան զԵնէաս, սակայն Վիրգիլիոս փոփոխմամբ ժամանակին քերթողական համարձակութեամբ՝ զգեղեցկագոյն, զցանկալի հոռոմայեցւոց, զգորովական և զգերապանց դրուագն զայն 'ի ներքս մուծանէ։

Քերթուածս այս թէպէտ և ոչ ազատ 'ի թերութեանց անհրաժարելեաց մարդ-

կեղէն հանճարոյ, այլ այնքան բովանդակէ յինքեան գեղեցկութիւնս և այնպիսի ընտիր ախորժակս, զի ոչ է մարթ վարժապետ վեհագոյն քան զսա ընծայել համբակաց քերթողականին: Գիտաց նա զդժուարին ճանապարհ հասանելոյ՚ի սիրտ մարդոյ, և շարժելոյ և գորովելոյ զնա ըստ կամի:

Երկրորդ գիրք Ենէականին է մի՚ի հրաշակերտից քան զամենայն քերթուածս, յորում քերթողն հանդէս առնէ ամենայն զօրութեանց հանճարոյն, մերթ տեսարանս ահարկուս և մերթ գորովականս առաջի առնելով. զհրդեհ և զաւարառութիւն քաղաքին տրովացւոց, հանդերձ ամենայն յարակից աղխողորմ հանգամանօքն. զմահ ծերունւոյն Պրիամու, և զառանձին իրաց հոգս զԵնէասայ, զԱնքիսեայ և զԿրեւսայ խանդաղատելի նկարագրեալ: Նոյնպէս և՚ի բազում յայլ տեղիս փայլէ բարացուցական հանճար քերթողին, օրինակ իմն՚ի չորրորդ գիրսն ՚ի նկարագրել զողորմելի տարփանս և զմահ Դիդէի, և յերրորդ գիրսն զհանդիպումն Ենէասայ ընդ Անդրոմաքայ և ընդ Հելենոսի, և՚ի դրուագսն Պալլանտեայ և Եւանդրի, Նիսոսի և Եւրիաղեայ, Լաւսոսի և Մեզենտեայ: Եւ թէպէտ վե-

ցեալ յետին գիրք քերթուածոյս անկատար մնացեալ իցեն վաղաՀաս մաՀուամբ քերթողին, վասն որոյ և կտակաւ պատուիրեաց նա Հրձիգ առնել զամենայն քերթուածն, սակայն եօթներորդ՝ ութերորդ և երկոտասաներորդ գիրքն լի են գեղեցկութեամբք ։

Միութիւն ամենակատար 'ի քերթուածս յայս պաՀի . 'ի սկզբանէ մինչև ցվախճան ոչ յայլ ինչ ուշ ունելով բայց 'ի Հաստատութիւն դիւցազինն յԻտալիա ըստ դիցն պատգամաց ։ Դրուագքն քաջ զօդեալ են ընդ առաջարկութեանն . և Հանգոյց քերթուածոյն՝ երդումն Հերայ ընդդէմ Հաստատութեան տրովացւոց յԻտալիա, որ և զամենայն խոչ և խափան արկանէ ընդդէմ յաջողութեանն Ենէասայ, և զմարդկային գործս ընդ աստուածայինս խառնէ ։ Աստի մրրիկն, որ զԵնէաս վարէ յԱփրիկէ . աստի տարփանք Դիդէի, որ Հնարէ արգելուլ զնա 'ի Կարքեդոն . աստի և ձիգն Տուրնոսի, որ յառնէ ընդդէմ նորա 'ի պատերազմ . մինչև 'ի լուծումն Հանգուցին 'ի մէջ անցեալ պայման դաշինն Արամազդայ ընդ Հերայ՝ կորուսանել 'ի սպառ զտրովական անունն 'ի լատինականն, զիջանի Հերա 'ի ցասմանէն, և Ենէաս յաղթանակէ ։

Հ. Ո՞ ՚ի քերթողաց յետ Հոմերոսի և Վիրգիլեայ ՚ի դիւցազնականին գերազանցէ քերթութեան .

Պ. Տասսոյ քերթող իտալացի որ երգեաց զԱզատութիւն Երուսաղէմի ՚ի ձեռաց անհաւատից ։ Ըստ ամենայն մասանցն պահէ քերթուածս այս զկանոնս դիւցազնականին . մեծ է և դիւցազնական առաջարկութիւնն , և քրիստոնէական ճշմարիտ կրօնք առաւելագոյն յաւելուն ՚ի նա մեծափառութիւն ։ Հակառակութիւն Սարակինեանց ՚ի վարանս ունի զմիտս . և ժամանակն իսկ և հեռաւորութիւն տեղւոյն տայ ըստ բաւականին ազատութիւն քերթողին յաւելուլ զկեղծիս ։ Բեղնաւորութիւն յոյժ մնաց նորա ընդ միութեան առաջարկութեանն կցորդէ զանազանութիւն զուարճալի , և ՚ի նկարագիրս բարուց ճարտար իսկ է քան զՎիրգիլ ։ Եւ համառօտ ասացեալ, հանդերձ ստգտանելի ինչ թերութեամբքն և ուրեք ուրեք արուեստակութեամբք , զերրորդ տեղին իրաւապէս ունի ՚ի դիւցազնականին ։

Այլ ոմանք վերադասեն քան զնա զՄիլտոն քերթող անգղիացի , որ զնախահօրն Ադամայ զարտաքսումն ՚ի դրախտէն երգեաց ։ Այլ սա թէպէտ և ընտրութեամբ առաջարկութեանն և՜ վսեմութեամբ գե-

բազմացեալ, բայց այլովք ամենայնիւ ստորև քան զԽամսայ գտանի։

Հ. Տո՛ւր ինձ տեղեկութիւն և զայլոց երևելագոյն դիւցազներգակ քերթողաց.

Պ. Առ գաղղիացիս դիւցազներգակ քերթողք կային Ֆենելոն և Վոլթէռ։ Տելեմաքին Ֆենելոնի վեցեակ առաջին գիրք լաւագոյնք են քան զյետինս. և յէջսն Տելեմաքայ ՚ի սանդարամետս՝ գերազանցէ իմն քերթողն և քան զքերթողահարսն երկոսին։ Բայց քանզի արձակ բանիւ է գրեալ քերթուածն և կարի յաճախ ՚ի նմա խրատք, ոմանց թուեցաւ կոչել զայն ճառ բարոյական քան թէ քերթուած դիւցազնական։

Իսկ Վոլթեռի քերթուածն, որ յաղագս պաշտպանելոյ մեծին Հենրիկեայ արքային Գաղղիոյ զփարէզ, բաց յանընտրութենէ առաջարկութեանն և յանձնաւորելոյ զհերձուած և զատելութիւն, բազում ուրեք ևս տկար է և հետևակ։ Ընտրելագոյն ՚ի նմա հատուածն է նկարագիր աներևոյթ աշխարհին՝ որ յեօթներորդ գիրսն։

Քամոէնս քերթող լուսիտանացի երգեաց զարշաւանս Վասքոյ Կամայ յարևելեան հնդիկս։ Այլ քերթուածն այն բաց ՚ի զծպատեհ խառնութենէ դիցապաշտու-

թեան ընդ ճշմարիտ կրօնս, է ևս անկա֊
նոն. բայց աշխոյժք 'ի նմա և եռանդն սաս֊
տիկ գտանին:

Գլոփըշթոք քերթող գերմանացի եր֊
գեաց զԳալուստ Մեսիային վսեմ յոյժ.
բայց սակաւուց իմանալի վասն կարի մթու֊
թեանն և չափազանցական իմաստից:

Բաց 'ի սոցանէ են և այլ դիւցազներգակ
քերթողք, Վաղերիոս Փլակկոս և Լուկա֊
նոս լատինք, և Արիոսթոյ և Բեռնար֊
դոս Թասսոյ և Պերնի և Կրացիանի իտա֊
լացիք, և այլք ումանք, որոց քերթուածք
անկատարք են յոյժ:

Են և կրկին քերթուածք վաղեմիք,
Ֆինկալ և Դեմորա, որոց պարզ են
հիւսք և բազմադէպ պատահարօք զար֊
դարեալ, և զօրավականքն 'ի նմա և
ոգեշարժք ընդ ահաւորն և ընդ կորո֊
վին պատշաճապէս խառնեալ. և նկա֊
րագիրք բարուց 'ի նմա պէսպէսք և կեն֊
դանատիպք. բայց միայն հոգեղէն էակք
յիշատակին եւեթ 'ի նմա: Ա՛ նոցա հան֊
գոյն վաղեմի քերթութեանց, լի երևակայ֊
ութեամբ և քաջայանդուգն ձևովք և
նմանութեամբք: Քերթող սոցին ճանաչի
Օսիան որդի Ֆինկալեայ արքային Կաղե֊
դոնեանց բնակչաց հիւսիսակողման Սկով֊
տիոյ, որ եկաց 'ի վերջ կոյս երրորդ դա֊

րու. և քերթուածք նորա աւանդեալք 'ի բերանոյ՝ պահեցան առ բնակիչս երկրին, մինչև Մակփերսոն յանցեալ դարու հաւաքեալ զայնոսիկ, 'ի Կեղտաց լեզուէ փոխեաց յանգղիական արձակ բան. ուստի Չէզարօթթի չափաբերեաց զայնոսիկ յիտալական բարբառ: Վէպք քերթուածոցն են արշաւանք Ֆինկալեայ հօր քերթողին յՈսիանոսա, և յերկաքանչիւր իսկ քերթուածսն ինքն իսկ Ֆինկալ է դիւցազնն, իմաստութեամբ զօրութեամբ մեծանձնութեամբ մարդասիրութեամբ և ազնուականութեամբ կատարեալ, որպիսի դիւցազն ոչ այլ ուրեք գտանի 'ի քերթուածս:

Հ. Զինչ է վիպասանութիւն.

Պ. Ընդ իմն դիւցազնական քերթութեան՝ յաճախագոյնս արձակ բանիւ յօրինեալ, և սահմանի՝ պատմութիւն առ 'ի հրահանգս բարուց կեղծեալ: Քանզի ընդ սա և ընդ դիւցազնական վէպս գրեթէ նոյն զանազանութիւն է որ ինչ ընդ ողբերգութիւն և ընդ կատակերգութիւն. զի դիւցազնականն զաւագաց ևեթ արանց զմեծագործութիւնս, իսկ սա առաւելապէս զհասարակաց կենաց զանցս յանդիման առնէ: Բայց քանզի դէպք և պատահարք կենցաղոյս սովորականք ոչ միշտ զարմանալիք են և ազդողականք առ 'ի խրատ,

վասն որոյ վիպասանն առեալ հաւաքէ ՚ի միասին հիւսս իմն և յաջորդութիւն դիպաց զարմանալեաց և հոգեշարժից, և փոխարէնս լաւութեանց և յոռութեանց ճշդագոյնս և արդարակշիռս քան որ սովորաբար ՚ի կենցաղումս հատուցանին. որովք առաւել ՚ի սմա զուարճանան և օգտին միտք քան յընթերցումն պատմութեանց:

Առ արևելեան ազինս յաճախեալ էր յոյժ այս ազգ մատենագրութեան. և անուանեալ Գիշերքն Արաբացիք հանճարեղք են և զուարճալիք, և յաճախեն ՚ի նոսա խրատք: Իսկ առ Յոյնս յոնիական և միլետացի վիպասանութիւնքն յիշատակեալք՝ որք չեն արդ ՚ի միջի՝ կարի ցոփականք էին. և որ կան այժմ՝ Ապուլէոսի և Աքիլլեայ Տատիոսի և Հեղիոդորայ վիպասանութիւնքն ՚ի չորրորդ դարու գրեալք, չեն ինչ հանճարեղք:

Ի մետասաներորդ դարու հնարեցաւ նոր իմն ազգ վիպասանութեան ռոմանդիքն անուանեալ, մոգս և հսկայս անձոռնիս ՚ի ներքս ածելով, և զարս անթափանցս զինուց, և զէնս դիւթականս, ամրոցս օդակառոյցս, և դէպս սքանչելիս ըստ տգիտութեան և ըստ նանրահաւատ բարուց այնր ժամանակի: Սկիզբն սորա եղև ՚ի Փռանս

դաւառի, ուր գաղղիացի բարբառ խառնեալ ընդ իտալականին՝ կոչէր Հռոմէական, վասն որոյ և Romance վիպասանութիւնն կոչեցաւ։ Տուրպինոս արքեպիսկոպոս գաղղիացի համարի առաջին գրիչ վիպասան, որ և գրեաց զիրս Կարողոսի մեծի և զիշխանաց նորա 'ի վանել նոցա զՍարակինոսս. զոր և Պոյարտ և Պէռնի և Արիոստոյ յետ նորա վիպասանեցին։

Այս ազգ վիպասանութեան տևեաց մինչև ցեօթնևտասաներորդ դար, յորում ժամանակի Չէրուանդէս սպանիացի վիպասանութեամբն Տօն Քիշօդեայ ծաղր կացոյց զասպետականն՝ յորոյ ընթերցումն մոլեալ էին համազգիք իւր։ Ոչ ինչ նուազ օգնեցին 'ի խափանումն նորին և փոփոխութիւն բարուց, և անկումն դիւրահաւանութեան. և յաջորդեաց նմին միւս այլ մերձաւորագոյն բնականին, առանց հրաշալի դիւթութեանցն և օդաթռիչ ամրոցաց և առասպելապատում վիպաց։ Բայց տակաւին գոյր ինչ 'ի նմա գերահրաշ. վասն որոյ երրորդ իմն ազգ վիպասանութեան հնարեցաւ ընտելական, յորում նմանութիւն բարուց, և լաւութիւնք և յոռութիւնք ըստ բնականին 'ի ներքս մուծանին։ Այսպիսիք են Ժիլպլաս, Մարիաննա, Նգիսա-

բէթ դշխոյ՝ որ և է իսկ թարգմանեալ առ մեզ յաշխարհիկ բարբառ։ Պօղ և Վիրգինիա, Ոսպէնսոն, ևն։ Մարթ է և չորրորդ իմն ազգ վիպասանութեան համարել զԱնաքարսեայ ուղևորութիւնն և զհանգոյն նմին պատմութիւնս, որք թէպէտ և ամենայն մասամբք իցեն ճշմարիտք՝ այլ կեղծեալ հանգամանօք պաճուճին, առ 'ի զուարճացուցանել զընթերցողս հանդերձ առաւելագոյն օգտակարութեամբ։ Օրինակ իմն. ճշմարիտ է զի կացին առ Յոյնս այն ամենայն արք երևելիք՝ զորս Պարթըլըմի 'ի ներքս ածէ, և գործեցին զպատմեալսն զամենայն. բայց Անաքարսեայ տեսանել գոլովս 'ի նոցանէ, և որպէս ականատես և ականջալուր նոցին՝ պատմել զգործս նոցա և զբանս, կեղծիք են. և բնաւին իսկ ուղևորութիւն Անաքարսեայ մտացածին իմն է, զի և ոչ Անաքարսիս այլ բաց 'ի մեծէ իմաստասիրէն գտանի ոք լեալ։ Արդ այս ամենայն կեղծիք, առանց այլայլելոյ զճշմարտութիւն պատմութեանն, զուարճալի յոյժ յօրինեն զայն, և զբարս ազգին և զբնաւորութիւն իւրաքանչիւր ուրուք աիներև՝ յանդիման կացուցանեն։

ԴԱՍ ԻԱ.

Ողբերգութեան կանոնք ։

Հ. Զի՞նչ է ողբերգութիւն .

Պ. Ողբերգութիւն 'ի սկզբանէ առ Յոյնս էր երգ իմն 'ի հանդէս սպանդարամետական տօնին , յորում նոխազ 'ի նուէր Դիոնիսի զոհէին. վասն որոյ Յոյնք կոչեցին զայն նոխազերգութիւն ։ Թեսպիս նախ իբր 536 ամօք նախ քան զԹուականութիւն փրկչին կացոյց զոմն 'ի պարն 'ի հանգիստ երգեցողաց , պատմել զգիւցազին ուրուք վէպս ։ Ապա Էսքիղոս 50 ամօք զկնի , երկուս ընդ միոյ կացոյց դերասանս 'ի պարն՝ խօսակցել ընդ միմեանս , և վէպս ինչ ցանկալիս և ոգեշարժս ածել 'ի տեսիլ. և տախտակամած բարձրաշէն կառոյց խաղետղ , շուրջանակի պաշաճ նկարուք զարդարեալ. և ինքն նախ 'ի յարգ և 'ի կերպարանս ած զԹատերգութիւն , զոր ապա Սոփոկղ և Եւրիպիդէս ածին 'ի կատարումն ։

Ողբերգութեան անկ է կրթել զսիրտ կարեկցութեամբ ընդ Թշուառացեալս , սիրով առ բարեբարոյս , և ատելութեամբ առ չարս ։ Նմին իրի Թէպէտ և մարթ է

քերթողին և հաւանական կեղծեօք շարժել զսիրտ, այլ լաւ ևս յաջողեն պատրանք, եթէ հիմն ինչ ճշմարտութեան իցէ 'ի վէպն ծանօթ ամենեցուն։ Ապա հաւանականութիւն կարևորագոյն մասն է 'ի վէպս ողբերգութեան. և առ այս խնդրին երրեակ միութիւնք, այսինքն է իրացն, տեղւոյն և ժամանակին։

Հ. Որպիսի՞ ինչ միութիւն իրաց խնդրի յողբերգութեան.

Պ. Խիստ ևս քան 'ի դիւցազներգութեան պահանջի աստ միութիւն, որպէս զի միտք առանց զբաղելոյ 'ի բազում՝ տացեն պարապ կրիցն յուզման։ Բայց հանդերձ միութեամբն մարթ է յաճախել 'ի նմա զդէպս և զդէմս, թէպէտ և զգուշալի է չխռնել յոյժ զայնս, զի մի՛ բազմաշփոթ խրթնութեամբ նուաղեսցի զօրութիւն քերթուածոյն։

Ոչ միայն 'ի բովանդակ թատերերգութեան պահանջի միութիւն, այլ և յարաբուածս իւրաքանչիւր՝ յորս վէպքն հատանին։ Բաժանումն արարուածոց անծանօթ էր առ Յոյնս, այլ 'ի սկզբանէ մինչև 'ի վախճան անընդհատ վճարէին ողբերգութիւնք, և ոչ դատարկանայր երբէք թատրն. այլ յորժամ դերասանքն մեկնէին, պար երգեցողաց ըստ իւրա֊

քանչիւր վիպաց զերգսն յարմարէր . և ոչ չափ և թիւ և ժամանակ սահմանեալ էր մեկնելոյ դերասանացն , այլ ըստ պահանջելոյ վիպացն՝ մերթ երիւք մերթ եօթամբք և մերթ ութ դարձիւք վճարէին ողբերգութիւնք ։

Այլ արդ սովորութիւն է 'ի հինգ արարուածս հատանել զողբերգութիւն , որպէս և Որատիոս պատուիրէ ։ Բայց պարտ է քերթողին 'ի պատշաճ տեղւոջ առնել զհատուածն , ուր 'ի բնէ իսկ հատեալ իցեն վէպքն , և ուր մարթ իցէ համարել բազում ինչ 'ի միջոցի անդ ժամանակի գործեալ՝ որոց չմարթի գործել 'ի թատերն ։

Յառաջնումն արարուածի պարտ է քերթողին ցուցանել բացայայտ զառաջարկութիւն ողբերգութեանն, և 'ի ցանկութիւն այնորիկ ածել զկացեալսն 'ի զնին, ծանօթս տալ զդիմաց իւրաքանչիւր՝ որ անդր 'ի ներքս մտանելոց իցեն , և զկրից նոցա և զհանգամանաց անցիցն ։

Յերկրորդ՝ յերրորդ և 'ի չորրորդ արարուածս տակաւ պարտ է դժուարացուցանել զկնճիռն , և ևս քան զևս յաճախել զվարանս տեսողաց ։

Իսկ 'ի հինգերորդումն պարտ է կերպարանափոխ առնել զիրսն , և զհանգոյ-

ցրն լուծանել, յորում հանճար մեծ և ճարտարութիւն քերթողին է. զի իբրև ինքնին պարզեսցին իրքն, և մի փոփոխութեամբ զգեստուց, կամ ուղղութեամբ գիշերային կամ վրիպակ տեսութեան, որ ծաղրականք են։ Նա դարձեալ զի պարզ իցէ լուծումն հանգուցին կամ յայտնութիւն իրացն, և մի բազմադէմ պատահարօք և բազմութեամբ անձանց վճարեալ, որով դժուարիմաց լինի ունկընդրաց։ Ախորժելի յոյժ էր Յունաց լուծումն հանգուցին յայտնութեամբ անձին ուրուք՝ որ 'ի սկզբանն չիցէ ծանուցեալ. քանզի ազդէ այս մեծապէս՝ եթէ ճարտարութեամբ և բնական և անակնկալ օրինակաւ յօրինեսցի՝ որպէս յԷդիպոսն Սոփոկլի, և 'ի Մերոպէն Վոլթեռի և Մաֆէի և Ալֆիէրեայ։

Չէ հարկ ողբերգութեան տխրութեամբ աւարտել, այլ շատ է զի իցեն 'ի նմա հոգք և անձկութիւն և կարեկցութիւն ընդ վիշտս առաքինեաց, թէպէտ և յաջողեսցի նոցա 'ի վախճանի. որպէս 'ի Գոդողիայն Ռասինի, և 'ի Մերոպէն երեցունց ահա ասացեալ քերթողացս։ Այլ սովորաբար անկ է ողբերգութեան տխրութիւն իմն առաքինական թողուլ 'ի հոգւոջ։

Առ միութիւն իրացն կարեւոր է և
տեսարանաց իւրաքանչիւր ընդ իրեարս
ճարտար կցորդութիւն. զի չէ օրէն ընդու
դատարկանալ թատերն՝ խաղալկաց ա-
մենեցուն 'ի բաց ելանելով, և այլոց 'ի տե-
ղի նոցա փոխանակելով, տեսարան նոր
անկցորդ ընդ նախորդին բացեալ: Եւ ոչ
օրէն է ելումուտ դերասանաց առանց
յայտնի պատճառի:

Հ. Որպիսի՞ ինչ միութիւն ժամանակի
և տեղւոյ խնդրի յողբերգութեան.

Պ. Առ միութիւն ժամանակի՝ հարկ է,
զի որ ինչ յարարուածս իւրաքանչիւր կեղ-
ծին՝ չկարօտիցի առաւելագոյն ժամանա-
կի քան զոր 'ի կեղծիս անդ անցանէ:
Բայց քանզի ընդ մէջ·արարուածոց իւրա-
քանչիւր համարի միջոց ժամանակի ա-
ռաւել կամ նուազ, մարթ է զժամանակ
իրաց բովանդակ ողբերգութեանն սահ-
մանել 'ի քսան և 'ի չորս ժամս: Իսկ առ
միութիւն տեղւոյ՝ ումանք հարկ համարե-
ցան անփոփոխ ունել զտեսարանն 'ի տեղ-
ւոջ՝ ուր սկիզբն առնի ողբերգութեանն.
վասն որոյ նախնիքն 'ի հրապարակի և յաշ-
խարհամուտ վայրս կարգէին զտեսարանն
ուր մարթ իցէ ամենեցուն մատչել: Բայց
բազում ինչ օտար 'ի բնականէն վասն
այնր գործէին առ նոսա, 'ի հրապարակի

զաղտնածածուկք ամենայն գործեցեալ և խօսեցեալ։ Նմին իրի արդիք շատ համարին 'ի նմին ևեթ քաղաքի հաստատուն ունել զտեսարանն, տեղի 'ի տեղւոջէ փոփոխելով զայն 'ի քաղաքի անդ, բայց սովորաբար յաւարտ արարուածոյն։

Հ. Որպիսի՞ ինչ դէմք խնդրին յողբերգութեան.

Պ. Գլխաւոր դիմաց ողբերգութեանն պարտ է ազնուականս գոլ և իշխանազունս, որպէս զի աղէտք նոցա ազդողագոյնք իցեն։ Բնաւորութիւնք նոցա, մի՛ բարեացն և մի՛ չարաց ծայրացեալք իցեն. որպիսի պատուիրէ Արիստոտէլ։ Զանզի միոյն ամենևին տարապարտ վշտակրութիւն դժպհի թուի, իսկ միւսոյն արժանահաս վիշտ ոչ ինչ արժանի կարեկցութեան։ Այլ արդարոյ 'ի վշտակրելն տուեալ իցէ և պատճառս ինչ յիւրմէ տկարութեամբ իւիք, որ յաճախէ 'ի մարդիկ և դժուարախուսելի իսկ իցէ։ Վասն որոյ ոչ է պարտ 'ի մասինս յայսմիկ հետևել Յունաց, որք յանխորշելի ճակատագրէն և 'ի հրամանաց դից զամենայն չարիս առեալ մուծանեն 'ի ներքս, որպէս յԵդիպոսն Սոփոկղի է տեսանել։

Զան զամենայն կիրս զօրացեալ են արդ յողբերգութիւնս սէր և տարփանք, որ

տու հինսն չերևէր իսկ բնաւ ։ Եւ թէ-պէտ չիցէ պարտ մերժել զայն 'ի սպառ յողբերգութենէ, սակայն յաճախել զայն, և մանաւանդ իբր եկամուտ ինչ 'ի ներքս խառնել 'ի վէպսն, կարի անպատեհ է ։ Պարտ է և զճշգրիտ և զսեփական բարբառ կրից ըստ դիմաց իւրաքանչիւր պատշաճել, զի զկիրս իւրեանց կարասցեն ազդել յունկնդիրս ։ Կարևոր է առ այս ունել սիրտ դիւրազգաց, և 'ի նկարագրել զկիրս՝ լինել 'ի նոյն խորազգած ։ Լեզու կրից պարզ է և անպաճոյճ առանց կարի հանճարաբանութեանց և բարձր իմաստից, այլ յաճախութեամբ ձևոց՝ որ յուզելոց մտաց են ցոյցք, որպիսի են հարցուածք, բացագանչութիւնք և բայադարձութիւնք ։ Դարձեալ և համառօտ է, և ընդհատ ըստ բռնութեան կրից ։ Իմաստք բարոյականք չափով և ըստ պատշաճի 'ի կիր արկեալ 'ի մեծամեծ վիշտս և յանձկութիւնս և յանակընկալ յեղափոխութիւնս՝ բնականք են բազում ուրեք և յաւելուն զպերճութիւն քերթուածոյն, որպէս է տեսանել զայս 'ի թատերգութիւնս Մետաստազիոյի ։ Այլ 'ի կարի յաճախելն՝ կորուսանեն զոյժ և զազդուութիւն, որպէս յողբերգութիւնսն Սենեկայի է տեսանել ։

ԴԱՍ ԻԲ

Քերթողք ողբերգուք անուանիք.

Հ. Ո՞յք ոմանք կացին առ Յոյնս ողբերգուք անուանիք.

Պ. Ողբերգութիւն առ Յոյնս, որք նախածնօղք եղեն այնորիկ, պարզ էր յոյժ ըստ հանգուցին և ըստ դիպացն, և միութեամբ տեղւոյ և ժամանակի ճիշդ և անթերի: Առ նոսա և դիք 'ի ներքս խառնէին յողբերգութիւնս. և որ թերութիւն մեծ է՝ հրաշիւք ուրեք ուրեք լուծումն հանգուցին վճարէր:

Եսքիղեայ, որ հայր համարի յունական ողբերգութեան, լաւութիւնք մեծամեծք ընդ թերութիւնս խառն են՝ որպէս ամենայն սկզբնագիր մատենագրաց: Աշխոյժք, կորով և եռանդն յաճախեն 'ի քերթուածս նորա, բայց դժուարիմաց է յոյժ. և զի ինքն այր պատերազմող էր, լի են ողբերգութիւնք նորա պատերազմական նկարագրութեամբք, և առաւել վսեմք են քան հոգեշարժք. Յեօթանասուն և աւելի ողբերգութեանց նորա եօթն միայն ապրեցան:

Սոփոկղ վեհ քան զամենայն ողբեր-

դուս Յունաց, կարգաւորութեամբ հիւսուածոյն և վսեմութեամբ իմաստիցն առաւելու քան զամենեսին ։ Ճարտար է 'ի նկարագրութիւնս. և վէպք մահուն Եդիպեայ յԵդիպոսն իւր Կողոնէացի, և Եմոնեայ և Անտիգոնի՝ յԱնտիգոնոսն, ամենակատար օրինակք են թատերական նկարագրութեան ։

Եւրիպիդէս գործականաւն առաւելու քան զՍոփոկղ. և իմաստք բարոյականք հոծ և խիտ են յողբերգութիւնս նորա ։ Այլ 'ի հիւսուածն ոչ յոյժ ճարտար է, և ոչ ազատ 'ի ստգտանաց. և պարերգութիւնք նորա ոչ իբրև զՍոփոկղեայն պատշաճեալք ընդ առաջարկութիւն ողբերգութեանն ։

Հ. Ո՞յք ոմանք կացին առ Լատինս և առ Իտալացիս ողբերգուք անուանիք.

Պ. Առ լատինացիս սակաւք յոյժ պահին ողբերգութիւնք, այսինքն է Սենեկայինքն ևեթ, որք թէպէտև ըստ մեծի մասին 'ի Յունաց առեալ՝ այլ յոյժ հեռի 'ի նոցայոցն գտանին, և առաւել 'ի նոսա փայլէ իմաստութիւն քան բնութիւն ։ Ի վերականգնել ուսմանց յԻտալիա, Իտալացիք և յայսմ մասին եղեն նախատիպ օրինակք Եւրոպայ. և յաճախեցին առ նոսա յանցեալ դարու ողբերգութիւնք

ընտիրք . որպիսիք են Մեռովպէն՝ որոյ քերթող Մաֆֆէի, Ոգիսեւսն՝ որոյ քեր֊թող Լածծարինի, Կորիոլանոսն և Գիւ֊դէն՝ որոյ քերթող Յովհաննէս Պետրոս Նանիմթթի, Մանասէն և Սեդեկիայն և Գիւոն՝ որոյ քերթող Կրանելլի : Բայց քերթողահայր ողբերգուաց առ Իտալա֊ցիս համարի Ալֆիէրի, որոյ են ողբեր֊գութիւնք իբր քսան և երկու :

Հ. Ո՞յք ոմանք կացին առ գաղղիացիս ողբերգուք անուանիք :

Պ. Քոռնէյլ և Ռասին և Վոլթէռ զթատերգութիւն 'ի Գաղղիա պանծա֊ցուցին յոյժ, գերազանցեալ և քան զՅոյ֊նըս յաճախութեամբ դիպաց և բազմա֊դէմ կրից, և ճշգրիտ նկարագրօք բարուց. արուեստ, կարգաւորութիւն, միութիւնք իրաց ժամանակի և տեղւոյ, ոճ պերճ և քերթողական, խիտ առ խիտ իմաստք, և ամենայն օրէնք ողբերգութեան պահին 'ի նոսա : Միայն թերութիւն նոցա է զի շատախօսք են և երկարաբան, որպէս ինքն իսկ Վոլթէռ խոստովանի զայս, և բազում ուրեք նուազ է 'ի նոսա եռան֊դըն և կորով և բնիկ շեշտ կրից : Գե֊ղեցկագոյնք և անուանիք յողբերգութիւնս Քոռնէյլի են Կիդն, Ովրատիոս, Պոլիէ֊տոս և Կիննա : Ռասինի՝ Գոթողիայն,

Իփիգենիա, Փեդրա, Անդրոմաք և Միհըրդատ ։ Իսկ Վոլթերի՝ Զայիրայն, Ալզիրա, Մերովպէ և Որբն սինէացի ։

Նշղեն և առ անգղիացիս ողբերգուք. որպէս Շէքսփիր այր մեծահանճար, բայց առանց կիրթ ախորժակաց ։ Բազում են 'ի քերթուածս նորա հատուածք և տեսարանք ընտիրք, այլ չիք և ոչ մի 'ի նոսա ողբերգութիւն ամբողջ և ըստ կարգի. սակայն նկարագիրք բարուց և լեզու կրից պահին 'ի նոսա անթերի ։ Յետ նորա կացին առ անգղիացիս Տրայտըն, Ադիսըն՝ որոյ անուանի է ողբերգութիւնն Կատոնի, և այլք ոմանք ողբերգուք ։

Հ. Տուր ինձ յօրինակ զհիւսուած միոյ յընտրելագունից ողբերգութեանց.

Պ. Գոթողիայի դստերն Յեզաբելայ իրքն յայտնի են 'ի սուրբ գրոց. զի սա 'ի մեռանել որդւոյ իւրոյ Ոքոզիայ արքայի՝ կորոյս զամենայն զաւակ թագաւորութեան 'ի տանէն Յուդայ և թագաւորեաց ինքն ։ Բայց Յովսաբեթ դուստր Ոքոզիայ քահանայի, գողացաւ զՅովաս զորդի թագաւորին 'ի միջոյ որդւոցն կոտորելոց, և թագոյց զնա 'ի տաճարին զամս վեց. և ապա Յովիդայէ 'ի ձեռն զօրավարաց և ղևտացւոց թագաւորեցոյց զնա, տուեալ սպանանել զդշխոյն և զՄաթան

զքուրմն Բահաղու :

Արդ Ռասին առեալ զնոս զայս 'ի վէպըս իւրոյ ողբերգութեանն, համարի անցեալ զվեց ամս Թագստեան արքայորդւոյն, և սկսանի զողբերգութիւնն այսպէս :

ԱՐԱՐՈՒԱԾ Ա·

Տեսարանն է 'ի գաւթի տաճարին :

Տեսարան Ա· Աբեններ զօրավար ողբայ զաղէտս ազգին առ Յովիդայէ, և զամպարշտութիւն Գոթողիայ և զՄաթանայ քրմին Բահաղու, և զոխութիւն նոցա ընդդէմ Յովիդայեայ յայտ առնէ : Յովիդայէ քաջալերէ զնա յուսով վախճան լինելոյ չարեացն 'ի ձեռն նորին իսկ ինքեան · նա վարանի, և քահանայն յորդորէ զնա ապաւինել 'ի զօրութիւնն Աստուծոյ :

Տես· Բ· Առաջարկէ Յովիդայէ Յովսաբեթի զխորհուրդ իւր թագաւորեցուցանելոյ զմանուկն Յովաս : Յովսաբեթ ցանկայ իրացն, այլ երկնչի ընդ վտանգ մանկանն, գորովի և արտասուէ : Յովիդայէ խրախուսէ զնա 'ի զօրութիւնն Աստուծոյ· և 'ի զրոյցս անդ յայտնեն պատրաստութիւնքն, և չև ևս գիտել մանկանն զանձնէ թէ ո՛ իցէ՝ սնանելով 'ի տաճարի անդ ընդ

Զաքարիայ որդւոյ Յովիդայեայ որպէս մանուկ ումն որբ և անծանօթ։

Տես. Գ. Զաքարիա և Սաղովմէ քոյր նորա ընդ պար դստերացն ղեւտացւոյ պատրաստին յանդիման լինել տեառն 'ի հնչիւն փողոյ տարեդարձի ընդունելու-թեան պատգամացն 'ի Սինա։ Յովսաբեթ յորդորէ զնոսա յօրհնութիւնս տեառն։

Տես. Դ. Պարերգութիւն դստերացն.

Պարն. Ըղձա երկիր լըրիւ իւրով
Ըղձա հնչէն ալիքն 'ի ծով.
Փողք և տաւիղք զանուն նորա
Հընչեսցեն միշտ անլըռելի.
Երկնագոյն պաշտեսցի նա
Եւ քան ըզծնունդ ժամանակի։
Նոյնն և մեր միաշունչ
Խառնեսցին երգք 'ի մըրմունջ։
Ոճ. Ընդ վայր բըռունք անհամբոյր,
Խընուն զբերան օրհներգու.
Զանուն նորա որ աւուր
Պատմէ յաւէրժ անլեզու
Պարն. Ըղձա երկիր. Ըղձա հընչէն. Նոյնն և։
Անւ. Քե յակնապարար ներկանին 'ի գոյն
Ծաղկունք երփնազարդ,
Պըտղնին վարսագեղ ծառրանան կողերք
'ի պըտուղ պարարտ,
Ընդունի երկիր շող յարեգական և
շաղ յաստեղաց,
Եւ փոխադարձէ տոկոսեօք հանդերձ
ըզբերս արմըտեաց։

Աշ.   Հրաման ած է զարեգակամբ ծագել
ըզլոյս իւր յերկիր,
Ձեռին պարգեւք են Աստուծոյ նըշոյլք
նորա կենսաձիր:
Այլ քան ըզլոյս մեծ են մեզ պար-
գեւք իւրոցն օրինաց,
Եւ անկըշիռ ընդ հանուրց աստուա-
ծատուր պարգեւաց:
Աշ.   Լեառըն Սինա բարձրագլխակ,
Յաւերժացո ընդ մայրիս քո
Զմեծի աւուրս այս յիշատակ,
Յոր 'ի հրադեղ քո գագաթան
Վարագուրաւ ընդ խիտ ամպոց
Շողացոյց տէր յաչըս մարդկան
Զաղօտ նըշոյլ իւրոց փառաց:
Առ ի՞նչ հուրդ այդ, ալէ ասա,
Զի՞նչ այդ ցոլմունք փայլատականց.
Ծուխ թանձրամած յուղխից տե-
պար,
Փողոց հընչիւն, ճայթք որոտմանց,
Եւ շառաչող օդոց գուպար:
Թէ տապալե՞լ զտարերց սահման,
Կամ թէ զերկրի՞ եկաւորէ
Քանդել զհիմունս յաւերժական:
Աշ.   Ոչ, ոչ առ այդ. գայ նա միայն
Ընտրականի իւրոյ տոհմին
Օրէնըս տալ անմահական.
Գայ 'ի ծագել առ հարսըն մեր
Զիւրոցն ըզլոյս պատուիրանաց,
Եւ ըզսիրոյն տալ մեզ պատուէր:
Պարն.   Ո՛վ աստուածագիծ օրէնք սըրբուն,
Ո՛վ անմահարար երջանիկ հրաման,
Ի ձեզ բարութեն և արդարութեն,

Եւ ոչ այլ ուրեք լիցէ օթեւան:
Ո՛վ, զի՞ գեղեցիկ և զի՞ վայելուչ,
Սիրոյն ԱՅ գոլ վերընկալուչ:

Ոռ. Ըզ վիշապն եգիպտական
Բուռնեալ 'ի ջուրսըն Նեղոսի,
Ջախջախեաց մեր յանդիման,
Ըզլուծն 'ի մէնջ բարձ ըզնորին.
Ած ըզմեզ ընդ անապատ
Հացիւ ջամբեալ 'ի հրեշտակաց.
Պարգևեաց, ո՛վ ձիր առատ,
Ջանձն և զօրէնըս սըրբութեան.
Այսքանեաց փոխան բարեաց
Ոչինչ խընդրեալ՝ սիրոյն 'ի բաց:

Նոյնն. Ցալիս ծովուն արկ նա հերձուած,
Ջուր յանջրդի գնացոյց վիմաց,
Ջանձն և զօրէնըս սըրբութեան,
Ո՛վ ձիր առատ, մեզ պարգևեաց:

Այլ ոռ. Զի՞ ծառայաբար հարկանիս 'ի դող
Ո՛ ապաշնորհ յերախտիս.
Ցայսքան բարութեանց Աստուածըն տըւող
Զի՞ որդեպէս ոչ հայիս:
Այսպէս դըժուարա՞ւ սիրտ քո բե-կանի,
Ա՞յսչափ անմէտ ես 'ի սէր.
Գերեացն է բնութիւն պատուել առ-ահի,
Լեր դու որդեացըն պատկեր:

ԱՐԱՐՈՒԱԾ Բ·

Տես·· Ա· Դառնայ Յովսաբեթ առ պարն, ՚ի միասին ընդ նոսա յանդիման լինել սեղանոյ տեառն։

Տես·· Բ· Զաքարիա հասեալ տաղնապաւ գուժէ զմուտս Գոթողիայ ՚ի տաճար անդր, և զՅովիդայեայ մերժել զնա ՚ի բաց ՚ի սրբութեանցն ։

Տես·· Գ· Գոթողիա տաղնապեալ խնդրէ զՄաթան ։

Տես·· Դ· Աբեններ հնարի ցածուցանել զցասումն նորա ընդ Յովիդայէ ։

Տես·· Ե· Գոթողիա պատմէ զտեսիլն ահաւոր երևութացեալ նմա ՚ի քուն, յորմէ կասկած առեալ զմանկանէն՝ հետազօտէ զնմանէ։ Աբեններ փարատէ զերկիւղ նորա ։ Մաթան գրգռէ զդշխոյն բառնալ զմանուկն ՚ի կենաց ։

Տես·· Զ· Մաթան յաճախէ զերկիւղ դշխոյին բանսարկութեամբ, իբր թէ Յովիդայէ թագաւորեցուցանել խորհի զմանուկն՝ թէպէտ արքայորդի թէպէտ իւր որդի իցէ նա ։

Տես·· Է· Գոթողիա հարցփորձ առնէ զՅովսաբեթ և զմանուկն. և ՚ի խօսից

մանկանն 'ի գուԹ շարժեալ, յորդորէ զնա գալ յարքունիս իւր. մանուկն հրաժարէ. դշխոյն 'ի բաց գնայ սրտմտեալ ընդ դաստիարակիչս նորա ընդդէմ իւր:

Տես. Ը. Օրոյցք Յովսաբեթի ընդ Յովիդայեայ զկրացն:

Տես. Թ. Պարերգութիւն դստերացն.

Ոտ. Ցընծա՛ երկիր յուսապատար,
Նոր շողեաց աստղ յերկնից կամար:
Թէ ճառագայԹ սըփռէ այսպէս,
Նորանըշոյլ եկեալ 'ի տես,
Զխո՛րդ չըքնաղ և անպատում
Փայլեսցէ սա յաւուր միում:
Թէ զպերճութիւն ոտից կոխան
Առնէ մանուկ անախական,
Թէ չտայ այժմէն ունկն 'ի հրապոյր,
Զինչ լիցի սա յաւուր միում
Ծաղկեալ ալեօքըն ձիւնաԹոյր:
Ան. Մինչդեռ 'ի բագին գոգոզեան կռոց
Ծեպին խուռնընԹաց նուիրաբերք
խընկոց,
Արի պատանեակ բըրդի 'ի նախանձ,
Քարոզ անվեհեր անմահին փառաց.
Սաստէ սպանողից՝ իբր առ Յեզաբէլ
Հրաղէն մարգարէն երբեմըն սաստէր:
Ան. Մարգարէի՞ արդեօք իցես դու շառա-
ւեղ,
Ո՞վ զազգատոհմըդ պատմեսցէ զա-
ւա՛կ անմեղ:
Ան. Միւս Սամուէլ դու սիրասուն պատա-
նեակ,

Աստուածութեան սեղանոյն զարդ և
սպասեակ․
Խորայեալն յուսոյ եղև նա նեցուկ,
Միթէ 'ի զո՞ւր և մեք 'ի քեզ յուսա-
ցուք:

Այլ. Զո՛ր երանի քեզ կարդամ
Սիրեցելոյդ յանմահէն,
Զոր 'ի պարգևըս փարթամ
Ծընեան երկինք և պահէն:
Զուր թագուցին քեզ թակոյդ
Անպարըշտաց ժողով ժանդ.
Զոր տէր խրատէ՝ ոչ է մարթ
Վարմից նոցին գոլ պատանդ:

Պարն. Քեզ երանիք անըսպառ,
Երկնից քարոզ անպատկառ.
Քեզ երկնայնոցն օրինաց
Աստուածուսոյց խորազգաց:

Ոճ. Առաքինութեան դեռ բողբոջ մատաղ,
Ի՞ր յայսքան վըշտաց նեղի 'ի զըմեալ.
Առ իմէ՞, ո՛վ տէր, 'ի խընդիր սիրոյդ,
Դիպչին ընդ առաջ մարդոյ խոչք և
խութ.
Ընդէ՞ր ըզնովաւ պատին տարապարտ
Թշնամիք ահեղ տալ ճակատամարտ:
Ծածկեցին զերկիր ժողովք ամպա-
րըշտաց,
Ո՞ւր արդ սուրբ քոյին թաքիցեն ան-
վըշտ:

Այլ. Լռաւըն Սիոն աստուածաբնակ,
Անմահական պըղնձեալ փառօք,
Լերանց հանուրց զարդ և պըսակ,
Դալարագեղ զայդ մերկեա քող,
Եւ որ 'ի գլուխ քոյին ցօղէջք

Քեզ յարտասուաց դարձցին 'ի ցօղ։
Եւ դու քաղաքըդ վեհապանծ,
Յեսսէածին Թագաւորին
Եղեալ երբեմըն լոյս աչաց,
Ա՛ռ զորդիս քո նիստ դու 'ի կոծ,
Ահա երկնիցըն բարկութեան
Տեղան 'ի քեզ նետք բազմահոծ։
Հայեա՛ց 'ի բաղդ քո այլափոխ,
Տես զի դահոյք քոյ արքայից
Ո՛յր ընդ ոտամբ գնացին 'ի կոխ։
Պար. Ողբա՛ և դու տուն արքունեան,
Տե՛ս զի դահոյք քոյ արքայից
Ո՛յր ընդ ոտամբ եղեն կոխան։
Տե՛ս 'ի տեղւոջ յորում Դաւիթ
Աստուածարեալ 'ի ձայն երգոց
Օրհնէր զԱստուածըն Ճշմարիտ,
Տօնախմբեն արդ Բահաղուն.
Եւ զոր արքայք քո պաշտեցին,
Հայհոյեն արդ սոքա զանուն։
Ոմ. Մինչև յե՞րբ Տէր, մինչև ցո՞ր վայր
Ժըպրհեսցին անպատկառ
Թըշնամեաց քոց կաճառ,
Քեզ դիմամարտ բերել պայքար։
Յե՞րբ 'ի տաճար քո վեհափայլ,
Ոչ կարկի շընչասպառ
Հայհոյչացըն բարբառ,
Ուր և քրովբէք կան խէթահար։
Ան. Առաքինւոյն, ասեն նոքա,
Ո՞ր շահք իցեն, այլ ասա,
Ի բերկրութեանց առնուլ հրաժեշտ,
Եւ զհաճոյից մերժել ըղձեշտ։
Եթէ նոքօք վարելըն էր պեղծ,
Աստուածըն ձեր զի՞արդ ստեղծ։

Ալւ. Թողէք եկա՛յք, հրճուեսցուք,
Պէսպէս ծաղկանց բոլորիւք
Ըզգլուխըս մեր պըճնեսցուք.
Աւուրց սահման վաղանցուկ
Բաղդին ճըշդեաց մեզ հաճոյք.
Թէ ոչ այժմէն փութասցուք,
Կենացս ընդ հուպ հասցեն չուք.
Մի՛ յապադայն անըստոյգ
Լիցի յուսոյս մեր նեցուկ:

Պոր. Սակայն, ո՛վ տէր, մինչ հաճոյից անց-
ցեն բոպէք,
Եւ 'ի բարեացըն կողոպուտ
Ամպարըշտաց մնասցեն ժողովք թը-
շուառ և հէք,
Անտեսք փառաց քոյ անկապուտ,
Լացցեն նոքա և սարսեսցեն երկիւղա-
բեկ.
Յանժամ յորդիս քս բերեալ
գութ
Փարատեսցես 'ի նոցանէ զաչացըն
մէգ,
Եւ 'ի վայելս անմահ լուսոյդ
Օրհնեն ըզքեզ 'ի յարապուարճն այն 'ի
ցերեկ:

Յհ. Աշխարհի զբաղմանց վայելք բերկրա-
կան,
Ըստուերաց հանդէտ
Փախիցեն անհետ,
Եւ զինչ 'ի նոցունց թողասցի մարդկան...
Այն զոր ցայգական անուրջք խաբեբայք
Թողուն 'ի ցերեակ
Պատկեր անէակ,
Մինչ ըզհեշտ քընոյ թըռչին փախստեայք:

Ո՛վ անօրինին արթնութիւն տխուր․
Ի խորախուհս անճառ
Աչքաւորն թըշուառ
Ընդ քեզ զուարճակից մինչ բազմի անդորր,
Քամեսցեն նոքա մինչև 'ի յատակ
Զոր դըժոխըմբեր
Նոցին խառնեցեր
Յաւուր քո ցասման դառնութեան բա-
ժակ ։
Պար․ Ո՛վ քուն վաղանցիկ,
Արթնութիւն ահեղ,
Աշխարհ խաբուսիկ ։

ԱՐԱՐՈՒԱԾ Գ․

Տես․ Ա․ Մաթան և Նաբաղ մտերիմ նորա խնդրեն խօսել ընդ Յովսաբեթի ։

Տես․ Բ․ Մանուկն Զաքարիա ազդ առնէ նոցա չմտանել 'ի վայրն անմատոյց անսրբոց ։

Տես․ Գ․ Դստերքն զարհուրեալ ելանեն 'ի բաց ։ Մաթանայ ընդ Նաբաղայ խօսակցութեամբն յայտնին վարանք և տագնապ դշխոյին, և պատճառք ոխերիմ թշնամութեան Մաթանայ ընդ Յովիդայեայ, և այլ կարևորք ։

Տես․ Դ․ Մաթան խնդրէ խոստմամբք 'ի Յովսաբեթէ զմանուկն կասկածելի ։

Տես․ Ե․ Հասանէ Յովիդայէ, մերժէ զնոսա 'ի բաց ։

Տէս. Զ. Դարձեալ սկսանի Յովսաբեթ երկնչել վասն մանկանն. Յովիդայէ քաջալերէ զնա 'ի կատարումն իրացն։

Տէս. Է. Պարերգութիւն դստերացն։

Պար. Առ քեզ գոչեն, տէր տէր, անձինք ծարաւեաց,
Իջցեն 'ի սիրտ մեր բանք քոյոց պատգամաց,
Իբր 'ի գարնան կանաչագեղ 'ի դալար,
Այգուն այգուն ծաւալի ցօղ զովաբար։
Յովիդ. Զայնի խմբում երկինք լերունք ունկնդիր,
Աստուածախօս լուիցէ բանիս և երկիր։
Մի ասասցես զաւակդ դու յակոբեան,
Եթէ նիրհէ երբէք քոյին պահապան։
Անօրէնին՝ բացցի երկիր 'ի հիմանց,
Զի զարթուցեալ է տէր յամպոց 'ի բարձանց։
Զիա՛րդ շլացաւ (*) ոսկին մաքուր Սովփերայ,
Այլագունեաց դարձաւ 'ի գոյն կապարեայ . . .
Իսկ այդ ո՛վ է քահանայդ (**) մեծ սրախողխող
Առ սեղանովդ անկեալ յարեան իւր յողող.
Ողբա՛ Սաղէմ, ողբա՛ քաղաք սիրագրուժ,

(*) Յովաս։ (**) Զաքարիա։

Մարգարէիցն ալբեալ յանպատր ա-
պաժոյժ.
Աստուածըն քո խըղկեաց զըլըր քո սի-
րոյդ,
Եւ 'ի խընկոց քոց արդ գըլըդուի 'ի զայ-
րոյթ :
Ա՜հ, յո՛ դիմեն մարք և կանայքդ այդո-
քիկ, (*)
Եւ զաղածըրի տղայոցդ երամ ծուր տա-
նիք . . .
Յաւեր մատնեաց տէր ըզդըշխոյդ քա-
ղաքաց,
Քահանայք քո գերի վարեալ յօտա-
րաց,
Եւ Թագաւորք անկցին յիւրեանց գա-
հոյից,
Մի՛ ևս ոք այլ գայցէ 'ի խումբըս տօ-
նից :
Տապալեսջի՛ր տաճարըդ սուրբ կործա-
նեալ,
Թօթափեսցին շանթիք հրավառ 'ի
մայրեաց :
Սաղիմ, Սաղիմ, սիրտ իմ ընդ քեզ գե-
լանի,
Ո՞ր ձեռն ըզքոյդ մերկեաց տեսիլ գե-
ղանի :
Ո՛հ, թէ յանկարծ 'ի լալ զաղէտըս
քոյին,
Կըրկնավըտակ աչք իմ յաղըիւր դառ-
նային :
Յ-ՀՆԴ. Ահաւասիկ Երուսաղէմ Նորաքանչ,

(*) ԳԵՐՈՒԹԵԱՆ ԲԱԲԵԼՈՆԻ :

Ծագէ անդուստ պայծառագեղ 'ի ճա֊
ճանչ .
Վերածնանի Սիոն (*) յերկիր անա֊
պատ ,
Անմահական բերեալ կընիք 'ի ճակատ:
Քան ըզնախնին տեսիլ գորա վայելուչ ,
Մանկամբք (**) ըզգիրկսըն տեսանեմ
թաթաւուչ ,
Որք զօտարին լուծին և ոչ զիւր եր֊
կունս .
Ազգք և ազինք ձայն տուք երգոց 'ի
բարձունս:
Բարձիր 'ի վեր կանգնեաց քաղաքդ
Աստուծոյ ,
Հայեա՛ց ըզքեւ նըկուն զհանուրս 'ի
տես քոյ .
Զահեղախրոխտ արքայս մածեալ 'ի
գետին ,
Գարշապարաց քոց համբուրել ըզփո֊
շին :
Եւ ժողովուրդք նախանձաբերք իրե֊
րաց ,
Դիմեն ահա երթալ 'ի լոյս քոց շաւ֊
ղաց :
Զո՜ր երանի փողեմ նըմին արժանի ,
Յորոյ 'ի սիրտ անկաւ սիրոյդ քո լուցկի:
Ցօղեա՛ երկին ըզցօղ քոյին կենսաձիր ,
Եւ բըղխեսցէ զազատարար իւր երկիր :

(*) Երուսաղէմ :　　　(**) Հեթանոսք :

Սաղոմէ և պար դոփերաց.

Սաղ. Ո՛վ աղէտք մեծ, ո՛վ արհաւիրք մա-
հադոյժ.
Թէ մահացու սիրտ ունիցի՛ ընդ այս
ժոյժ.
Թէ ա՜յս իցեն երախայրիք նախանուէր
Զոր անմահին այսօր արժան էր ձօնել:

Ոփ. Ո՛վ յեղակարծ դէպք և տեսիլ ահար-
կու,
Ահա սուսեր և տէգ, գործիք մար-
տացու,
Խաղաղութեանն ասա 'ի յաւէրժ օ-
թարան
Քահանայից տեառն 'ի ձեռին ցոլա-
նան:

Այլ. Ա՛հ, առ ի՞մ քաղաքըդ սուրբ լռես
դու,
Յայսքան վըտանգ անկարեկիր ակն-
արկու.
Ընդէ՞ր և դու Աբեններ կաս անմը-
ռունչ,
Ըզգըրբութեան տեղիս լըքեալ անտէ-
րունչ:

Սաղ. Այլ յայլքունիս, ուր իրաւունք և օրէնք
Բռնութիւն է և որոգայթ չարանենգ,
Ուրանօր բարձք աւագութեանց և
պատիւ,
Հրապարակացն է վաճառու երկիւղիւ,
Ի՞բր իշխեսցէ ոք ըզբերան իւր բանալ,
Ի պաշտպանել զանմեղութիւն բըռ-
նահար:

Այւ. Ո՞ւմ հանդերձէք ըղպըսակդ այդ տագ-
նապաւ,
Ուր Իսրայէլ հեծէ զայսքան աղմկաւ:
Սաղ. Ահա երկնիցըն գուշակեաց մեզ Թարգ-
մամն,
Զոր ինչ ազդեաց տէր 'ի սրտին գոր-
ծարան.
Այլ իմաստից խորհրդօրէն բարբա-
ռոյդ
Ո՞վ գիտասցէ առնել ըզմեզ խելա-
մուտ.
Յօգնե՞լ արդեօք Թէ ընդդէմ մեր 'ի
գուպար,
Յարիցէ տէր առնուլ ըզզէն և զաս-
պար:
Պարն. Մերթ ըզչարեաց գուժարկէ նա
սպառնալիս,
Եւ մերթ բարեաց գուշակէ մեզ աւե-
տիս.
Բա՛րէ, զիա՛րդ Ձեմին ամոլք միալուծ,
Սէր այսպիսի ընդ այնքանոյ ցասման
ցոյց:
Ոռ. Հօր 'ի Սիոն Ճարակեացի մոլեգին,
Եւ տարազարդ հիմունք նորա քան-
դեսցին:
Այն. Յաւերժասցին հիմունք նորա անխա-
խուտ.
Ո՞ւր անմահին խոստումն երբէք դի-
պաւ սուտ:
Անաշ. Անշըքեսցի զէրծ 'ի զարդուէն և Թա-
փուր.
Նէրն. Պըծնեալ զարդուք շուք առցէ նա ընդ-
հանուր.

Առջ. Տապալեցաւ իջցէ 'ի վիհս անդընդոց .
Երկն. Բարձր 'ի ճակատ կըցեաւ նա ընդ-
ամպոց:
Առջ. Նախատինք մեծ .
Երկն. Ո՛վ պերճութիւն անպատում:
Առջ. Գոյժք արտասուաց .
Երկն. Ո՛վ ցընծութիւն անարուում :
Երրորդ. Մի՛ խռովեսցիր աստուածընտիր ժո-
ղովուրդ ,
Յաւուր մեծում լուասցի քեզ այդ խոր-
հուրդ :
Երեքեն. Համբոյր մատո ձեռին նորա մեծա-
սաստ .
Քաջալերեալց սիրոյն 'ի յոյս բարե-
բաստ :
Այլ. Ո՛վ երջանիկ սիրտ որ հարաւ քեզ 'ի սէր,
Եւ 'ի հրամանս քո , տէր , կայ զտիւ և
զգիշեր :
Անպարըշտաց մինչ ծըփին սիրտք իւր
ըղձով,
Խաղաղութիւն տիրէ 'ի նմա անվըր-
դով .
Ոչ 'ի սուրն և ոչ 'ի վեր քան զարփին ,
Երանութիւն չիք քան ըղձոյն մահա-
ցուին :

ԱՐԱՐՈՒԱԾ Դ.

Տես. Ա. Յովսաբեթ պատրաստէ զթագն և զմատեանս սուրբս . մանուկն զարմանայ ընդ իրսն :

Տես. Բ. Յովիդայէ թագաւորեցուցանէ

զՅովաս, և անկեալ երկրպագէ մանկանն. նա այլ յայլմէ լինի, և քահանայն յայտնէ նմա զամենայն զգաղտնիսն ։

Տես. Գ. Յովիդայէ յանդիման առնէ ղևտացւոց զընիկ թագաւորն, պատմելով նոցա զամենայն անցսն, և յորդորէ զնոսա և երդմնեցուցանէ մարտնչել հաւատարմութեամբ 'ի վերայ նորա. երդմնս առնէ և զթագաւորն 'ի պահպանութիւն օրինաց, և տայ նմա խրատս խանդաղատելիս ։

Տես. Դ. Յայտնի Յովաս պարու զատերացն, և ամենեցուն որ 'ի տաճարին ։

Տես. Ե. Գուժկան գալոյ դշխոյին փորոք 'ի վերայ տաճարին ։ Զարհուրի Յովսաբեթ. Յովիդայէ կարգէ 'ի դարանի զղևտացիս զինեալս, և խրախուսէ զամենեսին ։

Տես. Է. Պարերգութիւն զատերացն ։

Սաղմոս և պար դստերաց .

Պար. Մատիք մատիք, որդիք Ղևեայ,
Տիրահրաւէր 'ի պատերազմ.
Եղծցի բանակն աստուածամարտ,
Թէպէտ ահեղ և ապընդակաղմ ։
Ա՛հ, ոչ ուրեք մարտ փառաւոր
Քան զոր բացաւ ձեզ ընդ առաջ .
Ըզնախահարց ձերոց սուսեր
Ի վրէժխնդիր շողացոյց աջ ։
Մատիք մատիք որդիք Ղևեայ,

Տիրահրաւէր յայս ասպարէս •
Եւ արքայիդ և Աստուծոյ
Ձեօք փայլեսցէ փառացն հանդէս ։
Ոգ. Ո՞ւր են, Աստուած Իսրայէլի,
Տարափք նետից քոց վրէժխնդիր ,
Զոր 'ի յամպոցդ ահեղանէ
Ի քում ցասման տեղայ յերկիր ։
Թէ փոխեցա՞ր 'ի բնութենէդ ,
Ո՞չ ևս իցես տէր նախանձոտ •
Թէ թուլացա՞ւ աղեղըն քո ,
Ո՞չ ևս ճայթէ նետ մահահոտ ։
Ազ. Դարձ, գըթութեա՛ց տէր, դարձ առ մեզ,
Ո՞ւր են խնամք քո մըշտազեղ •
Որ շուրջ ըզմեօք են՝ յարհաւրաց
Փըրկեա՛ զորդիս քո բազմամեղ ։
Միթէ մեղա՞ց ևեթ մերոց
Յունկըն քոյին ազդէ բողոք •
Ո՞չ և խընամք քո որդեսէր
Ի մաղթանաց զիջցի յողոք ։
Ազ. Ահա 'ի քեզ լարեաց զաղեղն
Ամպարշտաց ժողով ժըպիրհ ,
Եւ 'ի քեզ տէր ուղեորէ
Յանդուգն ըզնետ իւր գըկալիր ։
Անյիշատակ լիցին, ասէ ,
Տօնք անմահին 'ի յերկրէ •
Ըզլուծ նորա թօթափեսցուք ,
Ազատեսցի՛ն մահացուք •
Ի սայր սըրոյ մեր 'ի տապաստ
Անկցին սըրբոցն իւր երամ •
Յաւեր դարձցին սեղանք խընկոց ,
Եւ խառնակօխ 'ի փողոց •
Փառաց ու անուանն առ հասարակ
Բարձցի յաւերժ յիշատակ •

Ոչ ինչն և ոչ օծեալ նորա,
Մի՛ տիրեսցեն մեր վերայ:
Պար. Ո՞ւր են աստուած Իսրայէլի
Տարափք նետից քոց վրէժխնդիր.
Թէ թուլացա՛ւ աղեղըն քո,
Ո՞չ ևս տեղայ նետս 'ի յերկնի:
Ոճ. Ո՛վ հրաշագեղ բընի զարմից,
Դու վերջահաս փըթթեալ ծաղիկ,
Թագաւորաց մերոց նըշխար
Պահեցար դու չարաբաստիկ:
Ա՜հ թէ 'ի սուր անկարեկիր
Խորթացելոյ քոյոյ ծնողիդ,
Տեսցուք ըզքեզ խոց միւսանգամ,
Քամեալ զյետին արեան քո շիթ:
Թէ յանմահից ոք երկնաւորք,
Եկաց պաշտպան քեզ առընթեր,
Եւ մահացու 'ի հարուածոց
Ըզթըշնամւոյն փրկեա՜ց սուսեր.
Կամ յանհրըշոյլ 'ի դամբանէն,
Ձայն 'ի յերկնից կենդանաձիր,
Ջաճի՜ւն քոյին վերկենցաղեաց,
Ի մեռելոց գոլ կենսակիր.
Աւլ. Մի՛ տէր մի՛ սմա գրեսցես զոճիրս,
Ըզհեստելոցն 'ի քէն իւր հարց.
Մինթէ 'ի սպա՜ռ թողցես ըզսա,
Սըմա զնոցա՛յն տաս փոխադարձ:
Պարն. Դպրք. Ո՞ւր են.. Որ շուրջ.. Փրկեա:
Ոճ 'ի Ը Ի–. Ա՜հ, մի՜ լռէք քորք սիրուհիք,
Ըզձայն փողոյն տիւրացի:
Սաղ. Այլ և վայրագ զօրականին
Գըրգռի աղմուկ 'ի բացի:
Ա՜հ, 'ի շաչիւն զինուց նոցա
Սիրտ իմ 'ի դող հարկանի:

Օ՜ն, փախիցո՛ւք 'ի տեղուոջէս,
Տեղի տացուք փոյթ աստի,
Պատրաստել 'ի սրբութեանցն
Ամպածածուկ հովանի ։

ԱՐԱՐՈՒԱԾ Ե․

Տես․ Ա․ Զաքարիա և քոյր նորա և պար դստերացն զարհուրին ընդ շաչիւն զինուցն, և ընդ խուճապ ղևտացւոց ։

Տես․ Բ․ Հասանէ անակնկալ Աբեններ զերծեալ 'ի բանտէ ։ Յովիդայէ յայտնէ նմա զզաղտնիսն ցայնվայր անծանօթս նմին ։ Աբեններ խրախուսէ 'ի պաշտպանութիւն արքայորդւոյն ։

Տես․ Գ․ Յովիդայէ տայ զկարևոր հրամանս ։

Տես․ Դ․ Յովիդայէ բազմեցուցանէ զՅովաս յաթոռ ընդ վարագուրաւ, և հրաման տայ մուծանել 'ի ներքս զդշխոյն հանդերձ Թիկնապահօքն իւրովք, և փակել զդրունսն ։

Տես․ Ե․ Դշխոյն մտեալ 'ի ներքս ապառնալեօք և սրտմտութեամբ պահանջէ զմանուկն ։ Յովիդայէ բանայ զվարագոյրն, և ահա Յովաս բազմեալ 'ի գահոյս, և Աբեններ առ նմա, և բազմութիւն ղևտացւոց սուսերաւորք շուրջ զնովաւ․ և յայտնէ զազգ և զիրաւունս մանկանն ։ Դշխոյն

զարհուրի․ բանին խորք տեսարանին, և ղևտացիք սպառազէնք խուժեն յամենայն կողմանց 'ի թատրն։

Տես․ Զ․ Ազդ լինի ցրուել զօրաց դշխոյին 'ի լուր թագաւորութեան Յովասայ և ըմբռնելոյ դշխոյին 'ի ծուղակ։ Յովիդայէ հրամայէ քարշել զդշխոյն արտաքս 'ի սուրբ տեղւոյն, և սպանանել զնա։

Տես․ Է․ Յովիդայէ ձայն տայ ղևտացւոց՝ ածել զժողովուրդն յուխտ հաւատարմութեան ընդ բնիկ թագաւորին։

Տես․ Ը․ Լուր հասանէ կատարելոյ սպանութեան դշխոյին և Մաթանայ։ Յովիդայեայ յորդորական խրատուն առ թագաւորս վախճան առնի ողբերգութեան։

Այսքիկ են որպէս թէ կմախք ողբերգութեանն, զորս ապա քերթողն վեհ և գեղեցիկ իմաստիւք, և զօրավական և հոգեշարժ կրիւք, որպէս ջլօք և մարմնով պատեալ, և քերթողական ձևովքն և ասացուածովք վայելչացուցեալ, և առանց խոտորելոյ 'ի բնագրէ սուրբ գրոց՝ յաւելեալ զկեղծիս, և ճարտար հանգուցիւ անծանօթութեան մանկանն 'ի վարանս կալեալ զմիտս մինչև ցվախճան, և ընդ բազմափոփոխ տեսարանս պահեալ զպարզութիւն, ամենակատար ընծայէ օրինակ ողբերգութեան։

ԴԱՍ ԻԳ.

Կատակերգութեան կանոնք :

Հ. Զի՞նչ է կատակերգութիւն .

Պ. Համգոյն ողբերգութեան ձեւացութիւն 'ի տեսարանի, զուարճաբար հրահանգելով զտեսօղս, և ծաղր կացուցանելով զմոլորութիւնս և զյոռութիւնս : Նմին իրի վէպք 'ի սմա ոչ զաւագաց արանց, այլ զհասարակաց կենաց զանցս յանդիման առնեն: Կատակերգութիւն կրտսեր է ժամանակաւ քան զողբերգութիւն, բայց 'ի նոյն 'ի սպանդարամետական տօնս երևի ծնեալ: Միութիւն իրի տեղւոյ և ժամանակի, տեսարանաց ընդ միմեանս անընդհատ կցորդութիւն, խաղետեղն չմնալ դատարկ, դերասանացն չելանել և չմտանել անպատճառ, և այլ ևս կանոնք ողբերգութեան նոյնք և 'ի սմա պահանջին :

Ամենայն ազգաց և ամենայն ժամանակաց իրք մարթին 'ի դէպ գալ ողբերգութեան, այլ ոչ և կատակերգութեան. զի յոռութիւնք մեծամեծք և առաքինութիւնք և բռնագոյն կիրք նոյնք են միշտ և անփոփոխ յամենայն ազգս և 'ի դարս.

այլ Թերութիւնք մանունք հասարակաց կենաց՝ որ պատկանին կատակերգութեան, ըստ ազգաց և ըստ ժամանակաց փոփոխմն· և ծաղրականք առ մին, ոչ նոյնպիսիք են առ այլս: Նմին իրի որ հրահանգելն կամի զազգ իւր, պարտ է նմա զախտս և զԹերութիւնս ժամանակակցացն իւրոց և զհամազգեաց նշաւակել 'ի Թատեր: Բայց զգուշալի է 'ի նկարագիրս բարուց՝ մի քան զնմանն ստուարացուցանել զծաղրելին, այլ որպէս յամենայնի՝ հետևել և 'ի սմա բնականին: Եւ ոճ բանից պարզ խնդրի 'ի սմա և ընտելական և եռանդուն, առանց նուաստ երգիծանաց և զազրաբանութեան:

Ըստ փոփոխել ժամանակաց՝ երիցս կերպարանափոխ եղև կատակերգութիւն առ Յոյնս: Վաղեմին էր երգիծաբանութիւն իմն յայտնի և անպատրուակ, որոյ վէպս ճշմարիտս 'ի տեսիլ ածեալ, զոր ոք կամէրն՝ ծաղր կացուցանէր ամբոխին յանուանէ՝ հանդերձ ձևով և շարժուածով, և զիմակաւն իսկ հանգունատիպ: Այսպիսիք են կատակերգութիւնքն Արիստոփանեայ, յորոց կան ցարդ մետասանք:

Յետ Արիստոփանեայ արգելին օրէնք դիմասակարն զայն ազգ կատակերգու-

թեան, և յարեաւ միջինն։ Այլ սա ևս վեր 'ի վերոյ պահեալ գօրէնան, ընդ կեղծ անուամբք պատկերս ճշմարիտս ճանաչելիս տեսողաց կենդանագրէր։ Եւ սա տևեաց մինչև ցաւուրս Աղեքսանդրի. առ որով սատեղծաւ այժմուս կատակերգութիւն, որ վէպս և անուանս կեղծս 'ի տեսիլ ածէ 'ի պատկեր հասարակաց կենաց։ Մենանդր 'ի Յունաց անուանի գտաւ յայս ազգ կատակերգութեան. այլ իբր յերկերիւր կատակերգութեանց նորա, զորս աւանդեն թարգմանեալ Տերենտեայ 'ի լատին բարբառ, պատառիկք ևեթ հասին առ մեզ։

Ի լատինացւոց Պղաւտեայ միայն և Տերենտեայ կատակերգութիւնքն պահին։ Պղաւտեայ ազգաւ է ոճն և ոգի ծաղրաբանութեան. այլ ուրեք ուրեք թերի է և անհարթ ըստ արուեստին. և խեղկատակութիւնք ևս ազեղք գտանին 'ի քերթուածըս նորա։ Իսկ Տերենտեայ ընտիր է ոճն ողորկ և քաղցրալուր, գրուցատրութիւնք նորա պատշաճք և վայելուչք, և վէպք աշխուժիւքն և պարզութեամբ ախորժելի. միայն պակասեն 'ի նմա գէպք և փոփոխութիւնք անակնկալք։

Հ. Ո՞յք եղեն յարգի քերթողս կատակերգուք անուանիք.

Գ. Առ Իտալացիս Փաճիօլի, Նէլլի, և անուանի ևս քան զնոսա Կոլտո́նի. որ ճշգրտատիպ նկարագրութեամբք բարուց և ընտելական զրուցատրութեամբք գերազանցեաց: Բայց միութեան տեղւոյ ոչ զգուշանայ, ևս և 'ի միում արարուածի. և ոճ նորա կարի հետեւակ է, և յաճախեն 'ի նմա անարգ խեղկատակութիւնք:

Յետ նորա կային կատակերգուք անուանիք Ալպերկա́թի, Առոգա́թոյ, և Նո́թոյ:

Գաղղիացւոյն կատակերգութիւնք կանոնաւորք են և անստգտանելիք: Բազումք կային առ նոսա կատակերգուք անուանիք. Ռընեար, Տիւֆրէանի, Տանքուռ, Տէթուշ, և Մարիվոյ. այլ գերազանցեաց զամենեքումբք Մոլիէռ քերթողահայր կատակերգուաց: Սա գիտաց զյոռութիւնս մարդկան և զմոլորութիւնս արդարև ծաղր կացուցանել, և զծաղրելի բնաւորութիւնս կենդանատիպ նկարագրել հանդերձ զուարճախօսութեամբ: Այլ ուրեք ուրեք յաճախէ բանս դժպհիս և վնասակարս պարկեշտ լսելեաց, և զհանգոյցս վիպացն բռնազբօսելով լուծանէ:

Ի սոյն կարգ կատակերգութեան դասելի են և զուեշտական քերթութիւնք,

զորոց զնախկին օրինակ եւ Հոմերոս 'ի պատերազմի մկանց և գորտոց ։ Նմին նմանողք եղեն յիտալացւոց Լիբբի 'ի Մալմանթիլն, Թասսոնի 'ի Դոյլն յափշտակեալ, Պրաչիօլինի 'ի Կադ դիցն, և Բասսէրոնի 'ի վարս Կիկերոնի ։ Ի գաղղիացւոց Պուալօյ 'ի Գրակալն. և յանգղիացւոց Բոբ 'ի Գիսակն յափշտակեալ ։

Ընդ սովաւ բովանդակին և այլ ազգի ազգի քերթուածք և երգք ծաղրականք ։

Այս ազգ քերթութեան դժուարին է յոյժ՝ որոց չիցէ 'ի բնէ հանձար ծաղրածութեան. և չէ պարտ այնպիսեաց 'ի վեր քան զկար և զբնաւորութիւն իւրեանց ձեռնարկել 'ի գործ, զի մի փոխանակ ծաղրածութեան ինքեանք ծաղր կայցեն ընթերցողաց ։

Հ. Զ՞ինչ է թատերգութիւն երաժըշտական.

Պ. Ողբերգութիւն կամ կատակերգութիւն երաժշտօրէն հանդերձ նուագարանօք արտասանեալ ։ Իտալացւոց է գիւտ այս, և ազգոյ յոյժ՝ բանաստեղծութեան և երաժշտութեան իրերօք 'ի սմա օգնեալ ։ Բայց դժուարին է յոյժ քերթողին յաջողել 'ի սմա. զի պարտ է 'ի համառօտութեան պահել զամենայն կարգս թատերգութեան, և ստէպ ես 'ի սմա փոփոխել

զկիրս՝ առ՚ի փոփոխումն երաժշտութեանն, մի երկարել երբէք զխօսս , և քան զխօսս յաճախել զգործողութիւնս . վասն որոյ և կոչի սա յիտալացւոց Օ՛բէրա, որ թարգմանի Գործողութիւն կամ Արարուած ։

Երկուք միայն մինչև ցայժմ գտան առ իտալացիս անուանիք յերաժշտական ողբերգութեան , այսինքն են Ծէնոյ և Մէթասթա՛զիոյ . և սոքին իսկ ոչ են զերծք ամենևին 'ի սղալանաց ։ Իսկ 'ի ծաղրականն չև ևս ոք եկաց անուանի հաւասար սոցին ։

Հ. Ո՞րք են աղերք ծաղրածութեան.

Պ. Յամենայն ծաղրականս անյարմարութիւն ինչ ըմբռնեն միտք մեր . զոր օրինակ եթէ յիմարն պանծասցի որպէս զիմաստուն , և վասն իբրև զարի ։ Եւ այս անյարմարութիւն որչափ անակնկալ իցէ , նոյնչափ և առաւել շարժէ 'ի ծաղր ։ Վասն որոյ 'ի լարախաղս և 'ի ստուերաշարժ խաղս առաւելապէս ծիծաղին մանկունք և տխմարք, և կամ որք զառաջինն 'ի գնին այնոցիկ կան ։ Իսկ զիմաստունս և զբազմահմուտս կարի իսկ անակնկալ իրք շարժեն 'ի ծաղր ։

Ծաղր 'ի զուարճալի ևեթ իրս և յախորժ զգայմունս ունի տեղի . իսկ 'ի գիպել անհաճոյ իրաց ՝ դադարէ ։ Զոր օրի-

նակ եթէ այր գէր և գանգաղ գթեալ անկանիցի , 'ի ծաղր շարժէ . իսկ եթէ յանկանելն վնասիցի , կարեկցութիւն փոխանակէ ընդ ծաղու ։ Որդ 'ի ծաղր շարժէ

Ա . Նկարագրութիւն անտեղի գործոց մարդկան, մանաւանդ եթէ անտեղութեան իրացն չզգայցեն արարօղք . զոր օրինակ եթէ սապատողն գնայցէ իբրև զուղիղ , և կամ զնմանն իւր ծաղրեսցէ ։

Բ . Ոչ ըստ այլոյ իմանալ զբանս իրերաց , մանաւանդ եթէ յերկարեսցէ վրիպակն . որպէս է տեսանել յՈգահն Մոլիէռի , ուր զանձ իմանայ ոմն զդուստրն իւր , և այլ ոմն զգրամսն ։

Գ . Ներհական պատահարք հակառակ կամաց գործողին . զոր օրինակ եթէ յաճապարել ուրուք՝ առ շտապ տագնապին և ևս յամեսցէ , կամ 'ի ջանալ ծածկել ինչ՝ և ևս յայտնեսցէ ։

Դ . Նենգք և պատրանք անմնաք նիւթեաց այլում . մանաւանդ որ խորագէտ զանձն համարիցի , և 'ի խուսել 'ի պատրանաց անկցի 'ի նոյն . և կամ 'ի ծուղակ՝ զոր այլոյն պատրաստէր՝ ինքն ըմբռնեսցի ։

Ե . Պանծացուցանել զչնչին և զչքաւոր իրս , որպէս Հոմերոս 'ի Ճակատամարտն

մկանց և գործոց մատուցանէ զնոսա իբրև զդիւցազունս Յունաց և տրովացւոց 'ի կռիւ ։

Զ. Պերճ և ճոխում բանիւք որպէս զմեծ ինչ և զկարևոր իրաց յառաջաբանել, 'ի չնչին ինչ կատարել զճառսն ։

Է. Զմեծամեծս և զանարգս, զգեղեցիկս և զանդեղեայս խառնել 'ի մի որպէս արդարև նմանս, զոր օրինակ առնէ Թասսոնի յասելն. « Ընդ ծագել արշալուսոյն « երգէին թռչունք և էշք զռնչային զերգս « սիրոյ » ։

Ը. Զհետ երկար վարդապետութեան՝ հակառակ ինչ ամենևին ասացելոցն 'ի մէջ բերել ։

Թ. Արագ և անակնկալ պատասխանի հանդերձ հանճարաբանութեամբ. զոր օրինակ պանծացելոյ ումեմն անմտի յալիս իւր՝ պատասխանեաց ումն, զի և այծու մորուք են, այլ ոչ իմաստութիւն ։ Առ այլում ումեք պանծացելոյ 'ի հասակ իւր՝ պատասխանեաց ումն 'ի հասակակցացն, զի և մոլախոտն աճէ արագ ։

Ժ. Զմեծաբանութիւն այլոյ մեծ ևս մեծախօսութեամբ ծաղրել. զոր օրինակ առ պարծանս զօրականին՝ որ համարէր զանձն աւուրբ յետոյ քան զԱքիլլոս ծնեալ, ետ ծառայն պատասխանի. Աւա՜ղ զի ոչ

կանխեցեր աւուրբ միով 'ի ծնունդ՝ զի թագաւորէիր արդ յերկինս փոխանակ Դիոսի։

ԺԱ․ Երկդիմի գովութեամբ պարսաւել զոք ։

ԺԲ․ Դէմս ընծայել իրաց՝ որոց ոչն պատշաճիցի, և տալ խօսել նոցա դիմառնութեամբ ։

ԺԳ․ Խաղ նմանաձայն բառից, առոգանութիւն, և փոփոխումն տառի, չափով և ճարտարութեամբ․ ապա թէ ոչ, ցուրտք լիցին և անախորժք ։

ԺԴ․ Այլ ընդ այլոյ յարմարել զկայութիւնս մատենագրաց ծանօթս, և զիմաստնոց․ բայց մի երբէք 'ի սուրբ գրոց ։

ԺԵ․ Ծաղրալից նմանողութիւն իմաստակօրէն պերճ և վսեմ քերթութեանց, հանդերձ նովին զգուշութեամբ։

ԺԶ․ Այլափոխութիւն վսեմ քերթութեանց 'ի ռամիկ և 'ի գեղջուկ բարբառ, որպէս Ենէականն Լալլի քերթողին, և թարգմանութիւն Թասսոյի 'ի բարբառ վենետկեցի ։

ԺԷ․ Խառնումն բարբառոց ընդ միմեանըս, զոր օրինակ գրաբառին և աշխարհաբառի և տաճիկ բարբառոյ որպէս դդմաճեանքն անուանեալ քերթութիւնք ։

ԺԸ․ Նկարագիր թերութեանց մարմնոյ և մասանց վայելչապէս, առանց երգիծանե-

լոյ գոք կամ նշաւակելոյ, որպէս բարեկրօնութեան և բարեձևութեան և կրթութեան հրահանգայ անհրաժեշտ պարագք են։

ԴԱՍ ԺԴ

Ազգի ազգի տաղից պատկանաւոր չափք: Կարգ զոր պարտ է ունել 'ի ստեղծաբանելն:

Հ. Իցեն ինչ ազգի ազգի տաղից սահմանեալ չափք.

Պ. Զգացումն իսկ ունկան ցուցանէ՝ զի 'ի չափս տաղից և վանկից են որք թելթևընթացք են, և են՝ որ ծանրաքայլք. արդ անտեղի և հակառակ կիրթ ախորժակաց է զտողս ծանունս 'ի կիր առնուլ 'ի քերթուածս ուրախականս, 'ի պարս կամ 'ի գեղեցիկ ինչ նկարագիրս. և ընդ հակառակն 'ի տրտմականս և 'ի լուրջ և 'ի վսեմ քերթուածս 'ի կիր առնուլ տողս թելթևս։ Իսկ ծանրութիւնս այս և թելթևութիւն ոչ միայն յերկայնութենէ կամ 'ի կարճութենէ տաղից է, այլ և 'ի բազմութենէ կամ 'ի սակաւութենէ ոտից կամ վանկից իւրաքանչիւր անդամոց տողին։ Օրինակ իմն հնգետասանոտնեանն 'ի բաժանելն այսպէս 4—4—4—3, թելթևա-

գոյն է, քան 'ի բաժանելն յերիս հաւասար հնգեակս 5—5—5. որպէս զի և տողք կարճագոյնք 'ի տրոհելն 'ի բազմավանկ անգամս, գործին ծանրաքայլք: Օրինակ իմն՝ գեղեցիկ է յոյժ տասնոտնեան չափս այս 'ի կիր արկեալ յումեմնէ յարգի քերթողացս մերոց, և կարի պատշաճական վսեմ իմաստիցն.

« Հի՞մ խարխախ արկեր զահուղ արքու-
 նոյ
 Ի կըմախս զարմին հէգ Սանատրկոյ.
 Խարխուլ են զահոյք՝ թէ և ոսկեղէն,
 Որոյ պատուանդանք յոճիր յեցեալ են.
 Թըռուցիկ վարանք ճախրեն հանապազ,
 Զոսկեզօծ ձեղուամբդ 'ի քոյին դար-
 պաս »:

Ընդ հակառակն նոյն քերթող 'ի թարգմանութեան հովուական գեղեցիկ հատուածոյս 'ի տաղիցն Ովրատեայ, այսպէս վայելուչ 'ի կիր արկանէ զչափ իննոտնեան՝ յերիս երրեակս բաժանեալ.

« Որ երկիր անարօր ընծայէ
 Տոհմական արմըտեաց ամ յամէ,
 Եւ այգի անյօտոց միշտ ծաղկէ:
 Որ պըտկի և ուղէշ ոստաքանց
 Զիթենւոյն, որ երբէք ոչ խաբեաց,
 Եւ զիւր ծառ պըճնէ թուզ լըրթա-
 զգեաց:

Ի գոգեալ սրղոցեաց մեղր հոսեն,
Մեծասար 'ի լերանց 'ի բարձուէն
Մեղմաձայն կարկաչմամբ ջուրք ցայտեն:
Անդ այծիք գան անկոչ առ դաշտին,
Եւ դառնայ յարօտոյ լիասին
Գեղմնաբարձ երամակ սիրելին.
Եւ ոչ արջ քանասար շուրջ յածեալ
Յերեկոյն ըղգաւթիւ մռընչեալ,
Ոչ այանու հող յիժից որջացեալ:
Զայն ծովափն Արամազդ զատեցոյց,
Բարեպաշտ սուրբ ազին 'ի հանգոյց,
Պըղընձեաւ զոսկի դարն երբ զեղծոյց»:
Վէրէրգ. ԺԴ:

Եւ դարձեալ նոյն քերթող յԱնակրէոնեան տաղիս ոչինչ նուազ քան զիմաստն համառօտ տողիցն չափով զողութիւն կենացս բացատրէ այսպէս.

« Հասակ փախըստէ
Մի միայն բոպէ
Հաստատուն ոչ է.
Հազիւ թէ մեզ գայ,
Զոյգ հողմոյ խոյս տայ,
Որ շոյտ թեւանայ:
Ո՛հ մի՛ փըքասցուք,
Մի՛ յայն յուսասցուք,
Վնասին մահացուք.
Վարդն առ 'ի յարփւոյն,

Եւ գեղ մանկագոյն
Յամաց 'ի ժանգոյն» ։

Հ. Զի՞նչ չափ ընտրելի իցէ քերթողին 'ի թատերգութեան.

Պ. Զմերձաւորագոյնն արձակ բանի. զի յունականին և լատինականին մեծավերջն, որով թատերական քերթուածք գրեալ են առ նոսա, այնքան մերձաւորք են արձակ բանի, զի միջին իմն համարին ընդ ոտանաւոր և ընդ արձակ բան. նոյնպէս գրեթէ և իտալականին անյանգ ոտանաւորն, որով վարին 'ի թատերգութիւնս. վասն որոյ օրէն է և մեզ կամ զանյանգ վարել ոտանաւոր 'ի թատերգութեան, և կամ բնաւ իսկ արձակ վարել բանիւ, պահելով զոճն եւեթ քերթողական ։

Հ. Զո՞ր կարգ պարտ է ունել 'ի բանաստեղծելն.

Պ. Նախ քան զամենայն պատրաստել զատաղձս շինուածոյն, այսինքն է հանձարել խոկմամբ զգիւտս և զիմաստս տաղիցն. և զէթ վեր 'ի վերոյ ինչ կարգաւորել զայն 'ի միտ՝ թէ որպէս սկիզբն պարտ իցէ տաղիցն նմա առնել, և զիա՛րդ զկատարածն ։ Եւ ապա օգնէ յոյժ ընթեռնուլ վայրիկ մի զքաջաց քերթողաց տաղս, առ 'ի վառել զերևակայութիւն, և զեռանդն 'ի յոգւոջ ար-

ծարծանել. և 'ի նմին եռանդեան ձեռնարկել 'ի քերթուածն. զի այսպէս խանդք ոգւոյն բազմապատկեն զգիւտսն և զիմաստս 'ի բացատրել անդ, և թռիչք մտացն յիմաստից յիմաստս վազեալ, բնականագոյն և լաւ ևս շաղկապեն զնոսա ընդ միմեանս՝ քան զտրամաբանեալ կապակցութիւն. և նոյն խանդք յաճախեն զձևս գեղեցիկս և վսեմս, նմանութիւնս ճշգրիտս, նկարագրութիւնս զմայլականս, և զրուագս պատկանաւորս 'ի նիւթ քերթուածոյն: Ներդաշնակութիւն յօրինի անդ առանց քերթողին ջանից, և յանգք յարմարաւորք որպէս քարինք Ամփիոնի քնարաւն ինքնին 'ի կարգ անկեալ զետեղին: Այլ պարտ է յայնժամ քերթողին սանձահարել մանաւանդ զգրիչն, և մի նախ քան զքաջ երկնելն 'ի մտի զիմաստս՝ արտաբերել զայնոսիկ 'ի գիր. քանզի բազում այն է, զի մթութիւնք և տարտամութիւնք իմաստից 'ի շտապոյ աստի և 'ի կարճմտութենէ յառաջ գան: Այլ մի երբէք սովորեցուցանել զանձն 'ի յօրինել տողս անհարթս, յուսով կոկելոյ զայնս յետոյ և ողորկելոյ. քանզի այսպէս՝ մնասցեն միշտ 'ի նոսա հետք անհարթութեանն. այլ եթէ ուրեք զկայ առնուն միտք, և դժուարին 'ի ստեղծանել տողս

ինչ, լաւ ես իցէ թողուլ զայնս, և 'ի յաջորդսն անցանել. և ապա պարապով լնուլ զթերին: Զի թէպէտ և զամենայն ձիգն և զջանս ոք 'ի կիր արկանիցէ 'ի քերթուածն, տակաւին պէտք իցեն հարթելոյ զայն և կոկելոյ վերստին տեսութեամբ. իսկ եթէ ոք առանց ջանից զնախաձեռն յօրինուածն կատարեսցէ, յայտ է թէ կարկատուն միշտ քերթուածն երևեսցի բազմապատիկ փոփոխութեանցն յաւելուածովք՝ զորս յետոյ հարկ լիցի նմա առնել առանց արծարծանելոյ երբէք 'ի նմա առաջին եռանդեանն: Բայց քերթողին պարտ է գոլ հմուտ 'ի բնիկն իւր բարբառ, և շտեմարանեալ 'ի միտս իւր ունել զազգի ազգի զբազմակերպ եղանակս բացատրութեանց և զբառս ընտիրս, որպէս զի ըստ տեղւոյն զպատշաճն կարող իցէ 'ի կիր արկանել: Զի եթէ այսոքիկ չիցեն 'ի միտս նորա, խանդք քերթողականք ոչ ինչ օգնեն, որպէս համր՝ որ բարբառելն կամիցի՝ ոչ ինչ օգնեն իմաստք մտացն: Նա որ առանց պատրաստութեանցս այսոցիկ բանաստեղծելն կամիցին, այնպէս է՝ որպէս եթէ ոք առանց գիտելոյ զթիւս, 'ի բարձրագոյն յաստեղաբաշխական հաշիւս թևակոխիցէ:

Ժ. Որ ազգ վարժից կարևորագոյն

իցէ 'ի հրահանգս քերթողականին առհասարակ .

Պ. Քան զամենայն կանոնաց վարդապետութիւնս կարեւոր է և շահաւէտ զընտիրս 'ի քերթողաց սակաւս յաճախ վերծանել, և քօղախնդրեալ հետազօտել զոր 'ի նոսա գեղեցկութիւնս. և վարժել նոքօք 'ի կիրթ ախորժակս մտաց և 'ի քննաբանութիւն, որք կարեւոր են յոյժ քերթողի ։

ԴԱՍ ԻԵ

Ախորժակք մտաց . — Քննաբանութիւն ։

Հ. Զի՞նչ են ախորժակք մտաց .

Պ. Զօրութիւն ընտրելոյ զգեղեցիկն, և բերկրելոյ ընդ այն ։ Այս զգայութիւն հասարակաց իսկ է ամենեցուն, այլ ոչ յամենեսին զուգահաւասար . զի են՝ յորս աղօտ ինչ հազիւ նշողեն ախորժակք, իսկ յայլս քաջակիրթ ախորժակք են յընտրութիւն գեղեցկութեանց ։ Ապաքէն զանազանութիւնս այս ըստ մասին 'ի բնութենէ է, 'ի կազմածոյ զգայարանաց և 'ի ստեղծուածոյ իմացական զօրութեանց, բայց և ըստ առաւելագոյն մասին 'ի դաստիարակութենէ և 'ի վարժից ։ Վկայէ

այսմ անհամեմատ խտիր փափկութեան ախորժակաց կիրթ և դաստիարակեալ ազանց և անկրթիցն և խուժայնոց. և 'ի նմին իսկ 'ի միում ազգի խտիրն որ ընդ վարժեալս 'ի բանասիրութիւն և ընդ ռամիկն: Քանզի կրթութիւն և վարժք որպէս զմարմնոյ զգայարանս՝ նոյնպէս և զիմացական զօրութիւնս մարդոյ զարգացուցանեն, որպէս յայտնի երևի այս յերաժըշտութեան և 'ի նկարչութեան. զի ցորչափ չիցէ ոք կրթեալ 'ի նոսա, չընտրէ զգեղեցիկն յանարգէն. այլ իբրև վարժի 'ի նոսին, ընդ տեսանելն՝ առնէ ընտրութիւն:

Հ. Ո՞րպէս կրթին ախորժակք մտաց.

Պ. Ստագիր վերծանութեամբ քաջաց քերթողաց, և խորազնին տեսութեամբ ընտիր օրինակաց. քանզի այսոքիկ կըրկնակի նպաստեն, մի՝ 'ի կատարումն աճելով զբնատուր զգացումն իմանալի գեղոյ, և երկրորդ՝ կրթելով զբանն 'ի քաջ ճանաչել զայն: Զի վեր 'ի վերոյ գեղեցկութիւնք, օրինակ իմն՝ նկարագիրք անբնականք, իմաստք բռնազբօսեալք, ոճ արուեստակեալ, առ վայր մի զուարճացուցանեն՝ ցորչափ աննմանութիւն նոցա ընդ բնականին չիցէ նշաւակեալ, այլ ընդ յայտնելն և խոտին, և պատիր գեղեցկու-

թիւնն ոչ ևս զուարճացուցանէ ։ Պարճեալ 'ի զարգացումն երկոցունցն ևս մասանց խնդրի և սիրտ գողտր և բարեբարոյ յընտրութիւն բարոյական գեղեցկութեանց . զի ուր ուրեք խղճք և ախորժակք սրտի , առաքինութիւնք , բնաւորութիւնք և նկարագիրք մարդկան 'ի ներքս մտանեն, եթէ անմասն ոք իցէ յայնցանէ՝ զի՞րդ կարասցէ ճշգրիտ զայնոսիկ նկարագրել, կամ զնկարագրութեանցն քերթողաց իմանալ զգեղեցկութիւնս ։ Մանաւանդ զի գեղեցկութիւնքս այսոքիկ յոյժ գեր 'ի վերոյ քան զառաջինսն են . և թէպէտ բանաստեղծութեանն սահման է գոլ բարբառ երևակայութեան և սրտի , այլ ուր երևակայութիւն ևեթ առանց սրտի բարբառիցի , ոչ միայն դի անկենդան է քերթուածն այն , այլ և անօգուտ ամենևին. իսկ որ երկոքումբքն ևս պերճանան քերթուածք, կրթեն զբարս և զսիրտ և զախորժակս ընթերցողաց ։

Հ . Զ՞ինչ է քննաբանութիւն .

Պ . Դատել ինչ գրաւորական ըստ կիրթ ախորժակաց , և ընտրել զհանգամանս կատարելութեանց նորա և թերութեանց ։ Կարևոր է յոյժ քննողականս այս ընտրութիւն առ 'ի կրթել ևս զախորժակս ։ Յընթեռնուլն կամ 'ի լսել ինչ , ամենեցուն

է հաճել կամ չհաճել ընդ այն. բայց խտիր մեծ է ընդ հաճոյս և ընդ դատաստան ։ Զի որ հաճին՝ զլաւութիւն կամ զյոռութիւն իւրոց ախորժակացն ցուցանէ. իսկ որ դատին, պարտի և զպատճառսն յաւելուլ զլաւութեան կամ զյոռութեան իւրն ։

Հ. Եւ ո՞ր իցեն պայմանք լաւութեան 'ի քննաբանելն խնդրելիք.

Պ. Առաջին պայման՝ միութիւն իւրն, զի մի 'ի բազումս ցրուեալ խոնջեսցին միտք ։

Երկրորդ՝ բազմակերպ զանազանութիւն մասանց, զի մի տաղտկալի լիցի բանն միօրինակ իրաց շարայարութեամբ ։

Երրորդ պատշաճ բաժանումն, այսինքն համեմատութիւն և կարգ յամենայն մասունս ։

Չորրորդ՝ պատկանաւորութիւն հնարից առ ուշ նպատակին, օրինակ իմն՝ իմաստք գորովականք յեղերերգութեան, յորդորողք 'ի խրատականս, զբօսացուցիչք 'ի հովուականս, ևն ։

Հինգերորդ յստակութիւն և յատկութիւն ոճոյ, որ զամենայն իսկ շարագրածս ընտիր յօրինէ, և գեղեցիկն և վսեմ առանց այնր անարգ է ։

Արդ ըստ այսոցիկ պայմանաց պարտ է քննել զքերթուածս, եթէ իցեն 'ի նմա

պահանջեալն միութիւն և բազմակերպ զանազանութիւն. եթէ իցէ՞ համեմատութիւն 'ի նմա և կարգ. եթէ ամենայն մասունք նորա բերիցե՞ն առ ուշ նպատակին, և նկարագրութիւնքն 'ի նմա իցեն ճշգրիտ ըստ բնութեան, և իցեն 'ի նմա կորով և եռանդն, և թէ իցէ՞ բացայայտ յստակ և վայելուչ: Իսկ եթէ ոք զուարճանայցէ տաղտուկ նոյնութեամբ, կամ խառն 'ի խուռն և բազմաշփոթ զանազանութեամբ, եթէ նորասիրութեան ըղձիւք վառեալ՝ տարաբանագոյն և անձոռնի իմաստից լիցի 'ի խնդիր, և զանարգ և գգուեհիկ իմաստս իբր նորս մեծարեսցէ, եթէ անմասն 'ի փափուկ զգայութենէ՝ ընդ թանձր և ընդ նիւթական իրս համեսցի, կամ տարապայման նրբութեամբ արուեստակեալ և բազմաքանդակ իմաստից լիցի 'ի խնդիր, այնպիսւոյն թիւր և եղծեալ և ապականեալ է ախորժակ: Նուրբ քաջակիրթ իսկ ախորժակօք ճանաչելով զգեղեցկութիւնս այնպիսեաց քերթուածոց՝ դեգերեսցի յաճախ 'ի վերծանութիւն նոցին, եղծանիցն ախորժակք նորա:

Այլ առ 'ի քաջ դատաստան առնել զքերթուածոց, հարկ է դատել զնոսին և ըստ իւրաքանչիւր ազգի ազգի տաղից՝ թէ կայցեն յիւրեանց պայմանին հոմանական և

քնարերգականն և դիւցազներգականն և ողբերգականն, այլովքն հանդերձ։

ԴԱՍ ԻԶ

Թէ երբ և յորս յազգաց զօրացան ընտիր ախորժակք։

Հ. Ինչ՞ արդեօք գեղեցկին յատուկ բնութիւն, թէ ըստ զանազանութեան ախորժակաց ազգաց և ժամանակաց զատեալ իցեն քերթուածք.

Պ. Զանազանութիւն ախորժակաց եթէ յայլևայլ իրս իցէ, մարթի ամենեցուն իսկ արդարանալ. որպէս եթէ ումն ընդ ողբերգութիւն ախորժեսցէ, այլ ոք ընդ կատակերգութիւն, սա ընդ քնարերգութիւն, և միւս ումն ընդ հովուական տաղս են։ Բայց եթէ զնոյն ինչ զոր գեղեցիկն համարի ոք՝ միւսն պարսաւեսցէ իբրև տգեղ, հարկ է թէ միումն յերկոցունց եղծեալ իցեն ախորժակք։ Պատահէ իսկ արդարև յաճախ այսպիսի թիւր և ապականեալ ախորժակ յայլևայլ անձինս, և մանաւանդ յայլևայլ ազգս և 'ի ժամանակս, այլ ոչ երկարատև է, զի յետոյ ապա յաղթէ բնիկ գեղեցիկն, որպէս 'ի գոթացի և 'ի յոնիական ճարտարապետութիւնսն յայտ է, և յարուեստակեալ

իմաստակ տիպս բանից՝ որ յետ օգոստական դարուն առ ժամանակ մի զօրացեալ՝ դարձեալ խափանեցաւ։

Հ. Յո՞ր ժամանակս զօրացան ընտիր ախորժակք.

Պ. Չորք դարք զանազանին կիրթ ախորժակաց առ գիտունս.

Առաջին դար պայծառանալոյ Յունաց, որ իբր 'ի սկզբանէ Պեղոպոնեսական մարտին ձգի մինչև ցվախճան Աղեքսանդրի մեծի, և քառեակ դարուք յառաջ քան զԹուականութիւն փրկչին, յորում ժամանակի կացին Հերոդոտ, Թուկիդիդէս և Քսենոփոն վիպագիրք. Սոկրատ, Պղատոն, Արիստոտէլ, Զենոն և Եպիկուր իմաստասէրք. Լիւսիաս, Դեմոսթենէս, Եսքինէս և Իսոկրատ ճարտարախօսք. Եսքիղոս, Սոփոկղ. Եւրիպիդէս, Արիստոփան, Մենանդր, Անակրէոն, Պինդար, Աղկէոս Սափփով, Սիմոնիդէս, Կալիմաքոս, Թէոկրիտոս, Մոսկոս և Բիոն քերթողք։

Երկրորդ դար պայծառանալոյ լատինացւոց յաւուրց Յուլեայ կայսեր մինչև ցՕգոստոս. յորում ժամանակի յետ Պղաւտեայ և Տերենտիոսի, որք կանխեցին սակաւ ինչ՝ կացին Լուկրետիոս, Կատուղոս Տիբուղոս, Պրոպերտիոս, Վիրգիլիոս, Ովրատիոս, Փեդրոս և Ովիդիոս քերթողք,

Կիկերոն և Որտենսիոս ճարտարախօսք. Սալուստիոս, Կեսար և Լիւիոս վիպագիրք:

Երրորդ դար պայծառանալոյ իտալացւոց 'ի չորեքտասաներորդ դարէ մինչև ցվեշտասաներորդ. յորում ժամանակի կացին Տա՛նթէ, փեթրա՛րքա, Պոքա՛չչիօ, Պէմպօ, Քա՛զա, Քա՛ռօ, Թա՛սսօ և այլք բազում քերթողք և ճարտարախօսք:

Իսկ չորրորդ դար պայծառանալոյ գաղղիացւոց և անգղիացւոց յաւուրս Լուդովիկոսի ԺԴ արքային գաղղիայւոց, և Աննայի դշխոյին անգղիացւոց, 'ի ԺԸ դարու. յորում ժամանակի կացին 'ի Գաղղիա Քօռնէյլ, Ռասին, Մօլիէռ, Պուալօ, Լաֆօնդէն, Ժանպաթիսթ-Ռուսօ, Պոսիւէ, Ֆէնէլոն, Պուռտալու, Մասիյյեօն, Բասքալ և այլք. իսկ առ անգղիացիս Շէքսփիռ, Տրա՛յտըն, Բօբ, Ա՛տիսըն, Եընկ և այլ քերթողք, թո՛ղ զիմաստասէրսն Լօք, Նիւթըն և զայլս:

Առաջնոցկրկին դարուցն մատենագիրք հանդերձ սակաւուքն՝ որք կանխեցին քան զնոսա, որպէս Հոմերոս և Եսիոդոս, առ վերջնովքն կոչին հինք կամ նախնիք, իսկ վերջնոյն դարուց՝ ընդ որս և կացեալքն առ մեօք, կոչին արդիք:

Հ. Նախնի մատենագիրք և արդիք ո՞

քան զո մեծարոյք իցեն.

Գ. Ուժգին զայսմանէ վէճք եղեն և լինին առ գիտունս, և դժուարին է տալ վճիռ. բայց դարք աշխարհի հանգոյն իմն են տիոց մարդոյ. զի յաւագոյն հասակին առաւելու 'ի հմտութիւն և 'ի խորագնին տեսութիւն. այլ յառոյգ տիս՝ առաւել են 'ի նմա աշխոյժք և եռանդն: Նոյն խտիր է և ընդ նախնի և ընդ արդի քերթողս վիպագիրս և ճարտարախօսս. զի 'ի նոսա առաւելու ընտելական իմն պարզութիւն, բնական հանճար և վեհ և վսեմ իմաստք. իսկ 'ի սոսա՝ արուեստ և կարգ. զի թէպէտ և ամենայնիւ ստորև իցեն արդիք քան զնախնիս, այլ առաւելութեամբ հմտութեան, ճշդութեամբ իմաստից և կարգաւորութեամբ 'ի բազում ինչ իբրս գերազանցեն զնոքօք: Արդ որ զախորժակս իւր կրթել և ուղղել կամիցի, պարտ է նմա յաճախել 'ի մատադիր ընթերցումն նախնի մատենագրաց:

ԴԱՍ ԻԷ

Մէ անխտիր ընթեռնուլ զհեթանոս քերթողս. — Առասպելեաց պատշաճ պիտառութիւն. — Օգուտք բանաստեղծութեան:

Հ. Ոչ իցէ՞ օրէն յաճախել յընթերցումն հեթանոս քերթողաց.

Գ. Թէպէտ և բազումք 'ի սորոց հարց արգելուն չընթեռնուլ զհեթանոս քերթողս, այլ զպատուէրս նոցա իմանալի է յաղագս վնասակարացն 'ի նոցանէ և 'ի քրիստոնեայ քերթողաց, և յաղագս չզեղծանելոյ անխտիր նոցին ընթերցմամբ։ Զի ահա յոլովք 'ի սորոց հարց, որպէս Բարսեղ, Գրիգոր Նազիանզացի, ևն, կարի իսկ հմուտք էին հեթանոսական քերթութեանց. և սուրբն Օգոստինոս զհրաշազան գիրսն որ յաղագս Քաղաքին Աստուծոյ սոցին հմտութեամբն գրեաց։ Եւ յորժամ ուրացողն Յուլիանոս հրովարտակաւ արգել վարժապետաց՝ մի վարժել զմանկունս քրիստոնէից 'ի գիրս արտաքնոց իմաստասիրաց՝ առ 'ի խափանել զօգուտ նոցա, 'ի տանել եկեղեցւոյ անդրէն զխաղաղութիւն՝ դարձան վերստին 'ի գպրոցս ուխտի մանկանց վարժք հեթանոսական քերթութեանց, այլ ըստ քրիստոնէական զգուշութեանս պայմանի։ Եւ ո՞ր այն պայման իցէ. այս ինքն զի որպէս մեղուք ոչ յամենայն ազգս ծաղկանց զկայ առնուն, մանաւանդ զի և ոչ ուր զկայ առնունն՝ անխտիր զամենայն հիւթս ծծեն, այլ որ 'ի գործ ցանկալի մեղերն իցէ պիտանի, այսպէս և մեզ պարտ է ընտրել զգիրս քերթողաց, և 'ի նոսին զօգտակար

ևեթ մասունս ընթեռնուլ, զվնասակարսն ՚ի բաց թողեալ ։ Որպէս և որ զվարդ ոք քաղիցէ՝ զզուշանայ՚ի փշոցն, զնոյն զգուշութիւն պարտ է մեզ սարասել յանձինս։

Հ. Օրէ՞ն իցէ քերթողաց քրիստոնէից յաճախել զհեթանոսական առասպելս և զանուանս դից ՚ի քերթութիւնս իւրեանց.

Պ. Սովորութիւնս այս, թէպէտ և յաճախեալ առ բազումս ՚ի քերթողաց հաւատացելոց, ոչ է գովելի ։ Զի եթէ հեթանոս ոք քերթող ՚ի մրրկի տայցէ դիւցազին իւրումկարդալ առ Պոսիդոն և առ Էւողոս, յայտ առնէ զի դաւանէ զնոսա աստուածս ծովու և հողմոց. բայց քերթող հաւատացեալ զի՞նչ իմանայցէ անուամբքս այսոքիւք. ապա ուրեմն նախ պարզութեան և ճշգրտութեան իմացուածոյ հակառակ է սովորութիւնս այս, և երկրորդ՝ զի ոչ շարժէ ամենևին զսիրտ քերթողին և զընթերցողաց զքերթուածն, որոց ծիծաղելի են անուանքն այնոքիկ անէակք ։

Ասիցէ ոք թերևս իմանալ անուամբքս այսոքիւք զայլ և այլ ստորոգելիս ճշմարտին Աստուծոյ. այլ վայե՞լ իցէ արդեօք սորոյն Աստուծոյ ընծայել զպիղծ անուանսն, զորս Դաւիթ չկամէր և ոչ յիշել զանուանս նոցա ՚ի շրթունս իւր ։ Որչափ գեղեցիկ

են քերթուածք Սաննածծարայ, այնչափ գժպհի թուի 'ինմա խառնուրդ անուանցս այսոցիկ և առասպելեաց դից ընդ ամենասուրբ խորհուրդ մարդեղութեան Քրիստոսի. և կոչել իսկ նորա զՄուսայս յօգնութիւն առ 'ի բանաստեղծել զփառաց տիրամօրն՝ խիստ թուի և անհաճոյ փափուկ լսելեաց:

Այլ ոչ ընդ առասպելս ընդ այսոսիկ է խառնել զկեղծիս քերթողականս, օրինակ իմն՝ ընծայելոյ թեւս հողմոյ, բարբառ որոտման, և դէմս առաքինութեանց և յոռութեանց և զայլ այսպիսի ձեւս: Դարձեալ օրէն է 'ի կիր առնուլ բառ տեղւոյն և զառասպելեալ անուանս՝ որ դիրն իւրեանն նշանակեն, մանաւանդ զյաճախեալսն յայնցանէ. զոր օրինակ զՀիմէն կամ զԱստղիկ փոխանակ հարսանեաց, զԱրէս փոխանակ մարտի, զԱպողոն կամ զՓեբոս փոխանակ արեգական, այլովքն հանդերձ. և կամ դարձեալ ուր քերթողն առնու զդէմս դիցապաշտի, օրէն է նմա հեթանոսական առասպելօքն վարել. իսկ խառնուրդն կարի իսկ անտեղի է:

Հ. Եւ զի՞նչ օգուտ 'ի բանաստեղծութենէ. ո՞չ 'ի զուր իցէ ժամավաճառ լինել մանկտւոյ 'ի վարժս նորին.

Պ. Մարգարէութիւնքն և սաղմոսք և այլ

բազում աստուածաշունչ գիրք բաւական են 'ի ցուցանել զպատշաճ բանաստեղծութեանն օգուտս, որ զազնուական կիրս գրգէ, որ զսիրտս ողոքէ 'ի բարին, որ առանց գըրգելոյ զախտս՝ զուարճացուցանէ, որ ձգէ 'ի մտադրութիւն խրատուց՝ առանց սնոտի և ծաղրալից առասպելեաց, որ ուսուցանէ առանց տաղտկացուցանելոյ. և ախորժ՝ գեղեցիկ՝ վեհ և վսեմ ասացուածովքն, և կենդանատիպ նկարագրութեամբքն ձգէ յընթերցումն օգտակարաց և զկարի իսկ ծոյլս և զգերեալս ախտից: Դարձեալ և օգուտ մեծ է բանաստեղծութեան 'ի կըրթութիւն բարուց և 'ի բարգաւաճութիւն ազգաց, որպէս և արտաքնոյն և փորձ իսկ ազգաց բազմաց վկայեն: Ու որփէական առասպելին տաղիւք զապառաժս շարժել և նուաճել զգազանս և զ[illegible]երբեալ ոտնակոխել զընթացս, ոչ այլ ինչ ցուցանէ՝ բայց զի նա զվայրենի բարս ազգին 'ի զգօնութիւն ած քերթութեամբքն: Վասն որոյ և կարևորագոյն ուշ նպատակի ամենայն ազգի ազգի քերթութեանց զայս սահմանեցին. դիւցազնականին՝ ընծայել ծածկաբար խրատս, այլաբանեալ 'ի գործ իմն մեծ և արիական. քնարերգականին պանծացուցանել զարի արանց զքաջութիւն առ 'ի նախանձ այլոց. ողբերգա-

կանխին՝ զարհուրեցուցանել յանօրէնութեանց աղետալի չարեացն հետեւանօք, և պատկառելի առնել զառաքինութիւն իրաւացի գովութեամբ և վարձիւք. կատակերգութեան և երգիծանաց՝ կշտամբել հանդերձ զուարճութեամբ, և դնել մարտ անհամբոյր ընդ յոռութիւնս և ընդ այպանելի գործս. եղերերգութեան ողբալ 'ի վերայ դերեզմանի արանց արժանեաց ողբոց. հովուերգութեան երգել զանմեղ և զնախանձելի գեղջկիցն կենցաղ, և այլոցն ևս քերթութեանց՝ այլ ինչ սահմանեալ օգուտ: Ի վերայ այսոցիկ է սա և զբազում անմեղ և հանճարեղ՝ որոց յօրինեն և որոց ընթեռնուն զքերթութիւնս, և օգնէ իսկ յոյժ ճարտարխօսութեան, և ճշգրտէ և կոկէ զոճ մատենագրութեան:

ՑԱՆԿ

Ախորժակք մտաց 187
— Թէ երբեւ յորս ազգաց զօրացան ընտիր ախորժակք 193
Այլաբանութիւն 71
Անակրէոնեան տաղ 97
Անդամք տաղաչափութեան . . . 2
Անիծից ձև 76
Անուանաստեղծութիւն 81
Առասպելք կամ առակք 113
Առասպելեաց հեթանոսականաց պատշաճ պիտանութիւն 197
Արձանագիր 97
Բանաստեղծութեան սկիզբն . . 31
— Զանազանութիւն նորա 'ի տաղաչափութենէ 30
— Օգուտք նորա 198
Բացադարձութեան ձև 61,76
Գեղեցկին սահման 47
Դամբանագիր 97
Դիմառնութեան ձև 75
Դիւցազներգութիւն 116
Երգիծաբանութիւն 109
Երկարութիւն ը տառի 23
Թուղթ 108

Խելամտութեան ձև 57.74
Կատակերգութիւն 172
Կարգ՝ զոր պարտ է ունել 'ի ստեղծա_
բանելն 184
Կրկնութեան ձև 78
Հանգիստ տողից 10
Հովուաբանութիւն 87
Մակդիրք 52
Յանգ տողից 11
Նկարագրութեան ձև 62
Նմանութեան ձև 60.69
Նուագ 97
Շրջաբանութեան ձև 55.58
Ողբերգութիւն 140
Չափ ոտից 5
Չափազանցութեան ձև 83
Չափք ազգի ազգի տաղից պատկանա_
ւորք 181
Սղութիւն ը տառի 23
— Նայ տառից 24
— Նախադրութեանց ըտ․ ըփ . . . 27
Վարդապետական քերթութիւն . . 100
Վիպասանութիւն 136
Վսեմութիւն իմաստից և ասացուածոց 35
— Վսեմութեան թերութիւն . . 44
Տաղաչափութիւն 1
— Զանազանութիւն նորա 'ի բանա_
ստեղծութենէ 30
Փոխաբերութեան ձև 59.73
Փոխանունութեան ձև 59
Քանակ բառից 20
Քերթողական ձևոց զանազանութիւն
'ի հռետորականաց 58

— Տեսութիւն 'ի քերթողական ձևս. 85
Քերթողական լեզուին զանազանութիւն 'ի հռետորականէն . . . 49
Քերթողաց հեթանոսաց վերծանութիւն 195
Քնարերգակ քերթութիւն . . . 91
Քննաբանութիւն 189

ԷՋ	ՏՈՂ	ՎՐԻՊԱԿ	ՈՒՂԻՂ
12	7	վարեցար	վառեցար
40	19	աներեւեույթք	աներեւույթք
41	20	հոմերոց	Հոմերոս
42	18	զմարտական	զմարդկան
98	3	սաւառնեն	սաւառնին
127	8	Կլիտեմնետրա	Կլիտեմնեստրա